

ՀՀ ԳԱՍ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԱՐԵՎԵԼԱԳԵՏՆԵՐԻ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
XXV
ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՁԱՆ
Ձեռնարկ-ՅՈՒՄՆԵՐԻ ԹԵՁԵՐ

INSTITUTE OF ORIENTAL STUDIES NAS RA

XXV
CONFERENCE OF
YOUNG ORIENTALISTS
OF ARMENIA

THESES

ԵՐԵՎԱՆ – 2004 – YEREVAN

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՔ

Խմբագիր՝ պ. գ. ք. ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Գիտաժողովը նվիրվում է ԱՐՍԵՆ ՃԵՐԵՃՅԱՆԻ հիշատակին

The conference is dedicated to the memory of ARSEN JEREJIAN

Մեկենասությամբ՝
«Արմեն եւ Բերսաբե Ճերեճեան հիմնադրամի» (ԱՄՆ)

This publication was made possible by
“Armen and Bersabe Jerejian Foundation” (USA)

A II
89540



ԲԱՐԱՅԱՆ ՆԱԻՐԱ (ԱԻ)

**ՕՍՏԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՀԱՅ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ
ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԸՈՒՐՁ (1908-1912 ԹԹ.)**

Հայ պատմագրության մեջ Օսմանյան կայսրության հողային հարցի շուրջ կատարվել են մի շարք ուսումնասիրություններ, սակայն հայ պատգամավորների գործունեությունը այս ոլորտում դեռ վերլուծության կարիք ունի:

Աբդուլհամիդյան վարչակարգի դեմ Օսմանյան կայսրության բնակչության տարբեր խմբերին համախմբելու և նրանց փատահությունը շահելու նպատակով երիտարքերը սկզբունքային այլ խնդիրների հետ մեկտեղ պարտավորվել էին պետական միջոցներով վարկավորման, վարչական և այլ տարրերակներով լուծել նաև հողային հարցը:

Արևմտահայության համար կենսական նշանակություն ունեցող այս խնդրի լուծմանը, բնականաբար, անհաղորդ չէին կարող մնալ և Օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորները՝ քաղաքական տարբեր ուժերի ներկայացուցիչներն ու մտավորականները: Նրանք մինչ խորհրդարանում աշխատանքներ սկսելը, արդեն իսկ նախնական համաձայնության էին եկել մի կողմ դնել միջկուսակցական տարածայնությունները և հանդես գալ ազգային խնդիրների շուրջ միասնական ճակատով:

Հողային հարցի, հայաբնակ գավառներում իրականացվող ամենատարբեր բնույթի անարդարությունների, բարենորոգման ծրագրերի և այլ հարցերի վերաբերյալ, հայ պատգամավորները բազմիցս դիմումներ, հիշատակագրեր, օրինագծեր են ներկայացրել խորհրդարանին, կառավարությանը, վարչապետին, ներքին գործերի նախարարին:

Այսպես օրինակ, 1910թ. ապրիլ, հունիս, հուլիս ամիսներին հայ երեսփոխանները Օսմանյան խորհրդարանի նախագահությանն են ներկայացրել բարրիբներ (զեկուցագիր) և օրինագծեր, որոնցում մասնավորապես առաջ էր քաշվում կառավարության կողմից ազգապատկան հողերի նկատմամբ ունեցվող անարդարությունների և հայկական գավառների անվտանգության ապահովման վերաբերյալ իրենց նկատառումները:

1911թ. մարտ, ապրիլ ամիսներին հայ պատգամավորների կողմից խորհրդարանի քննարկմանն է ներկայացվել նաև հողագործներին անտոկոս փոխառություն տրամադրելու մասին օրինագիծ:

1912թ. հունիսին, նիստերից մեկում, Անատոլիայի հողային խնդրի քննարկման ժամանակ հայ պատգամավորների կողմից առաջարկվել է Բիթլիսում իրականացվելիք հողերի նոր կալվածագրի համար հատկացնել որոշակի գումար:

Հայ երեսփոխանների գործունեության արդյունքում վարչապետը ստեղծեց հանձնաժողով, որն ուներ հողային հարցը վարչական կարգով լուծելու



իրավունք. այն ներկայացրեց խորհրդարանի հաստատմանը, որը սակայն չհաստատվեց:

Կարող ենք արձանագրել, որ քեւ, երիտթուրքերը հողային հարցի լուծման նպատակով ընդունեցին մի շարք մոռ օրենքներ ու նախագծեր, այդուհանդերձ դրանք այդպէս էլ մնացին քղքի վրա, քանի որ երիտթուրքական վարչակարգը հակված չէր արմատական լուծուտ տալ երկրի ներսուտ առկա հողային խնդիրներին:

ԳՍԱՊԱՐՅԱՆ ԱՐԱՍ

ՕՍԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՍԻՐԻԱԿԱՆ ՎԻԱՅԵԹՆԵՐՈՒՄ ԱՐԱԲԵՐԵՆ ԼԵԶՎԻ ՎԻՃԱԿԸ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐՈՔ

1. Երիտթուրքերի կառավարման օրոք 1908-1918 թթ. Օսմանյան կայսրության արաբ ազգաբնակչության՝ ինքնավարության համար պայքարուտ կենտրոնական տեղ էր գրավուտ արաբերեն լեզուն պահպանելու և նրա կիրառման շրջանակներն ըստ հնարավորին ընդլայնելու խնդիրը: Պատահական չէ, որ կայսրությունուտ արաբերեն լեզվի ճանաչման և հատկապէս արաբաբնակ շրջաններուտ նրա կարգավիճակի հարցը մեծապէս կարևորվուտ էր արաբական առաջադիմական կազմակերպությունների ծրագրերուտ և առանց բացառության նրանց կողմից ընդունված բոլոր փաստաթղթերուտ: Այս տեսակետից առանձնակի հետաքրքրություն է ներկայացնուտ այնպիսի հեղինակավոր համաժողովի ընտուղուտ որոշուտը, ինչպիսին 1913 թ. հունիսին Փարիզուտ կայացած Արաբական կոնգրեսն էր:

Հիմնավորելով Օսմանյան կայսրության արաբական վիլայեթների սպակենտրոնացման անրաժեշտությունը և շարադրելով այդ նախագծի ինմնական սկզբունքներն ու նրա իրականացման պայմանները՝ կոնգրեսի մասնակիցները որոշման մեջ առանձին կետ էին հատկացնուտ լեզվի հարցին, մասնավորաբար, պահանջելով, որ արաբերեն լեզուն ճանաչվի Օսմանյան պառլամենտի կողմից և կայսրության արաբաբնակ տարածքներուտ համարվի պաշտոնական լեզու (հոդվ. 5):

2. Լեզվի պահպանման հարցուտ արաբների շահագրոտությունը և այդ ուղությանը նրանց ջանքերը, քերևա, ամնիջապէս քելադրվուտ էին հետևյալ ինմնական հանգամանքներով. հատկապէս արաբների պարագայուտ, երբ կրոնական գործոնը նպաստուտ էր նրանց նկատմանը երիտթուրքերի որդեգրած օսմանիզմի գաղափարախոտության իրականացմանը, լեզվի պահպանուտը դառնուտ էր նրանց միասնականությունն ու ինքնությունը պահպանելու կարևորագույն, առաջնահերթ միջոց և, միաժամանակ, ստեղծված իրադրության պայմաններուտ վերջիններիս տալիս էր որպէս ընդհանրության, որպէս ժողովրդի և որպէս ազգի իրավունքների անվիճելիությունը հաստատելու հնարավորություն:

3. Այս կեցվածքը մախևառաջ հետևանք էր մաս երիտթուրքերի որոշակի քաղաքականության, որտեղ լեզվի ծուլման խնդիրը կարևոր տեղ էր գրավում՝ համարվելով մաս ապակենտրոնացումը կասեցնելու միջոց: Անվերադարձ անցել էին այն ժամանակները, երբ երիտթուրքերը, կայսրության տարրեր ազգերի հավասարության ջատագովի կեցվածք ընդունած, բարձրագույն խոստումներ էին տալիս նրանց: Սակայն հետագայում կայսրության մասնատման հեռանկարը երիտթուրքերին ստիպեց հրաժարվել իրենց իսկական դիտավորությունները սքողելու միտումից և ձեռնամուխ լինել կայսրության ոչ թուրք ազգությունների բռնի ծուլմանն ուղղված անթաքույց քաղաքականության, ինչն անշուշտ կարելի է համարել կայսրության մախևին իշխանությունների կողմից վարվող թուրքացման քաղաքականության շարունակությունը: Երիտթուրքերի այս կողմնորոշումը վերջնականացնե ձևակերպվեց 1911 թ. հոկտեմբերին կայացած համագումարում, որի ընդունած որոշման մեջ ուղղակիորեն հայտարարվում էր, որ ուշ թե շուտ իրականացվելու է բոլոր թուրքական հայատակների լիակատար թուրքացումը, որ կայսրության ոչ թուրք ազգություններին պետք է զրկել կազմակերպվելու իրավունքից, քանի որ ապակենտրոնացումն ու ինքնավարությունը թուրքական կայսրության նկատմամբ դավաճանություն են: Որոշման մեջ հատկապես նշվում էր, որ ազգային փոքրամասնությունները կարող են պահպանել իրենց կրոնը, սակայն ոչ լեզուն, հանգամանք, որը մեկ անգամ ևս վկայում է երիտթուրքերի կողմից այդ գործոնին տրվող կարևորության մասին: Լեզվական ճնշումը, այսպիսով, վերջիններիս կողմից դիտվում էր որպես թուրքերենի գերակայության անբաժնշտ մախևայայման, ինչը և, նրանց խորին համոզմամբ, կհանդիսանար կայսրության ոչ թուրք ազգաբնակչության ծուլման առավել արդյունավետ միջոց: Երիտթուրքերի այդ քաղաքականությունն իր վառ արտահայտությունը գտավ հատկապես կրթության, լուսավորության և կադրային քննազավառներում:

4. Այսուհանդերձ ոչ թուրք ազգաբնակչության և առավելապես արաբների նկատմամբ իրենց քաղաքականությունը իրականացնելիս երիտթուրքերի առաջնորդներն հարկադրված էին որոշ զիջումների գնալ, որոնք հետապնդում էին գոտ պաշտպանական նպատակներ: Պատճառներից մեկն, անշուշտ, այն էր, որ արաբները կազմում էին կայսրության ազգաբնակչության գերակշիռ մասը, և նրանց հետ կտրուկ առճակատումը կարող էր խիստ վտանգավոր հետևանքներ ունենալ: Ոչ պակաս կարևոր հանգամանք էր մաս արաբների՝ իրենց պայքարում եվրոպական տերությունների աջակցությանն ապավինելու շրայքը՝ միտումը, որը լուրջ տագնապի առիթ էր տալիս երիտթուրքերի դեկավարներին, քանի որ արաբների այդպիսի դիրքորոշումը միանգամայն համահունչ էր եվրոպական տերությունների ձգտումներին և կոնֆլիկտի խորացման դեպքում պատեհ հնարավորություն կընձեռեք կայսրությունում նրանց դիրքերի ամրապնդման համար:

**ԵԳԻՊՏՈՍԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՀԱՐՑԻ ՀԱՆԴԵՊ
1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

Եգիպտոսի արաբական քաղաքականության առանցքային հարցերի շարքում պաղեստինյան խնդիրը կարևորագույններից մեկն է: 1970-ականների վերջին եգիպտա-իսրայելյան հաշտության պայմանագրի ստորագրման հետևանքով Եգիպտոսը արաբական աշխարհում հայտնվել էր քաղաքական մեկուսացման մեջ:

1981թ. Եգիպտոսի նախագահի պաշտոնն զբաղեցրած Մուհամմեդ Մուբարաքը, վերանայելով Կահիրեի արաբական քաղաքականությունը, սկսեց Եգիպտոսի՝ արաբական ընտանիք դանդաղորեն վերադարձի գործընթացը:

Եգիպտոսի՝ «արաբական ընտանիք» վերադառնալու գործին մեծապես նպաստեց նաև 80-ականներին Կահիրեի դիրքորոշումը պաղեստինյան հարցի հանդեպ: Ի տարբերություն նախորդ նախագահի, Մուբարաքը որդեգրեց ավելի ճկուն դիրքորոշում և, քեմփդեյիտյան համաձայանագրի շրջակներում շարունակելով պաղեստինյան ինքնավարության մասին եգիպտա-իսրայելյան բանակցությունները, հայտարարում էր, որ ձգտում է պաղեստինյան ժողովրդի համար լիարժեք անկախության ձեռքբերմանը: Այդ առումով Եգիպտոսը 80-ականներին արաբական միակ երկիրն էր, որը հարաբերություններ ունենալով Իսրայելի և արաբական որոշ երկրների հետ, փաստորեն, կարողանում էր կարևոր միջնորդի դեր կատարել արաբ-իսրայելյան հակամարտության կարգավորման գործում:

1980-ականներին սատարելով պաղեստինյան հարցի լուծմանն ուղղված բացարձակապես բոլոր նախաձեռնությունները, մասնավորապես, Ֆահիլի և Ֆեսի համաարաբական ժրագրերը, հորդանանա-պաղեստինյան համաձայնագիրը, Ռեյգանի արաբ-իսրայելյան հակամարտության կարգավորման նախաձեռնությունը, Մուբարաքը որդեգրելով կոնստրուկտիվ դիրքորոշում փորձում էր ներդաշնակել կարգավորման այդ ժրագրերը՝ ամփոփելով նրանցում եղած առավել դրական կողմերը:

Եգիպտոսի պաղեստինյան խնդրի հանդեպ դիրքորոշման հարցում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Կահիրեի արձագանքը 1982թ. Լիբանանում Իսրայելյան զորքերի հանդեպ, որը հիմնականում ուղղված էր Լիբանանում հաստատված Պաղեստինի ազատագրության կազմակերպության (ՊԱԿ) ռազմական և քաղաքական կառույցների ոչնչացմանը: Ետ կանչելով եգիպտական դեսպանին Թել-Ավիվից, Կահիրեն միջազգային ատյաններում հակաիսրայելյան գործնետություն ծավալեց:

1989թ. Մուբարաքը հանդես եկավ պաղեստինյան հարցի կարգավորման իր նախաձեռնությամբ, որի հիմքում դրված էր «Հող խաղաղության դիմաց» սկզբունքը: Հարկ է նշել, որ Եգիպտոսի դիրքորոշումը նպաստեց 1988թ. ամե-

րիկյան վարչակազմի կողմից Պաղեստինի ազատագրության կազմակերպության որպես հսկամարտող կողմ ճանաչմանը, և վերջինիս հետ երկխոսություն սկսելու պատրաստակամության դրսևորմանը:

Փաստորեն, 1980-ական թթ. պաղեստինյան հարցի հանդեպ Եգիպտոսի դիրքորոշումը հանդիսացավ այն կարևորագույն գործոններից մեկը, որի արդյունքում 1989թ. Եգիպտոսը վերադարձավ արաբական ընտանիք և նորովի ներկայացավ միջազգային համայնությանը:

ԳՐԵԿՅԱՆ ԵՐՎԱՆԴ (ԱԻ, պ.գ.թ.)

ԽԱՆԴԻ՝ ԱՐՔԱ ԵՎ ԱՍՏՎԱՏ

Պատմագիտության մեջ առկա են բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք վերաբերում են ուրարտական դիցարանի գլխավոր աստծուն՝ Խալդիին: Դրանցում փորձ է արվել վեր հանել նրա էությունը, նրա տեղն ու դերը դիցարանում և դիցարանից դուրս: Այս առումով կարելի է առանձնացնել բազմաթիվ հետազոտողների (И. Мещанинов (1927), Л. Биатов (1978), А. Таşyürek (1978), И. Дьяконов (1983), М. Salvini (1989), Ս. Հմայակյան (1990), Ch. Burney (1993), Ա. Պետրոսյան (2002) և այլք)՝ արժեվորելով նրանց աշխատանքը: Չեղբ բերված տվյալներով հանդերձ, այնուամենայնիվ, թեման չի կարելի համարել սպառված. այն կարիք ունի հետագա ուսումնասիրությունների:

Այս ուղղությամբ մեր կողմից ևս արվել են դիտարկումներ, որոնք հանգեցրել են մեկ հիմնական հետևության. Խալդին, ըստ իշխող պատկերացումների, ոչ միայն աստված էր, առաջինը՝ աստվածների մեջ, այլև արքա, արքա՝ երկրում, դիտվելով ուրարտական տերության աշխարհիկ առաջնորդ: Այս առումով առկա են որոշ հիմքեր, այդ թվում.

ա) Ուրարտական արձանագրություններում Խալդի աստվածը հանդես է գալիս որպես տերության միակ տիրակալ՝ (graf.) սֆհաnume սեժեաօե muֆի ալուկա սեժիալսի PAP KUR.KUR^{MES} - պարզեց-ինձ իշխանություն՝ ճշմարիտ մա (Խալդի աստվածը) -որը իշխում է՝ որչ տերությանը (քաղաքացիությունը մերն է): Նրա կամքով և ձեռքից արքաները կարող էին ստանձնել իշխանությունը սոսկ իբրև տեղապահներ, այսինքն՝ կոչվելով ի ծառայություն: Ատրեստանյան տեքստերից «Լուրի աղյուսակում», կարող է թվալ, պահպանվել են ուրարտական արքաների թագադրության արարողության որոշ դրվագներ: Ատրեստանցիների աչքերում գուցե և դա թագադրություն էր, թագադրություն արքայի, մինչդեռ ուրարտացիների մոտ այն եղել է պարտականությունների սոսկ ստանձնում, ծառայության բարձրագույն աստիճան, ծառայություն՝ արքայի մոտ, նրա մշտական, իրականում աներևույթ, բայց պատկերացվող, «զգայական» ներկայությամբ: Թերևս պատահական չէ, որ ուրարտական տեքստերի գերակշիռ մեծամասնությունում այս փաստը նշվում է ընդամենը «*հայրական*

տեղը բարձրանալու (գբադեցնելու)» մասին արտահայտությամբ՝ չհիշելով արքայական իշխանության որևէ խորհրդանիշ:

բ) «Խրավական» պատկերացումները վերարտադրող ուրարտական որոշ արձանագրություններում *արքաները*, ճիշտ է, համարվում են «ժողովրդի հովիվ», «առաջնորդ», բայց ոչ ավելին, քան Խալդի աստծո սպասավորներ կամ, ավելի ճիշտ, հետևորդներ, աստծո մարտիկներ (^dHaldiei ^{LO}ERUM/IR).

գ) Խալդի աստծո պաշտամունքի գլխավոր կենտրոն Մուծաձիբի նվաճումը նկարագրող ասորեստանյան աղբյուրում առկա է այս աստծո (աստծո արձանի) կրկնակի գերեվարության փաստ: Այն կարող է վկայել Խալդիի գերեվարության մասին մախ՝ որպես *արքա* (Լուվրի աղյուսակ, տողեր 347b-348a)՝ ցուցադրվելով քաղաքի դարպասների մոտ (այսինքն՝ հաղթահանդես՝ ուղեկցվող գերի արքաների ցուցադրությամբ, երևույթ, որ հայտնի է ժամանակաշրջանի ասորեստանյան աղբյուրներից), իսկ այնուհետև՝ որպես աստված. ըստ աղբյուրի, նրա արձանը ետ է տարվել տաճար և կրկին գերեվարվել այս անգամ արդեն իր կնոջ՝ Վարքարանի (Բագարբու/Բագվանշբու) աստվածուհու հետ միասին (Լուվրի աղյուսակ, տող 368):

դ) Ուրարտական բոլոր հանդիսավոր արձանագրություններում, մախ և առաջ *արքաների* տարեգրություններում առաջնությունը վերստին պատկանում էր Խալդիին. մա էր դուրս գալիս արշավանքի, մա էր հպատակեցնում երկրները կամ դա արվում էր նրա հրամանով, նրա կամքը աներկբա էր, հաղթական էր նրա գեներլ և ակնհայտ՝ գործող *արքան* մղված էր ետին պլան:

ե) Ուշադրության է արժանի այն փաստը, որ ըստ աղբյուրների *արքան* էր հաստատում ծիսական կարգադրագրեր, ուր նշված էր աստվածություններին մատուցվելիք պաշտոնի կարգը՝ գոհարեովող կենդանիների կոնկրետ քվաքանակներով, մի գործառույթ, որը, թվում է, պետք է իրականացնել գլխավոր քումը:

զ) Ուշադրության է արժանի ուրարտական պատկերագրության հագարավոր նմուշներում *արքայի* անձի արտացոլման իսպառ բացակայությունը (երևույթ, որ եզակի է իր ժամանակաշրջանի համար), որս փոխարեն, սակայն, ներկայացված է Խալդին: Նա ամենուր էր՝ առաջնորդելով և աստվածներին, և մարդկանց, և չկար *արքա*:

Ըստ այդմ. ա) Ուրարտական տերության և երկրային (աշխարհիկ) և երկնային (հոգևոր) առաջնորդ ընկալվել է Խալդին՝ որպես մարդ և աստված, արքա՝ Երկրում և տեր՝ Երկնքում:

բ) Ուրարտական տերության մեջ, զոնե սկզբնապես, չի եղել *արքա* որպես այդպիսին. ուրարտական *արքաները* տեղապահներ էին, գերագույն քմեր, աստված-արքայի կամքն իրագործողներ:

գ) Առաջարկվում է որոշակի վերապահումով մոտենալ ուրարտական տեքստերում Խալդի աստծուն տրվող EN տիտղոսի սուկ իբրև «տեր» բարգմանությանը. հայտնի են օրինակներ, երբ հիմնաբևեյան սեպագիր դպրության տարբեր տեքստերում այդ նույն գաղափարագիրը, բացի «գերագույն քում»

ինաստից, կիրառվել է «արքա» նշանակությամբ, EN գաղափարագրի ուրարտերեն հնչյունագրի՝ *evri* բառի խորրիներեն զուգահեռն է *evr*Ձ-ն, որի առաջին նշանակությունը «արքա»-ն է, և միայն երկրորդայինը՝ «տեր»-ը:

դ) Առաջարկվում է որոշակի վերապահումով մտնելու ուրարտական տեքստերում *Isa*ղի աստծո դարպասները (**Haldiei* ^(GIS)*K*^(MES)*A*) գոտ պաշտամունքային շինություններ դիտելուն, ի տարբերություն մույն աստծո *susi-*տաճար(ներ)ի: Խալդյան դոմները, ինչպես երևում է, ունեցել են մակ, եթե ոչ առավելապես, աշխարհիկ գործառույթներ՝ խոչորդանշելով արքայի մտավայր և դրանով իսկ՝ տվյալ երկրում կամ շրջանում բուն-ուրարտական քաղաքական իշխանության գոյությունը: Թեթևս պատահական չէ, որ ուրարտական պետության ծավալման տարիներին են վերաբերում բոլոր այն տեքստերը, որոնցում հիշվում են կոնկրետ տեղանուններ – նորանվան քաղաքներ, որոնցում կառուցվել են «Խալդի աստծո դարպասներ», այսինքն՝ ընդգրկվել են պետության կազմում: Հետագայում կառուցված «դարպասները» վերաբերում են նոր հիմնադրված քաղաքների կամ նորաբնակ տարածքների:

ե) Ըստ ավելի փաստությամբ կարող ենք խոսել արքունիքում, ինչպես և երկրի քաղաքական/տեղոր կենտրոններում գործող պատգամախոսարանների կամ պատգամախոսի ինստիտուտի գոյության մասին, այս անգամ՝ ոչ միայն հիմարևելյան և անտիկ աշխարհների մեզ հայտնի զուգահեռներից ելնելով: Ուրարտական իշխանության աստվածապետական կառուցվածքը պահանջելու էր նման ինստիտուտի գոյություն, և, չի բացառվում, անձամբ *արքայի* մասնակցությունը որպես գերագույն քույր (տե՛ս վերը):

զ) Այս համատեքստում չի բացառվում ուրարտական արխիվի մի քանի տեքստերում և կնքադրոշմներում հիշվող ^{LU}*A.NIN*-ի գաղափարագրերի կոմբինացիան դիտարկել որպես մասնագիտություն՝ քույր/քրոնի-պատգամախոս: Գաղափարագիրը, որի նշանակությունն է «որդին աստվածուհու», պետք է ընկալել որպես «անձ, որը մոտ է կանգնած աստվածուհուն» իմաստով, այսինքն՝ նրա սպասավոր, քույր: *NIN* գաղափարագիրը ուրարտական տեքստերում նշանակել է մախևառաջ աստվածուհի, իսկ աստվածների կամքը կարող էր հայտնել, ինչպես ենթադրվում է, Վարուբանին՝ գերագույնը աստվածուհիների մեջ: Ի դեպ, միջագետքյան դպրության մեջ այս գաղափարագիրն ունեցել է մեկ (*բարձրաստիճան*) *քրոնի* նշանակությունը – *NIN, NIN.DINGIR = ԵՈ(e)Խ(m)*:

Այսպիսով՝ այս, ինչպես մակ այլ փաստեր քույր են տալիս անել մի հետևություն. ուրարտական տեքստերում իշխանական համակարգը էապես տարբերվել է ժամանակաշրջանի իր զուգահեռներից: Նրանում տեսանելի են բազում առնձնահատկություններ, որոնք հիշեցնում են արխաիզ կամ կարելի է բնութագրել որպես «պահպանողական»: Այս համակարգում առանձնանում է ուրարտական դիցարանի գերագույն աստվածը: Ըստ ընկալումների, տեքստերում միակ առաջնորդը, մակ աշխարհիկ դաշտում, համարվել է Խալդին՝ արքան, և աստվածը:

**ՀՐԵԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԽՆԴՐՈՒՄ ՀՐԵԱՆԵՐԻ
ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ**

1. Հրեաների արձագանքը քաղաքական սիոնիզմի նկատմամբ որոշակի հետաքրքրություն է ներկայացնում: Մի շարք հրեական ազգային ու կրոնական շարժումների պատմության քատերաքեմ իջնելուց հետո ձևավորված քաղաքական սիոնիստական շարժման՝ Պաղեստինում հրեական պետություն ստեղծելու գաղափարը, խանդավառությամբ ընդունվելով հրեաների մեծ մասի կողմից, արժանացավ որոշ շրջանակների քննադատությանը: Այդ գաղափարի դեմ հանդես եկան 1871թ. հիմնադրված «Անգլո-հրեական ընկերության» համաձայնագրահենր կողմ Մոնտեֆիոտեմ և Դավիթ Ալեքսանդրը, Պաղեստինում Մեծ Բրիտանիայի առաջին Գեորգույն կոմիսար, ակտիվ սիոնիստ Հերբերտ Սամուելի գարմիկ, բրիտանական կառավարությունում մի քանի անգամ նախարարի պաշտոն զբաղեցրած Էդվին Մոնթագյուն, հայտնի Ռոտշիլդների ընտանիքից Լեոպոլդը ու նրա կինը, 1912թ. հիմնադրված «Ազոդատ Իսրայել» (Իսրայելի հասարակություն) հոգևոր սիոնիստական կուսակցությունը և այլ հրեական կազմակերպություններ:

2. Այսպիսով, Պաղեստինում հրեական պետություն ստեղծելու հարցում աշխարհասփյուռ հրեաները տարբեր դիրքորոշում ունեին: Այդ առումով նրանց կարելի է դասել երեք խմբի.

ա) Սիոնիստ հրեաներ, որոնց նպատակն էր աշխարհի տարբեր մասերից ամեն գնով ներգաղթել Պաղեստին և բնակություն հաստատել խորհրդանշական Սիոն լեռան լանջերին: Նրանք հրեաների՝ «Ավետյաց երկիր» վերադառնալու գաղափարակիրներն էին և ակտիվ գործունեություն էին ծավալում Պաղեստինում հրեական պետություն ստեղծելու ուղղությամբ:

բ) Ոչ սիոնիստ հրեաներ, որոնք իրագրել էին սիոնիստական գաղափարախոսությանը և նույնիսկ չէին հետաքրքրվում դրանով: Նրանց անտարբեր էին նաև այն գործունեության նկատմամբ, որը ծավալում էր հրեական պետություն ստեղծելու նպատակով 1897թ. Բազելի սիոնիստական համագումարում հիմնադրված «Համաշխարհային սիոնիստական կազմակերպությունը» հրեաներին համախմբելու ուղղությամբ:

գ) Հակասիոնիստ հրեաներ, որոնք, ի տարբերություն ոչ սիոնիստների, իրագրել էին սիոնիստական գաղափարախոսությանը և ակտիվ պայքար էին ծավալում դրա դեմ: Նրանք ընդդիմանում էին Պաղեստինում հրեական պետություն ստեղծելու գաղափարին՝ մտավախություն ունենալով, որ դա կարող էր քաջասական ազդեցություն ունենալ տարբեր երկրների հրեական համայնքների կարգավիճակի վրա: Հակասիոնիստները որոշ երկրներում հրեաների հալածանքների պատճառները համարում էին սիոնիստների ձեռնարկած քայլերը, որոնք, ըստ նրանց, բոբբոջում էին հակասենականությունը:

3. Միոնիստ հրեաներն, իրենց հերքին, Պաղեստինում հրեական պետություն ստեղծելու հարցում տարբեր մտտեցումներ ունեին: Այդ առումով սիոնիստական շարժման մեջ չորս հիմնական ուղղություն կար.

ա) Ընդհանուր սիոնիստներ, որոնց նպատակը դիվանագիտական ճանապարհով, քայլ առ քայլ Պաղեստինում ազատական արժեքների վրա հիմնված հրեական պետության ստեղծումն էր: 1931թ. Շվեյցարիայի Բազել քաղաքում քրանք հիմնադրեցին «Ընդհանուր սիոնիստների համաշխարհային միությունը»՝ մշակելով սոցիալիստ սիոնիստների դեմ պայքարի ծրագիր:

բ) Ռևիզիոնիստ սիոնիստներ, որոնց նպատակն, առանց միջոցների մեջ խտրականություն դնելու, հնարավորին կարճ ժամկետում Պաղեստինում հրեական պետության ստեղծումն էր: Նրանք չէին ընդունում իրենց նպատակին հասնելու դիվանագիտական ճանապարհը՝ նախապատվությունը տալով զինված պայքարին: 1935թ. Ռևիզիոնիստները Վլադիմիր Ժաբոտինսկու զխավորությանը հիմնադրեցին «Նոր սիոնիստական կազմակերպությունը»:

գ) Սոցիալիստ սիոնիստներ, որոնց նպատակը դիվանագիտական ճանապարհով Պաղեստինում սոցիալիստական հրեական պետության ստեղծումն էր: Նրանք շարունակական հակասություններ ունեին քե՛ ընդհանուր, քե՛ Ռևիզիոնիստ սիոնիստների հետ:

դ) Կրոնական սիոնիստներ, որոնք, ի տարբերություն վերը նշված երեք ուղղությունների, աշխարհիկ հրեական պետության կողմնակից չէին, այլ ցանկանում էին Պաղեստինում ստեղծել հրեական քեռկրատիա:

4. Այդուհանդերձ, սիոնիստական շարժման վերոհիշյալ բոլոր ուղղությունները ներկայացված էին «Համաշխարհային սիոնիստական կազմակերպության» տարբեր օղակներում՝ հնարավորություն ունենալով արտահայտել իրենց տեսակետը և պայքարել ընդհանուր նպատակի՝ Պաղեստինում հրեական պետության ստեղծման համար:

ԹԻՆՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻՒԿԻԱՆ 1375-1600 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ
(ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՉ)

Կիլիկյան Հայաստանի գոյությունը, որպես պետական սուբյեկտ, անշուշտ եզակի տեղ է զբաղեցնում հայ ժողովրդի բազմադարյա պատմության մեջ: Պետականության շրջանը (1080-1375թթ.) հայ պատմագրության մեջ բավականին լուսաբանված է: Հակառակ դրան, բավական նվազ չափով են ուսումնասիրված պետականությանը նախորդած և հաջորդած դարաշրջանները: Եթե առաջինի դեպքում պատճառը պարզ է (հայկական բնակչության սակավությունը), ապա երկրորդ դեպքում բաց բողոքված շրջանը իրոք սպիտակ էջ է հայոց պատմագրության մեջ:

Սովորաբար հայկական պատմագրության մեջ Հայկական Կիլիկիայի պատմության մի զգալի հատվածը, այն է՝ ողջ ուշ միջնադարը (XV-XVIII դդ.), բացակայում է: Մակայն դրա պատճառները, ըստ իս, առավելապես սուրյեկտիվ բնույթ են կրում: Առաջին պատճառը, թերևս, աղբյուրների սակավաթիվ լինելն է: XV-XVIII դդ. մշակութային կյանքը, այդ թվում՝ պատմագրությունը և՛ Հայաստանում, և՛ Փոքր Ասիայի հայկական գաղթօջախներում, և՛ Կիլիկիայում անկում էր ապրում, սակայն դա առավել ակնառու զգացվում է հենց Կիլիկիայում, քանզի եթե բուն Հայաստանում այնուամենայնիվ զրվում էին պատմական ժամանակագրություններ, պատմական գործեր (Թովմա Մեծփեցի, Առաքել Դավրիժեցի), ապա այդ ամենը Կիլիկիայում տվյալ շրջանում չէր ստեղծվում: Երկրորդ պատճառը, թերևս, կաթոլիկոսական աթոռի՝ պետականության գործառույթները կատարող վերջին մարմնի տեղափոխումն էր Էջմիածին՝ իրենց բխող բոլոր հետևանքներով: Սաի աթոռը այլևս երբեք չկարողացավ ընդհանրական գործառույթներ կատարել հայ ժողովրդի հոգևոր կյանքում: Աղբյուրների սակավության շատ այլ պատճառներ կարելի է թվել՝ մասսայական գաղթը XVդ., 1915թ. Սաի ձեռագրատան այրվելը և այլն: Ընդհանուր առմամբ սրանք են այն օբյեկտիվ պատճառները, որոնք հիմք են համդիսացել նշված շրջանի նվազ լուսաբանմանը հայկական պատմագրության մեջ:

Սակայն վերոհիշյալ պատմական շրջանի ուսումնասիրության վերաբերյալ կան մի շարք դրվագներ: XV-XVIII դդ. որոշ իրադարձությունների նկարագրությունն է մեզ տալիս Ալիշանը (չնշելով սակայն իր աղբյուրները), աղբյուրների վրա հիմնված բավական հիշարժան աշխատություններ են սփյուռքահայ հեղինակ Քելեշյանի «Միս-Մատեան» ուսումնասիրությունը և Օրմանյանի «Ազգապատմություն»: Տեղագրական առումով բավականին հետաքրքիր ուսումնասիրություններ են հրատարակվել Սփյուռքում՝ նվիրված մերձկիլիկյան մի շարք քաղաքների (Չեյթուն, Հանն, Մարաշ): Բավական ուշագրավ աշխատություն է նաև Կյուլեսերյանի «Պատմություն Կիլիկիո կաթողիկոսաց» երկը:

Այդուամենայնիվ, հաշվի առնելով նշված ժամանակաշրջանում Կիլիկիայի՝ որպես աշխարհագրական միավորի տարածքում գոյություն ունեցած հայկական ստվար ազգաբնակչության նշանակությունը Հայոց պատմության մեջ, անհրաժեշտ է եղած աղբյուրների հիման վրա հրապարակ բերել հնարավորինս ամբողջական գիտական աշխատություն, որն, ըսը էության, առաջինը լինելով, իր բնական թերություններով հանդերձ, կնպաստի նյութի հետագա ուսումնասիրությանը:

**ԻՐԱՆԸ ՈՐՊԵՏ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԱԶԴԵՑԻԿ ԳՈՐԾՈՒ
(1960-1970-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)**

1960-70-ական թթ. շահական Իրանը, դառնալով տարածաշրջանում հզոր տերություն, իր ռազմական, տնտեսական, բնական հարստությունների և մարդկային խոշոր ռեսուրսների առկայությամբ փորձում էր Մերձավոր և Միջին Արևելքի երկրների վրա տարածել իր ազդեցությունը, ինչպես նաև ստանձնել Պարսից ծոցում թելադրող պետության դերը: Դրան նպաստում էին մի շարք պայմաններ:

1. 1960-70-ական թվականներին Իրան-ամերիկյան հարաբերությունները քակոխել էին որակական նոր փուլ: Վաշինգտոնը այդ տարածաշրջանում վարում էր «երկու հեմարանների» քաղաքականություն՝ հենվելով Իրանի և Մաուդյան Արաբիայի վրա, մեծ հույսեր կապելով հատկապես շահական վարչակարգի հետ:

2. 1968թ. Անգլիան հայտարարեց Հարավ-արևելյան Ասիայից և Պարսից ծոցից իր ռազմական բազաների տարահանման մասին: Բնականաբար առաջացած այդ վակուումը փորձում էր լրացնել նաև Իրանը:

3. 1973թ. Իրանի նավթի վերջնական ազգայնացման շնորհիվ կուտակված ֆինանսական միջոցների հաշվին տարածաշրջանում առավել կայուն էին Իրանի տնտեսական և ռազմական դիրքերը:

1960-ական թվականներին իրանական դիվանագիտությանը բնորոշ էր Պարսից ծոցի նկատմամբ «ակտիվ կուրսը»: 70-ականների սկզբին Իրանի շահը հանդես եկավ Արաբական աշխարհին ուղղված մի շարք առաջարկություններով: Դրանք էին՝ ստեղծել Պարսից ծոցի երկրների ռազմա-քաղաքական բյուլ, հրավիրել կոնֆերանս տարածաշրջանի անվտանգությունը պահպանելու համար ուղիներ որոնելու և «Ասիական ընդհանուր շուկա» ստեղծելու նպատակով: Սակայն այս նախաձեռնությունները հիմնականում կյանքի չկոչվեցին, քանի որ Արաբական աշխարհը, բնականաբար, չէր ցանկանում տարածաշրջանում Իրանին տեսնել առաջատարի դերում:

Ուշադրության է արժանի Իրանի դիրքորոշումը Պարսից ծոցում առաջացած բազմաթիվ խնդիրների հանդեպ, հատկապես Իրանի և Արաբական աշխարհի որոշ երկրների միջև առաջացած տարածայնությունների, և դրանց լուծման եղանակների կապակցությամբ:

Այսպիսով, Միացյալ Նահանգների գործուն աջակցությամբ, ինչպես նաև 1973թ. Իրանի նավթի ազգայնացման շնորհիվ առաջացած ֆինանսական կուտակումների միջոցով՝ Իրանը արագ տեմպերով համարյա բանակը ժամանակակից զենքերով և զինամթերքով, որն էլ հնարավորություն տվեց նրան դառնալ տարածաշրջանում ռազմական ազդեցիկ ուժ և քաղաքական կարևոր գոր-

ծոն: Վերը նշվածի շնորհիվ էր, որ մի շարք ամերիկյան քաղաքագետներ Իրանը դիտում էին որպես ՆԱՏՕ-ի հարավային թևի բնական շարունակություն:

ԽԱՆՉԱԳՅԱՆ ՍԱՐԻԱՍ (ԱԻ)

ԽԵԹԱ-ԻՍՈՒՎԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ
☛ (Ք.Ա. XIII ԴԱՐ)

Ռազմավարական և առևտրա-աշխարհագրական կարևոր տարածք լինելով՝ Իսուվալ (Շոփքը) Ք.ա. XV դարից նեք կարևոր գործոն է հանդիսացել խեթական կայսրության արտաքին քաղաքականության մեջ, և ըստ այդմ էլ խեթական աղբյուրները պահպանել են զգալի քանակությամբ բազմաբնույթ տեղեկություններ այս երկրի վերաբերյալ: Քննարկվող արձանագրությունը վերաբերում է Ք.ա. XIII դարին՝ Թուղխալիյաս IV-ի գահակալության տարիներին (Ք.ա. 1240-1220 թթ.), ամենայն հավանականությամբ նրա գահակալության առաջին տարիներին: Այս աղբյուրը տեղեկություններ է պահպանել Թուղխալիյասի դեմ նրա եղբայր Խեշնիի կազմակերպած դավադրության մասին: Իսուվայի հետ արձանագրությունն առնչվում է կապված դավադրությանը Իսուվայի արքայի մասնակցության հետ:

Հետևյալ փաստերն ավելի են ընդգծում տվյալ աղբյուրի նշանակությունը.

1. Թուղխալիյասի գահ բարձրանալը ենթադրաբար պետք է որ ուղեկցվեր իր ավագ եղբոր՝ գահը ժառանգելու իրավունքից զրկված Ներիկալիի դժգոհությամբ, և գահակալումն էլ պետք է որ ընթանար Թուղխալիյասի հորեղբոր-որդի Կուրունտայի դեռևս փաստացի արտահայտություն չստացած խուլ հակամարտության պայմաններում,

2. Իսուվայի արքաները տվյալ ժամանակաշրջանում բավականին զգալի դեր էին խաղում խեթական արքունիքում՝ իրականացնելով որոշակի ֆունկցիաներ՝ ռազմական և պաշտամունքային,

3. Կարելի է ենթադրել, որ արձանագրությունում հիշատակված Իսուվայի արքայի, հավանաբար՝ Արիշարումայի, կինն էր Քիլուշնեփան, Խաթթուսիլիս III-ի դուստրը և Թուղխալիյաս IV-ի քույրը,

4. Այս դավադրությունը ժամանակին կասեցվել է, և ըստ ավելի ուշ աղբյուրների՝ պատճառ հանդիսացել Իսուվայի գահը մեկ այլ, հավանաբար՝ նույն արքայատոհմի ներկայացուցչին՝ Էլիլիշարումային անցնելու համար:

Արձանագրությունն առաջին անգամ հրատարակվել է գիտական շրջանառության մեջ է դրվել Ռ.Ստեֆանինիի կողմից 1962 թվականին: Այս աղբյուրին ամրադարձել են նաև Թ. վան դեն Հոուտը և Ն.Տանին, սակայն վերոհիշյալ հեղինակներն ուսումնասիրել են այն խեթական պետության պատմության տեսանկյունից: Հաշվի առնելով այն փաստը, որ Իսուվան Հայկական լեռնաշխարհում առաջացած վաղ պետական կազմավորումներից մեկն է, անհրա-

ժեշտ ենք համարում առավել համապարփակ անդրադառնալ այս արձանագրությանը: Մեր նպատակն է այս աղբյուրի նորովի թարգմանությունը՝ գիտական վերջին հրապարակումների լույսի ներքո և արձանագրության պատմական ետնախորքի ուսումնասիրությունը՝ կապված Իսովայի ռազմա-քաղաքական պատմության հետ:

ԽՍՀՄ-ՏԻՐՉՈՐԴԻ ՖՐԻԿ (ԵՊՀ)

ԱՄՆ-Ը ԵՎ ԻՐԱԶ-ԻՐԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ 1980-1988 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1970-1980-ական թթ. Մերձավոր Արևելքի երկրների համար շրջադարձային տարիներ եղան: Տարածաշրջանի որոշ երկրներում տեղի ունեցան այնպիսի խոշոր քաղաքական իրադարձություններ, որոնք Սառը պատերազմի պայմաններում հիրավի փոխեցին ուժերի հարաբերակցությունը ռեզիմում. այստեղ ավելի թեժացավ ԱՄՆ-ԽՍՀՄ մրցակցությունը ազդեցության նորանոր լծակներ ձեռք բերելու համար: Մերձավոր Արևելքում 1980թ. պայթեց 8 տարի տևած և բազմաթիվ մարդկային կյանքեր խլած Իրաք-Իրանյան պատերազմը, որը զգալի փոփոխություններ առաջ բերեց ողջ տարածաշրջանում:

Ներկայացվող գեկուցման թեման բավականին ընդգրկում է արժարժված խնդիրները բավականին արդիական են, քանզի որոշակի առնչություններ ունեն այսօրվա միջազգային հարաբերությունների հետ:

ԽՈՍՐՈՆԵՎԱ ԱՆԱՀԻՏ (ՊԻ. պ. գ. ք.)

**ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՓՐԿՎԱՏ ԱՍՈՐԻՆԵՐԻ ՎԻՃԱԿ
ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՍՄԱՐՏԻՑ ՀԵՏՈ**

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքական կառավարության ներշնչումով ու ղեկավարությամբ անագորայն դաժանությամբ կոտորածների ենթարկվեցին մաև ասորիները: Պատերազմի ավարտն ու Օսմանյան կայսրության անկումն ասորիների մեջ ինքնավարություն ստանալու հույսեր աբրեացրեց: Մուղրոսի դաշնագրից հետո օսմանյան թուրքիան սկսեց իր գործերը հեռացնել իրանական Ադրբեջանից: Ասորիները հույսը կապելով Անգլիայի հետ՝ պատրաստվում էին վերադառնալ իրենց նախկին տարածքները: Սակայն անգլիական հյուպատոս Սմիթը, Համադանում հանդես գալով ասորական ղեկավարների ժողովում, հայտնեց, որ իրանական կառավարիչները չեն ցանկանում, որ ասորիները վերադառնան իրենց լքած տարածքները: Այսպիսով, խաբված, լքված, մերժված այդ ժողովուրդը, որը մաշվել ու արյունաքամ էր եղել բուրք-քրդական հարվածներից, իր վերջին հույսը կա-

պել էր Փարիզի խաղաղության վեհաժողովի հետ: Մինչդեռ ասորական պրոբլեմ, որպես այսպիսին, մեծ պետությունների համար գոյություն չուներ:

1920թ. Սևրի վեհաժողովում քննության մյուս դարձավ մեկ ասորական հարցը: Սակայն իրենց իղձերի փոխարեն Սևրի դաշնագիրը ասորիներին տվեց միայն «պաշտպանության երաշխիք», այն էլ հետագայում ինքնավար Քրդստան ստեղծվելու դեպքում: Ի վերջո անգլիացիների քմահաճ կամքով ասորիները դատապարտվեցին ապրելու Իրաքի քրդական ու արաբական բնակչություն ունեցող թշնամական միջավայրում: Հուսահատության եզրին հասած ասորիների բախանձանքներին ընդառաջելով՝ Ազգերի լիգան ասորական հարցը մտքրեց Լոզանի կոնֆերանսի օրակարգի մեջ, սակայն այն կոնֆերանսում տապալվեց: Լոզանի պայմանագրի կնքումից հետո ասորիները կանգնեցին իրենց ազգային և մշակութային արժեքները կորցնելու վտանգի առաջ:

1923թ. հոկտեմբերի 29-ին Թուրքիան հռչակվեց հանրապետություն՝ մախազան Մ. Քեմալի գլխավորությամբ: Մինչև այս ժամանակաշրջանը՝ 1919-1923 թթ., Մ. Քեմալի բողոքական սպանվեցին հազարավոր ասորիներ, միայն նրա համար, որ քրիստոնյա էին: Էթնիկալիզմ գտումն իրագործելու համար փոփոխություններ կատարվեցին կրթության և մշակույթի ոլորտներում:

1925 թ. դեկտեմբերի 26-ին Ազգերի լիգան Հաքյարին հանձնում է Թուրքիային, իսկ Մեսուլը՝ Իրաքին՝ ի չիք դարձնելով ասորական ինքնավարության բոլոր հույսերը: Ասորիներին սիրաշահելու համար անգլիացիները Մեսուլի վիլայեթում տարածեցին «Ասորական թագավորության» ստեղծման վարկածը: 1932թ. Իրաքում բրիտանական «հովանավորչության» ժամկետը լրանալուց հետո 70 հազար ասորիներ խնդրանքով դիմեցին իրենց բնակավայրերում հողակտորներ ստանալու համար: Սակայն Բաղդադը թշնամաբար ընդունեց «երախտամոռ» ասորիների այդ բնական ու համեստ պահանջը և ուժեղացրեց իր բռնաճնշումները: Իսկ անգլիացիները, որոնք այլևս ասորիների ծառայությունների կարիքը չունեին, լքեցին նրանց, այդ ժողովրդի ճակատագիրը բողոնելով բախտի քմահաճույթին: 1933թ. օգոստոսի վերջին, երբ 1000 ասորիներ փորձում էին Սիրիա՝ ֆրանսիական հովանավորչության գոտի տեղափոխել իրենց ընտանիքները, Տիգրիս գետի ափին Իրաքի իշխանությունները զենք գործադրեցին նրանց նկատմամբ: Ասորիները պատասխան քայլերի դիմեցին և հաջողությամբ անցան Սիրիա: Իրաքյան բանակը այս պարտության վրեժը լուծեց ասորական գյուղերի խաղաղ բնակչությունից: Այս ողբերգական դեպքերը պատճառ հանդիսացան, որ ասորիները ցրվեին աշխարհով մեկ. սկզբում՝ սահմանակից երկրներ, ապա՝ Եվրոպա, Ամերիկա և Ավստրալիա:

Ասորիների հարցը միջազգային լուծում է պահանջում: Այս խնդիրն առ այսօր դուրս է մնացել համաշխարհային հասարակայնության ուշադրությունից: Այդ ուղղությամբ անհրաժեշտ են լուրջ գիտական ուսումնասիրություններ և լայն քաղաքական քննարկումներ տարբեր երկրների պաշտոնական շրջանակներում՝ ի պաշտպանություն բազմադարյան ու մեծարժեք մշակույթ ստեղ-

ծած ասորի ժողովրդի և հանուն պատմական արդարության վերականգնման:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՆԱԻՐԱ (ԱԻ)

**ԳՐԱԿԱՆ ԱՐԱԲԵՐԵՆ ԼԵԶՈՒՆ, ԲԱՐՔԱՈՒՆ ՈՒ
ԵՐԿԵՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻ ԵԳԻՊՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ ԱՐՉԱԿՈՒՄ**

Գարեթի պատմություն ունի գրական արաբերեն լեզուն: Գաղտնիք չէ, որ չնայած գրական արաբերեն լեզուն բոլոր երկրներում նույնն է, բայց այն շատ տարբերվում է բարբառներից, որոնք իրենց հերթին այնքան տարբեր են, որ, օրինակ, եթե իրաքցին հասկանում է եգիպտացու գրածը, նա չի հասկանում նրա ասածը: Բարբառի հետացումը գրական լեզվից ունի իր երկար պատմությունը, որի հետևանքով ժողովրդի մի սովոր գանգվածի համար գրականը դժվար-ընկալելի և չօգտագործվող է:

Այս պայմաններում գրական գործիչների առջև ծառայում է մի մեծ խնդիր՝ ինչպես վարվել գրական ստեղծագործության լեզվի ընտրության հարցում: Ինչպես եգիպտական, այնպես էլ ողջ արաբական գրականության մեջ գրական արաբերեն լեզվի և խոսակցական արաբերեն լեզվի օգտագործման աստիճանը միշտ էլ առանցքային խնդիր է եղել: Հենց լեզվից էր կախված ստեղծագործության հետագա ճակատագիրը. կամ այն ընդունվում էր և ճանաչում վայելում, կամ՝ մերժվում և մոռացվում հասարակության կողմից: Գրական և խոսակցական արաբերեն լեզուների զգալի տարբերությունները հեղինակների համար զգալի խոչընդոտ էր: Մի կողմից՝ գրելով գրական արաբերեն լեզվով, հեղինակը ստեղծագործությունը դարձնում էր վերամբարձ և կտրում ժողովրդից, իսկ մյուս կողմից՝ խոսակցականով գրելը արժեզրկում էր ստեղծագործությունը՝ դարձնելով այն հասարակ:

Նույնի հարցում այս խնդիրը փոքր-ինչ ավելի պարզ էր: Հեղինակները փորձում էին հնարավորինս սինթեզել լեզվի այս երկու արտահայտումները՝ գրելով շարադրանք գրական արաբերեն լեզվով, իսկ երկխոսությունները՝ բարբառով: Այդպիսի ստեղծագործություններից կարելի է նշել Յուսուֆ Իդրիսի ստեղծագործությունները, Թաուֆիկ ալ-Հաքիմի «Ոգու վերադարձը» /«Աուդաբ առ-Ռուս»/, Ուբեյդ երբայրների ստեղծագործությունները: Բացառություն է կազմում, քերև, միայն Մուհամմադ Թեյմուրը: Նա իր ստեղծագործությունները գրում է առանց սինթեզի՝ պիեսները խոսակցական լեզվով, իսկ պատմերվածքները՝ գրական արաբերենով: Հետաքրքիր է այն փաստը, որ իր առաջին դրամատիկական ստեղծագործությունը՝ «Թաչնակը վանդակում» /«Ուս-Ֆուռ ֆի-լ-քիֆս»/, նա գրել է գրական արաբերեն լեզվով, սակայն հետո արտագրել է խոսակցականով՝ հասկանալով, որ պիեսը պետք է մատչելի լինի ժողովրդի լայն լսարանին և մտտ լինի իրական կյանքին: Ըստ Մուհամմադ Թեյ-

մուրի՝ քարքառը ավելի ցայտուն է արտահայտում իրականությունը, քան գրական լեզուն, որովհետև հեղինակը պատկերում է եզրիպատական կյանքի իրական դիտարկումները, ցույց է տալիս մարդկանց, որոնք խոսում են իրենց լեզվով և ապրում են իրենց միջավայրում, նկարագրում է իրողությունը, այլ ոչ քե երևակայությունը:

Եվ իրոք, պիեսում, նովելում, քե պատմվածքում երկխոսությունը հանդիսանում է ռեալիստական արվեստի հիմնական արտահայտչական միջոցներից մեկը: Եթե երկխոսությունը գրված է դիմամիկ, կենդանի ոճով, ապա այն նպաստում է գրական կերպարի պայծառ ուրվագծմանը, որը գտնվում է իրադարձությունների կենտրոնում և նրա կազմավորումը տեղի է ունենում կյանքի իրական պայմաններում:

Ինչ վերաբերում է գրական արաբերեն լեզվով շարադրանքին, ապա այն նույնպես կրել է մի շարք փոփոխություններ: Գրական արաբերենը ձեռքագատվել էր կարծրացած, պայմանական ավանդական արտահայտչամիջոցներից, մակդիրներից և ոչ պետքական զուգադասումից, մի խոսքով՝ այն ամենից, ինչը հեռավացում էր գրականությանը իրական կյանքից:

XX դարի առաջին կեսին եզրիպատացի հեղինակները, օգտագործելով այս բոլոր արտահայտչական միջոցները, ջանում էին իրենց ստեղծագործությունները ավելի մատչելի և ընդունելի դարձնեին եզրիպատացի ժողովրդի լայն խավերին, և երկխոսությունների ավելի պարզ դարձնելը առավելագույնս նպաստեց այդ խնդրի լուծմանը:

ԿՈՍՏԻԿՅԱՆ ԹՐԻՍՏԻՆԵ (ԱԻ. Ա. Գ. Ք.)

**ՍԵՅՅԱՆ ԳԱՀԱԿԱԼ ԹԱՀՄԱՍՊ ԻԻ-Ի ՀԱՅԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ
ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐԸ ԵՎ 1731 ԹՎԱԿԱՆԻ ՆՐԱ ԱՆՀԱՋՈՂ ԱՐՇԱԿԱՆՔԸ
ԳԵՊԻ ԵՐԵՎԱՆ**

XVIII դարի 20-ական թվականներին Արևելյան Հայաստանի շրջանները անջատվում են աֆղանների ասպտամբության հետևանքով անկում ապրող Իրանի Սեֆյան պետությունից և չնայած տեղական ուժերի համառ դիմադրությանը հետզհետե ամբողջովին անցնում Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ: Այդ շրջանները բուրքական իշխանության տակ են մնում մինչև 1733 – 35թթ. Նադիր խանի գորքերի կողմից նրանց վերագրավումը: Ուստի պատահական չէ, որ խիստ սակավաթիվ են վերոհիշյալ ժամանակահատվածում հրապարակված պարսկալեզու հրովարտականները և գերակշռում են բուրքալեզու հրամանագրերը: Այնուամենայնիվ այդ սակավաթիվ հրովարտականները (որոնցից 7-ը հրապարակված լինելով Սեֆյան վերջին գահակալներից Թահմասպ II-ի կողմից՝ պահվում են Երևանի Մատենադարանում) որպես պատմական սկզբնաղբյուրներ հետաքրքրության արժանի վավերագրեր են:


A II
89540

Թահմասայ Միրզային, որ Սեֆյան շահ Սուլթան Հուսեյնի երրորդ որդին էր, Սպահանի պաշարման ընթացքում հաջողվում է աֆղանական զորքերի օղակը ճեղքելով հեռանալ Ղազվին, որտեղ իր հոր գահընկեց լինելուց հետո 1722թ. նոյեմբերի 10-ին իրեն շահ է հռչակում, մահ իր անունով խաթթա է հնչեցնում, դրամներ հատում և հրամանագրեր հրապարակում: Թեև նրա իշխանությունը ավելի շատ ձևական էր և սկզբնական շրջանում տարածվում էր Արդեբիլը, Սուլթանին ու Ղազվինը ընդգրկող մի փոքր շրջանի վրա, այն տևում է շուրջ 10 տարի: Նրա զորավար Նադիր խանը աֆղաններին տապալելուց հետո մտնելով Սպահան՝ 1729թ. նոյեմբերի 16-ին Թահմասայ II-ին վերահաստատում է Սեֆյանների գահին:

Նադիրի ռազմական հաջողությունները բուրքերի ու աֆղանների դեմ մարտերում Թահմասայ II-ին դրդում են իր հեղինակությունը վերականգնելու նպատակով ձեռնամուխ լինել Օսմանյան Թուրքիայի գերիշխանության տակ մնացած Ատրպատականի հյուսիսային շրջանների, Արևելյան Հայաստանի ու Վրաստանի գրավման գործին՝ այն ժամանակ, երբ Նադիրը զբաղված էր Խորասանում ծագած ապստամբության ճնշմամբ: Այս արշավանքի նկարագրությունը թեքև իր ապարդյուն լինելու պատճառով կամ քաղաքական ինչ-ինչ նկատառումներով բացակայում է այդ ժամանակաշրջանի դեպքերը արձանագրած հայ պատմագիրների աշխատություններում: Սակայն այն բավականին ընդարձակ տեղ է զբաղեցնում պարսից պատմագիրներ Մուհամմադ Քյազվինի ու Միրզա Մեհդի Խան Աստարաբարդիի Նադիր շահի պատմությանը նվիրված գործերում:

Ըստ պարսկալեզու աղբյուրների, այդ արշավանքը սկսվում է 1730 թ. դեկտեմբերին, երբ շահական զորքերը Թահմասայ II-ի գլխավորությամբ Սպահանից շարժվում են դեպի Թավրիզ, որտեղ նրան դիմաժորում տեղի իշխանավորները: Այնուհետև նա իր զորքը համալրում է Ատրպատականի զորագնդերով և շուրջ 18000 մարտիկներով անցնելով Արաքս գետը, շարժվում է դեպի Երևան, որն այդ ժամանակ գտնվում էր բուրքական կայսրոսի պաշտպանության տակ: Առաջին ընդհարումը իրանական ու բուրքական զորքերի միջև տեղի է ունենում Երևանից 3 փարսախա (≈18կմ) հեռու և ավարտվում շահի հաղթանակով, որը տեղ է դառնում Երևանի բերդում ապաստանած բուրքական զորքի զինամթերքին: Շահական զորքերը կանգ են առնում Երևանի մոտակայքում՝ Հանաբեռում, պաշարում բերդը և գոռհներ ձեռնարկում, որոնք սակայն ապարդյուն են լինում: Պաշարումը տևում է 18 օր, որից հետո իրանական զորքերը պարենի ճանապարհը փակված տեսնելով, մահ լսելով բուրքական նոր զորքերի դեպի Երևան շարժվելու մասին, հեռանում են:

Թահմասայ II-ի վերը նշված 7 հրովարտակներից հետաքրքրական է նրա 1724թ. հրամանագիրը, հրապարակված Էջմիածնի Աստվածատուր կաթողիկոսի խնդրանքով, որով արգելվում է նոր մահմեդականացած հայերին ապօրինի հավակնություններ ունենալ այլ հայերի ունեցվածքի նկատմամբ և բուլլատուրում մի շարք դատական ու վարչական ատյաններում իրենց իրավունքներ



ըը հաստատելուց հետո միայն տեր դառնալ իրենց ազգականների ունեցվածքին: Այս հրովարտակը գործադրվելու դեպքում փաստորեն դոշ չափով պետք է դժվարացներ մահմեդականացած հայերի համար իրենց հետավոր և մոտ ազգականների ունեցվածքին տեր դառնալը: Այն իր ուղղվածությամբ հակադրվում է նախորդ դարերում հայերի մահմեդականացումը Իսման Ջաֆարի օրենքի (ըստ այդ օրենքի յուրաքանչյուր մահմեդականացած հայ իրավունք ունեւր տեր դառնալու իր ազգականների ունեցվածքին) կիրառության շնորհիվ իրախոստող հրամանագրերին ու ֆաթվաներին, և վկայում է այն մասին, որ Իրանի բշնամիների դեմ իր պայքարում Սեֆյան գահակալը ջանում էր սիրաշահել հայերին ու ստանալ նրանց օժանդակությունը: Այս հանգամանքը ավելի պարզորոշ է գծագրվում նրա հաջորդ 5 հրովարտակներում, որոնք հրապարակվել են նրա 1731թ. դեպի Երևան կատարած անհաջող արշավանքի ընթացքում: Այս հրովարտակները հրապարակված են հիջրայի 1143թ. շավալ ամսի (1731թ. մարտի 29-ից ապրիլի 27-ը) ամսաթվով և ամենայն հավանականությամբ ձեռք են բերվել Աբրահամ Երևանցի կաթողիկոսի կողմից Երևանի պաշարման վերը նշված 18 օրերի ընթացքում, վերջինիս շահ Թահմասալ II-ի հետ ունեցած հանդիպման արդյունքում: Այդ հրովարտակներից մեկը (ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 331) հաստատում է Աբրահամ Երևանցու կաթողիկոսական իրավունքները: ՄՄ, կաթողիկոսական դիվանի, թղթ. 1գ-ի վավերագիր 334-ը Աբրահամ կաթողիկոսի խնդրանքով վերահաստատում է նախկին շահերի կողմից Էջմիածնին տրված բոլոր հրամանագրերը; նույն թղթապանակի վավ. 333-ը հրահանգում է Չուխուր Սա՛աղի կառավարչին արգելել նոր մահմեդականացած հայերին ժառանգության վեճ սկսել իրենց հարազատների հետ; իսկ կաթող. դիվանի, 1գ թղթապանակի վավ. 878-ը հաստատում է Ս. Էջմիածնի Մայր Աթոռը շահի հովանավորության տակ առնելը ու հրահանգում նրա միաբաններին աղոթել պարսիկների հաղթանակի համար:

ՀԱԿՈՅԱՆ ԼԻՆԱ Ա.Ը.

**ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԵՆԹԱՇԵՐՏԻ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ
ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՐՑԸ**

Ուրարտական արքաների թողած արձանագրությունները վկայում են այն մասին, որ հայկական էթնոլեզվական տարրը մեծ ակտիվություն է ցուցաբերել, և ուրարտական արքաները շատ դեպքերում ստիպված են եղել կրկնակի, եռակի անգամ արշավանքներ ձեռնարկել նույն վայրը՝ հնազանդեցնելու համար իրենց չեմբարիկվող ցեղերին ու նրանց առաջնորդներին: Մակայն եթե ուրարտական արքաներին այսպես թե այնպես հաջողվել է ժամանակավորապես արգելակել հայկական ցեղերի ընդարձակումը, ապա նրանց ուժերից վեր է եղել կա-

սեցնել էրնուեզվական խմբերի ներծծումը, դիֆուզիան ու առավել ևս՝ հարևան ցեղերի հետևողականորեն փոխանցվող հայոց լեզվի երթը:

Հայտնի է, որ որևէ լեզվում այլ լեզվի ենթաշերտի ձևավորմանը նախորդում է տևական երկլեզվության շրջան: Հայերենի դեպքում պետք է ասենք, որ Հայկական լեռնաշխարհի ուրարտացիների գալով բնականաբար տեղի է ունենում ոչ միայն հայերի և ուրարտացիների, այլև հայերենի և ուրարտերենի «բախում»: Եվ եթե սկզբնական ժամանակաշրջանում նրանց կարող էր հաջողվել զերծ պահել իրենց լեզուները միմյանց հետ շփումից, ապա հետագայում դժվար կլիներ կողք կողքի ապրող ցեղերին հեռու պահել լեզվական շփում ունենալուց: Այսինքն՝ ուզած, քե չուզած, որոշ ժամանակ անց պիտի սկսվեր այդ, այսպես կոչված, «տևական երկլեզվության շրջանը»:

Ինչ վերաբերում է հայերենում ուրարտական ենթաշերտի ձևավորման ժամանակաշրջանին, ապա պետք է նշել, որ Ջ.ա. 8-րդ դարի առաջին կեսից է հատկապես, որ կրկին սկսում են մեծ ակտիվություն ցուցաբերել տերության տարածքում ապրող հայկական ցեղերն ու ցեղախմբերը, ինչը հաստատվում է դեպի նրանց բնակության վայրերը ուրարտական արքաների ձեռնարկած արշավանքների փաստով: Իսկ որ այդ տարածքներում հատկապես հայկական ցեղեր են ապրել, հաստատում են հայկական տեղանունները: Այսինքն՝ Ջ.ա. 8-րդ դարի առաջին կեսին նոր բափ են ստանում ուրարտահայկական բախումները, ինչն էլ անխուսափելիորեն պիտի բերեր լեզուների «բախում»: Մրան հավելենք այն, որ ուրարտական արքաներն իրենց տերության սահմաններում հաճախ էին կատարում բնակչության վերաբնակեցումներ մի վայրից մյուսը, ինչը ևս, բնականաբար, առաջ կբերեր լեզուների «բախում» և դրան հաջորդող մի լեզվի հաղթանակ և մյուսի պարտություն:

Այսպիսով, եթե տերության կազմավորման նախնական ժամանակաշրջանում հնարավոր էր, որ լեզուները դեռևս զերծ մնային միմյանց հետ շփվելուց, ապա հետագայում կողք կողքի ապրող, քեկուզ այլալեզու ցեղերին դժվար կլիներ իրար հետ շփվել: Իսկ եթե մի լեզվով խոսողները, տվյալ դեպքում հայերենով խոսողները, նաև մեծամասնություն էին կազմում, ապա բնական է, որ պետք է կամաց-կամաց անցում կատարվեր դեպի մեծամասնության լեզուն:

Հայտնի է նաև, որ Ջ.ա. 7-րդ դարի վերջերին և 6-րդ դարի սկզբներին հայ ժողովրդի կազմավորման դարավոր գործընթացն իր ավարտին է հասնում, և Հայկական լեռնաշխարհի բնակչությունը հիմնականում հայալեզու էր: Այսինքն՝ կարող ենք ենթադրել, որ հայերենում ուրարտական ենթաշերտի ձևավորման գործընթացը տեղի է ունեցել 7-րդ դարի երկրորդ կեսից ոչ ուշ, քանի որ մույն դարի վերջին և հաջորդ դարի սկզբին լեռնաշխարհի բնակչությունն արդեն հիմնականում հայալեզու էր:

Կարող ենք ենթադրել, որ նշված ժամանակաշրջանին նախորդող մոտավորապես 150 տարին էլ հենց վերը նշված տևական երկլեզվության շրջանն է, ինչն անպայման պետք է նախորդի որևէ լեզվում այլ լեզվի ենթաշերտի ձևավորմանը:

**ԼԻԱՆԱՆՅԱՆ «ՀԻԶԱՍԼԱՀԸ» ՈՐՊԵՍ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ՈԱԶՄԱԲԱՂԱԲԱԿԱՆ ԳՈՐԾՈՒ**

1970-ականներին Լիբանանում մի շարք ներքին ու արտաքին գործունե-
րով պայմանավորված իսլամի քաղաքականացման գործընթացները կտրուկ
ակտիվացան: Երկրի ձախաթյան դաշինքն ու հայրենասիրական ուժեր ներ-
կայացնող մահմեդականները, հիասթափված քաղաքական կուսակցություննե-
րի կողմից ներքաղաքական իրավիճակի կարգավորման անգործությունից,
առկա խնդիրների լուծման ճանապարհը գտնում էին միայն «ճշմարիտ իսլա-
մին» վերադառնալու մեջ: Այս գործընթացում մեծ դերակատարություն ունե-
ցավ երկրի խոշորագույն շիա համայնքը, որի արմատականացմանը մեծապես
նպաստեց Իրանի 1979 թ. իսլամական հեղափոխությունը՝ կապված Թեհրանի
կողմից Մերձավոր ու Միջին Արևելքի հատկապես շիա բնակչության ունեցող
երկրներ «խլամական հեղափոխության արտահանման» և արաբ-խարայելա-
կան հակամարտության կարգավորման գործընթացների վրա ազդեցության
լծակների ձեռք բերման ցանկությամբ:

1982 թ. հունիսին Իսրայելի կողմից Լիբանան ներխուժման արդյունքում
երկրում Իրանի քաղաքական հովանավորությամբ գործող շիական «ԱՄԱԼ»
ու «Աղ-Դաավա» ֆունդամենտալ խմբավորումների լիբանանյան մասնաճյու-
ղերը, թերևս Միրիայի ներքին համաձայնությամբ, Իսրայելի դեմ արդյունավետ
հակազդեցության նպատակով, նույն ամսին իրենց կազմակերպության հրա-
վիրած համագումարում որոշում ընդունեցին «Հիզբալլահ» («Ալլահի կուսակ-
ցության») նոր կազմակերպության ստեղծման մասին, որի առաջնորդները
կազմակերպության ծրագրային նպատակներ հայտարարեցին Լիբանանի
հարավում Իսրայելի ռազմաքաղաքական ներկայության դեմ պայքարը՝ ընդ-
հույս նրա իսլամ ոչնչացումը, արևմտյան՝ հատկապես ամերիկյան ազդեցու-
թյան, իսլամի հակառակորդների դեմ պայքարի ծավալումը, Երուսաղեմի նկատ-
մամբ իսլամական վերահսկողության հաստատումը:

1983 թ. «Հիզբալլահի» ձեռնարկած մի շարք ահաբեկչական գործողու-
թյունների արդյունքում 1984 թ. Լիբանանից դուրս բերվեցին ԱՄՆ-ի և եվրոպա-
կան երկրների հովանու տակ գործող Բազմազգ Ուժերը: Կազմակերպության
ճնշման տակ սկզբում՝ 1985 թ., երկրի կենտրոնական շրջաններից, իսկ այնու-
հետև՝ 2000 թ. մայիսին, երկրի հարավից դուրս բերվեցին նաև իսրայելական
ուժերը:

1989 թ. հունվարին Դամասկոսի և Թեհրանի միջև հաստատված «ուս-
տուկ հարաբերությունները» «Հիզբալլահին» հնարավորություն ընձեռեցին վե-
րականգնել իր ռազմական ենթակառուցվածքը՝ Լիբանանի հարավում շարու-
նակելով իր գործունեությունը: Իսկ 1989 թ. փետրվարի Տաիֆի համաձայնա-
գրի շնորհիվ Միրիային հաջողվեց կասեցնել «Հիզբալլահի» զինաթափման

գործընթացը՝ պահպանելով այն որպես Լիբանանում Իսրայելի դեմ գործող միակ ռազմական կառույց:

1992 թ. աշնանը կայացած խորհրդարանական ընտրություններում «Հիզբալլահը» Լիբանանի խորհրդարանի իսլամական այլ պատգամավորների հետ դաշինքի կնքման միջոցով կարողացավ 20 % ձայն ապահովել երկրի օրենսդիր մարմնում: Իսկ 1996 թ. Լիբանանի խորհրդարանական ընտրություններին ակտիվ մասնակցության շնորհիվ կազմակերպությունն իր առաջատար դիրքերը ապահովեց լիբանանյան և հատկապես իսլամական քաղաքական քառերաբեմում՝ միաժամանակ չիրաժարվելով պայքարի զինված մեթոդներից:

1993 թ. ապրիլին «Հիզբալլահի» Խորհրդակցական Մարմնի ընտրությունների ժամանակ հաղթանակ տարավ կազմակերպության «չստիպվոր պրագմատիկ» քննադատող քարտուղարի պաշտոնում ընտրելով Հասան Նասրալլահին:

Ներկայումս լիբանանյան «Հիզբալլահի» ձևափոխման գործընթացների բնույթի ու հեռանկարների վրա նկատելի դրոշմ է թողնում տարածաշրջանում հատկապես Լիբանանում, Սիրիայի ու Իրանի վարած քաղաքականությունը, ինչպես նաև վերջիններիս միջև կազմակերպության վրա ազդեցության ձեռք բերման ուղղությամբ ծավալվող պայքարը: Չնայած Սիրիայի ու Իրանի միջև հարաբերությունների «յուրահատուկ» բնույթին, «Հիզբալլահին» ցուցաբերվող գաղափարական, ռազմաքաղաքական և տնտեսական աջակցության ուղղությամբ նրանց համագործակցության հիմքում ընկած են Դամասկոսի ու Թեհրանի կառավարող վարչախմբերի բնույթով պայմանավորված ներքին տարածայնությունները, որոնք տարամիտվում են ինչպես ողջ տարածաշրջանի խաղաղության գործընթացի, այնպես էլ Լիբանանի և «Հիզբալլահի» ապագայի վերաբերյալ իրենց դիրքորոշումներում:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵԼԻԹ (ԵՊՀ)

«ՀԱՐՖ» ԴԱՍԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Արաբերենի ծառայողական՝ օժանդակ դասի միավորների ամբողջությունը նկարագրվող նյութի սահմաններում առանձնացվում է «harf» անվամբ: Այս դասի միավորները ընդգրկում են տարբեր քերականական կարգերի նկատմամբ ռելևանտ միավորների խմբեր: Այս դասի բոլոր միավորների ընդհանուր հատկանիշը բերման բացակայությունն է:

Յուրաքանչյուր հարֆ իր անվանման մեջ պարունակում է այս կամ այն խմբին պատկանելությունն արտահայտող ցուցում, այսպես՝ .Harf nafi- /ժխտման հարֆ/, կամ harf mushabbah bi-l-fi'- /բայանման հարֆ/ և այլն: Ստեղծվում է իրադրություն, երբ կարծես բն նկարագրման միևնույն

մակարդակի վրա նմանատիպ հատկանիշներ դրսևորող հարձեր դասվում են տարբեր խմբերի: Օրինակ՝ «gheyr» և «illa» հարձերը կարծես թե հոմանիշներ են, այնուամենայնիվ, դասվում են տարբեր խմբերի, քանզի տարբերվում են կիրառվող շարահյուսական կառույցների բնույթով: Տվյալ հարձերի բավանդակային սահմանները լիովին ընգրկվում են բացառության իմաստ հաղորդելու գործառնությամբ, այնուամենայնիվ նրանց տարբերակումը կախված է այն բանից, թե ինչ կարգի միավորի հետ է այն կիրառվում և ինչպես է ազդում այդ միավորի բառափոխական նշանակության վրա:

Ինքնուրույն շարահյուսական գործառնությ չունենալով՝ հարձերը չեն կարող զբաղեցնել առանձին շարահյուսական դիրք՝ ինչպես ստորոգական, այնպես էլ ցանկացած այլ բառահարադրական շարույթի մեջ:

2. Հարձերի տեղակայությունը տեքստում տարբերվում է ըստ ստորոգական կառույցի տեսակի: Այսպես՝ *al-waladu sha'tirun* անվանական մախադասության մեջ զծային շարահասությանը *al-waladu* միավորը զբաղեցնում է ենթակայի՝ քերականական սուբյեկտի դիրքը և ունի այդ դիրքը բնութագրող ձևավորում՝ որոշյալ հոդ և *marfu'* վիճակ, համապատասխանաբար *sha'tirun* միավորը զբաղեցնում է ստորոգյալի դիրքը, հանդիսանում է տրամաբանական օբյեկտ և ունի բնորոշ դիրքային ձևավորում՝ անորոշ վիճակ և ուղիղ ձև, քանի որ հանդես է գալիս կայուն շարահասությանը և սուբյեկտի նկատմամբ ետադաս է: Ինոն եղանակավորման գործառնիչի և նրա համասեռ մասնիկների մուտքով մախադասությունը ինֆորմացիոն պլանում ստանում է լրացուցիչ բեռնվածություն, իսկ կառուցվածքային առումով *mubtada'* դիրքը զբաղեցնող *al-waladu* միավորը ստանում է *fatha*-ով ձևավորում, որն առաջնային ինքնառական ձև չէ և հատուկ չէ քերականական սուբյեկտին:

Ինոն (եղանակավորման գործառնիչով և նրա համասեռ հարձերով) ձևավորված շարահյուսական դիրքը ասույթի հաղորդակցական կառույցի վրա ազդեցության մեխանիզմի առումով էական տարբերություններ է առաջացնում այդ դիրքի վրա ասույթի կառուցվածքում, նրա հաղորդակցական կշիռը փոխելու առումով:

Նույն մախադասության *ism inna*-ն դերանվամբ փոխելու (*idmar*) դեպքում մախադասության հաղորդակցական ուղղվածությունը փոխվում է, մախադասությունը ստանում է *Innahu shatirun*. Ենթադր, որը թեմա-ռեմատիկ կառուցվածք ունի, քանի որ *I'inna*-ն, կապակցվելով *ha* դերանվան հետ, բովանդակային առումով անես շեշտում, ընդգծում է սուբյեկտի դիրքը, արդարացնելով *I'nnahu*-ն ասույթի թեմա համարելու դրույթը մյուս կողմից:

3. Բայական մախադասության կազմում հարձերի տեղակայումը և գործարկումը դիտարկելիս, որպես օրինակ, վերցնենք *xaraja at-talibu min al-jamia'*՝ ասույթը, որը բնորոշվում է նորմատիկ կառուցվածքային հաղորդակցական և քերականական ձևավորմամբ՝ «գործողություն + գործողության սուբյեկտ + պարագա»՝ ձևավորված հարձ *jarr*-ով:

Ասուրյի անդամատման ընթացքում կատարելով դիրքափոխություն, պարզվում է, որ հարձի գործառությունը փոխում է նախադասության հաղորդակցական ուղղվածությունը:

Այսպես՝ *al-ja'miatsu xaraja minha talibun* նախադասության մեջ, որը ներկայացնում է վերը բերված բազային ասույթը, *al-ja'miatsu*, պարագայի դիրքը զբաղեցնող միավորը, գալով առաջնային դիրք և զբաղեցնելով տրամաբանական սուբյեկտի դիրքը, ձեռք է բերում դիրքին հատուկ արտաքին հատկանիշներ, որն էլ որոշում են նրա բառափոխական ձևը (ինքնատական՝ *marfu'*), այն *idmar-ի* միջոցով պահում է իր դիրքը «*ha*» *damir a'i'di* միջոցով: Փոխակերպումների համեմատությունը ցույց է տալիս, որ չնայած դրանց իմաստաբանական նմանությանը, հաղորդակցական առումով դրանք սկզբունքորեն տարբեր են՝ *al-ja'miatsu* միավորը հանդիսանում է այս նախադասության քեման, իսկ *xaraja minha talibun* ոեման է:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ (ԵՊՀ)

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ «ԱՏՈՄԻՋԱՅԻԱՆ» ՈՐՊԵՍ
ՈԱԶՄՍՎԱՐԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Ներկայիս միջազգային հարաբերություններում առաջնային գործոն է ամերիկյան քաղաքականությունը, որը նախանշում է նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացը: «Սառը» պատերազմի ավարտից հետո ամերիկյան գլոբալ ռազմավարության ամենակարևոր նպատակներից մեկը դարձավ ամերիկյան համաշխարհային գերակայությանը մարտահրավեր նետելու ունակ և գաղափարախոսական, քաղաքական, տնտեսական և ռազմական ռեսուրսներ ունեցող միջազգային բարդ համակարգերի (*«կայսրություն»*) ձևավորման կանխումը կամ դրանց մասնատումը (*«ատոմիզացիա»*):

ԱՄՆ-ը արդարացիորեն Եվրասիան համարում է միակ մայրցամաքը, ուր կենտրոնացած հոգևոր և նյութական ռեսուրսները բավարար են այնպիսի մի ուժի կենտրոնի ստեղծման համար, որը կարող է վիճարկել ամերիկյան գերակայությունը: Այդ առումով Մեծ Մերձավոր Արևելքը կարող է դառնալ ամերիկյան հենակետ և հետագա գործընթացների սկզբնակետ՝ աշխարհաքաղաքական միավորման ձգտող ֆրանս-գերմանական ինտեգրացիայի, տնտեսապես ոտքի կանգնող Ռուսաստանի և ազգայնականացվող Չինաստանի դեմ:

2002թ. ԱՄՆ պաշտպանության նախարարության «Executive Intelligent Research Project» հանդեսում ամերիկացի արևելագետ Բեռնարդ Լյուիսը ներկայացրեց Մերձավոր Արևելքի քաղաքական քարտեզի ձևափոխման իր առաջարկ-ծրագիրը: Համաձայն այդ ծրագրի՝ մասնատման ենթակա են Աֆղանստանը, Պակիստանը, Իրանը, Թուրքիան, Իրաքը, Սիրիան, Լիբանանը, Սաուդ-

յան Արաբիան, Եգիպտոսը, Լիբիան, Մուդանը և Մավրիտանիան: Այդ երկրների տարածքներում պետք է ստեղծվեն ազգային միատարր պետություններ:

Այս հայեցակարգի համար Իրաքը հանդես է գալիս որպես մոդել: Միասնական Իրաքի գաղափարը դատապարտված է, քանի որ չկա երկրի բնակչության 60%-ը կազմող շիա արաբների, ցախլիկն իշխանական կաստա համարվող սուննի արաբների և de facto անկախ ապրող քրդերի՝ մույն պետության մեջ միավորվելու արժեհամակարգը: Շիա հոգևոր առաջնորդները առաջ են քաշում շարիաթի վրա հիմնված իսլամական հանրապետության գաղափարը, որին դեմ են սուննի արաբների գերազանցապես աշխարհիկ և քրդերի մեծամասամբ ազգայնական վերնախավերը: Իսկ Միացյալ Նահանգների ներկայացրած այլընտրանքը՝ Կանադայի, Բելգիայի կամ Բրազիլիայի օրինակների վրա հիմնված ժողովրդավարական դաշնային հանրապետությունն է: Փաստ է, սակայն, որ անգամ Կանադայում և Բելգիայում զոյություն ունեն ազգային հարցեր:

Իր հերթին իսլամական աշխարհը Իրաքին առաջարկում է միավորվել իսլամի հիմքի վրա կայսրության շրջանակներում թե՛ Իրաքի մասնատումը կանխելու և թե՛ իր իսկ դեմ ձևավորվող մարտահրավերը չեզոքացնելու նպատակով: Վաշինգտոնի կարծիքով՝ իսլամին կարող է դիմակայել միայն ազգայնականությունը, որը այս պարագայում կհանգեցնի երկրի մասնատմանը: «The Korea Times»-ի 2004թ. փետրվարի 9-ի համարում ԱՄՆ նախկին պետքարտուղար Հենրի Բիսսինգերը գրում է, որ անվերջամալի քաղաքացիական պատերազմներից ավելի նախընտրելի է Իրաքի մասնատումը երեք երկրների՝ միջազգային վերահսկողության ներքո: Այդ առումով քրդական հարցը հանդես է գալիս որպես հիմնական ցուցիչ (Indicator): Հետայսու զարգացումները քրդական հարցի շուրջ արտացոլելու են Մերձավոր Արևելքում ընթացող հիմնական գործընթացը՝ պայքարը «կայսերական» երկու համակարգերի միջև: Անկախ կամ փաստացի անկախ Բուրդիստանի ստեղծումը նշանակելու է «ատոմիզացիայի» սկիզբ: ԱՄՆ-ի նպատակն է այս նոր ռազմավարությունը ներմուծել ողջ Մեծ Մերձավոր Արևելքում, որտեղ կան դրա նախադրյալները:

ՀԱՄԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՄԻԿ (ԱԽ)

ՀԱՅԱՍՏԱԿԱՆ ^ՊՍ.GUR-ը ԵՎ ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿԸ

Խեթական Նոր քաղափրության արքա Մուրսիլիս II-ի (Ք.ա. 1322/21-?) և հայասացի արքա Աննիայի միջև (դեռևս վերջնականապես ճշգրտված չէ, տես Ա. Կարտրա) կնքված պայմանագրի երդման տողերում վկայաբերված են խեթական և հայասական աստվածները. սա միակ աղբյուրն է, որից մենք տեղեկանում ենք Հայասայի պանթեոնի մասին: Այստեղ այն ներկայացված է 14 աստվածություններով, որոնցից առաջին երկուսը՝ [^Պ]Ս.GUR և ^ՊISTAR,

առանձնացված են մյուսներից, ինչը հավանաբար մատնանշում է նրանց գերակա դերը հայաստանյան պանթեոնում: ⁴U.GUR-ը անդրշիրիմյան աստծո գաղափարագիրն է (աքքադական Ներգալ), իսկ ⁵ISTAR սիրո և պտղաբերության աստվածուհունը (շումերական Ինաննա, աքքադական Իշտար): Մա անտվոր միասնաություն է, քանզի սիրո և պտղաբերության աստվածուհու կողքին հին աշխարհում հանդես է գալիս կամ գերագույն հայր աստվածությունը կամ ամպրոպի և կայծակի աստվածը (որը ունի մակ ռազմի աստծո հատկանիշներ), անտվոր է մակ անդրշիրիմյան աստծո գերագույն դերը պանթեոնում:

Գ. Ղափանցյանի կարծիքով կամ ⁶U.GUR-ի տակ հանդես է եկել մեռնող-հարություն առնող Արա Գեղեցիկ աստվածությունը, կամ նա հնարավոր է համարել գաղափարագրի հնչյունական Ուգուր ընթերցումը:

Մենք կարծում ենք, որ ⁶U.GUR գաղափարագրով ներկայացվել է Արա Գեղեցիկ աստվածությունը, հիմք ընդունելով ոչ միայն Գ.Ղափանցյանի արտահայտած այն տեսակետը, որ մեռնող-հարություն առնող աստվածները դառնում են անդրշիրիմյան աշխարհի տերեր, այլ մակ փորձելով ցույց տալ, որ Արա Գեղեցիկը բազմաշերտ դիցանաբանական կերպար է և, չնայած նրա ունեցած ընդհանրություններին իր հինարևելյան զուգահեռների հետ (Դումուզի, Թամանուգ, Օսիրիս (վերջինս մակ անդաշխարհի տերն էր), Արոնիս, Տելեպիոնուս, Ատտիս և այլն), նա, ըստ Խորենացու բերած առասպելի, օժտված է արտասովոր գեղեցկությամբ, հայրենասեր է, քաջ մարտիկ, ընտանիքի հայր է (ունի 12 ամյա որդի՝ Արայան Արան) և ունի սիրած կին (Նվարդ, որի կերպարը Գ. Ղափանցյանը զուգադրել է սիրո և պտղաբերության աստվածուհու հետ), այսինքն՝ հատկանիշներ, որոնք նրան մոտեցնում են պանթեոնի գլխավոր աստծուն: Մյուս կողմից էլ սիրո և պտղաբերության աստվածուհուն մարմնավորող Շամիրամի սերը մերժելու պատճառով պատերազմում գոհվել և շնայելու էակների՝ արակցների կողմից վերակենդանանալը, նրան մոտեցնում են մեռնող-հարություն առնող աստվածներին: Այստեղից կարելի է ենթադրել, որ եթե մախապես Արան ունեցել է պտղաբերության և բերրիության հատկանիշներ, ապա հետագայում, կրոնաբաղադրական զարգացումների արդյունքում, նա ստացել է մակ ռազմի աստծո գործառույթներ:

Որպես մեծ օրինակ կարող է ծառայել խեթական Pirya-ն, որը վաղ շրջանում եղել է պարզապես պտղաբերության աստվածություն, իսկ հետագայում ստացել ծիու վրա մտած ռազմի աստծո մկարագիր (Թ.Գամկրելիձե, Վ.Իվանով): Արա անունը Գ.Ղափանցյանը և Ա. Մատիկյանը համադրել են մակ հունական ռազմի Արես աստծո հետ: Հնդեվրոպական ռազմի և ամպրոպի մի շարք աստվածների անունները համահունչ են. օր. Pirya, (խեթ.), Perun (սլավ.), սակայն Արեսի անունը տարբերվում է: Այսինքն կարելի է ենթադրել, որ Արեսը և Արան միևնույն արժանանքն ունեն: Արայի անվան համահնչյունությունը ուրարտական ժամանակաշրջանից վկայված և Էրեբունիում տաճար ունեցող Իվարշա, Իարշա աստծո հետ, որի պաշտամունքը իրենց հետ բերել էին Հայաս-

սայի հարեան Ծոփքի վերաբնակիչները, նկատել է Ս.Հմայակյանը: Ինչպես նաև հավանական է, որ Արամազդի անվան Առուրա բաղադրիչը հայերը հարմարեցրել են իրենց Արա աստծո անվանը և ստացել Արամազդ (նման այլ օրինակներ կապված Արամազդի անվան առաջին բաղադրիչի փոփոխման հետ, տե՛ս է. Գրանտովսկի, Ա.Մնացականյան, Ս.Հմայակյան, Ա.Պետրոսյան):

Անդրաշխարհիի հետ Արայի ունեցած ընդհանրությունների մասին վկայում են նրա անվան ⁹Ս.GUR գաղափարագիր գրությունը, ինչպես նաև աքքադական Էրրայի (որը կամ Ներգալի երկրորդ կերպարն է կամ առանձին աստվածություն, որը մինչև վաղաբելոնյան ժամանակաշրջանը հանդես է եկել առանց աստծո գաղափարագրի՝ ինչը վկայում է նրա փոխառյալ լինելու մասին (Վ. Աֆանասև) և խեթական պամթոնի մույնատիպ աստված Յարրիի հետ նրա անվան հնչյունական նմանությունը: Հետաքրքրական է, որ արծվի անվանումը աքքադերենում հնչում է ԵՐ (նշենք որ արծիվը կապված է նաև Տեփեպիմուսի առասպելի հետ): Ուշագրավ է նաև, որ եգիպտական առասպելաբանության մեջ անդրաշխարհի դաշտերը կոչվել են ia'ru:

Բացի այդ Արա Գեղեցիկի անվան մեջ «գեղ»-ը համադրելի է հնդեվրոպական պատկերացումներում անդրաշխարհի դաշտերի *yel- անվան հետ՝ հայերենին բնորոշ *yel- - գեղ անցումով (Ա.Պետրոսյան), (նկատենք պատկերացումների նմանությունը եգիպտական անդրշիրիմյան դաշտերի հետ):

Արա Գեղեցիկի անունը համադրվել է նաև խեթերեն ara- «ընկեր» (Գ.Ղափանցյան), հին հնդկ. ari «ընկեր», «օտարական» բառերի հետ (Ա. Մատիկյան):

Վերը քվարկվածներին կարելի է ավելացնել նաև հնդեվրոպական *ar(i)o- հիմքը, որը ըստ Ժ. Դյունեպիլի ունեցել է քե «հյուր», քե «տեր» նշանակությունը: Այս երկվությունը մեր կարծիքով հատկանշական է մեռնող-հարություն առնող աստծո կերպարին. նա տեր է այս և հյուր անդրաշխարհում, և ընդհակառակը:

Անհրաժեշտ է անդրադառնալ նաև Գ.Ղափանցյանի այն տեսակետին, որ նա բերում է հարցականով, քե արյոք կապված չե՞մ հորովելները Արայի անվան հետ: Մակայն նա չի հիմնավորում իր այս տեսակետը:

Չնայած Հր.Աճառյանը հորովել բառը (գութանի երգը) կապում է «արտի ծայրին անվար մնացած «առաել» կոչվող հողերի հետ՝ («ո») բացականչության հավելումով), հնարավոր է, որ այդ երգերը իրականում կապված են Արայի անվան հետ, և վաղմջական ծագում ունեն և բխում են Արա + *yel < Արայի դաշտ հասկացությունից, որը, հավանաբար, «ոո» բացականչության հավելումով դարձել է «հորովել»:

Հայտնի է, որ Աստվածաշնչի հնագույն հայերեն քարգմանության մեջ Ներգալի փոխարեն հանդես է գալիս Անգեղը: Հետաքրքրական է Արա Գեղեցիկ և Տորք Անգեղ հակադրությունը. թվում է նրանք միևնույն կերպարի երկու արտահայտություններն են: Ինչպես աքքադական Ներգալը և Էրրան (չմայած նրանք հատկանշվեցանով մույնական էին). անդրաշխարհի մտնելիս Ներգալը

ստանում էր Էրրա անունը, իսկ դուրս գալիս՝ Ներգալ անունով: Հնարավոր է ենթադրել, որ Էրրան (աքքադ.) և Իարրի (լսեթ.) փոխառնված լինեն Հայկական լեռնաշխարհից՝ պահպանելով Արայի անվանումը և կերպարի անդրշիրիմյան գործառույթը (Ա.Պետրոսյան): Այս միտքը կարելի է հիմնավորել այն փաստով, որ աքքադերենում Էրրայի անունը փախառայալ է, իսկ նրա հետ կապված առասպելը, հավանաբար վկայված է Բ.ա. 11-րդ դարից: Այս առումով նշենք նաև, որ ըստ միջագետքյան պատկերացումների, Եփրատ գետի ակունքների մոտ է տեղադրված եղել անդրշիրիմյան աշխարհը (Պ. Ավետիսյան և Ա. Բորոխյան, Ա. Մովսիսյան)՝ տեղանք, որտեղ գտնվում էր Հայասան: Վերոհիշյալ փաստերը, ինչպես նաև անդրշիրիմյան աշխարհի տեղադրությունը Հայաստանի տարածքում, պայմանավորել են Հայաստանի գերագույն աստծո՝ Ա.Մ.ՍՐԳ զադափարագրով հանդես գալը, քանզի այդ պանթեոնի գլխավոր աստվածը այս դեպքում պետք է լիներ նաև անդրաշխարհի տեր:

Եզրափակելով պետք է նշենք, որ Հայաստանում նման գերագույն աստծո առկայությունը, որը իր մեջ ներառել է թե անդրաշխարհի, թե մեռնող-հարություն առնող, ինչպես նաև ռազմի աստծո հատկանիշներ, պայմանավորված է նրանով, որ այդ դիցարանը գտնվել է զարգացման այնպիսի փուլում, երբ գլխավոր աստվածը ունեցել է գործառույթներ, որոնց մի մասը հետագայում կրոնաքաղաքական և առասպելաբանական պատկերացումների փոխակերպման արդյունքում պետք է փոխանցվելին այլ նորահայտ աստվածությունների: Այդ փոխակերպումները մենք հետագայում տեսնում ենք հայասական դիցարանի ժառանգորդ՝ հայ հեթանոսական դիցարանում: Ավելացնենք նաև, որ ուրարտական Խալդի գլխավոր աստվածը ևս ունեցել է մեռնող-հարություն առնող (Ֆ.-Վ. Բյունիզ, Ս. Վնայսկյան) և ռազմի աստծո հատկանիշներ:

ՈՒՉԱՍՐՅԱՆ ՌՈՐԵՆՏ (ՊԻ)

ՈՒՉԱՍԱԶԱՂԱԶԱԿԱՆ ՓՈՒՆԿԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՉՋԻԻ ԵՎ ԽԱԹԹԻԻ ՄԻՋԵՎ Բ.Ա. XIV ԴԱՐՈՒՄ

Բ.ա. XIV դարի սկզբից խեթական սկզբնաղբյուրներում հայտնի է դառնում Հայասա-Ազգի պետությունը:

Խաթթիի արքա Առնովանդաս I-ի օրոք (Բ.ա. XIV դ. սկիզբ) կազմված խեթական տեքստերից է, այսպես կոչված, «Պախլսուվացի Միտայի տեքստը» (KUB XXIII 72): Այս վավերագրում տրվել է Հայկական լեռնաշխարհի քաղաքական միավորների հետ խեթական պետության կնքած ժամանակագրորեն ամենավաղ պայմանագիրը, որտեղ Հայասա-Ազգին չի հիշատակվել, սակայն այստեղ հանդես են գալիս որոշ քաղաքներ, որոնք ավելի ուշ շրջանի խեթական արդյուրներից հայտնի են որպես այդ երկրի բնակավայրեր՝ Դուզգաման, Պիտոխյարիզան և Արխիտան: Վերոհիշյալ քաղաքների հիշատակությունը

Առնուվանդաս I-ի օրոք, Հայասա-Ազգի երկրամվան բացակայության պայմաններում, վկայում է, որ խեթական այս արքայի օրոք հետագայի հայասական տարածաշրջանը դեռևս քաղաքականապես միավորված չէր:

Առնուվանդաս I-ի հաջորդ Թուղխալիյաս III-ի օրոք (Ք.ա. 1360-1344 թթ.) Խաթթին հայտնվել էր շատ ծանր կացության մեջ: Բոլոր կողմերից նրա կենտրոնական շրջանների վրա էին հարձակվել թշնամի ուժերը, ավերվել էր նույնիսկ մայրաքաղաք Խաթթուսասը (KBo VI 28 (CTH 88)): Խեթական սկզբնաբյուրներում նշվել է, որ Հայասա-Ազգին հարձակվել ու գրավել էր խեթերի Վերին երկիրը և Սամուխա քաղաքը սահման դարձրել Խաթթիի և իր միջև: Թուղխալիյաս III-ին միայն մեծ ջանքերի շնորհիվ հաջողվեց ետ գրավել կորցրած տարածքները: Այդ պայքարում նրան օգնում էր իր որդին՝ արքայազն Սուպալիուլիումասը: Ջախջախելով կասկա ցեղերի ուժերը, այնուհետև Թուղխալիյաս III-ը շարժվեց դեպի Հայասա, որի Կարաննի շարքան իր գործով ընդառաջ ելավ խեթական ուժերին և Կումմախա քաղաքի (հետագայի Կամախը) մոտ տեղի ունեցավ ճակատամարտ, որը հավանաբար ավարտվել էր հայասական զորքի պարտությամբ և Կումմախայի նկատմամբ խեթական վերահսկողության հաստատմամբ:

Այսպիսով, Հայասա-Ազգի պետության կազմավորումը պետք է տեղի ունենար Ք.ա. XIV դ. սկզբին Առնուվանդաս I-ի և Թուղխալիյաս III-ի կողմավորման շրջանի ինչ-որ մի ժամանակահատվածում:

Թուղխալիյաս III-ին հաջորդած Սուպալիուլիումաս I-ի օրոք (Ք.ա. 1344-1322 թթ.) սկսվեց Խաթթիի նոր վերելքը: Կարաննիից հետո խեթական աղբյուրները որպես Հայասայի թագավոր հիշատակել են Հուկկանային, որի հետ էլ խեթական արքան դաշնագիր է կնքել (CTH 42): Հուկկանան այդ դաշնագրով պարտավորվել էր չդավել և ամեն կերպ օգնել Խաթթիին, կատարելով նաև ռազմական պարտավորություններ: Դաշինքը ամրապնդվեց Խաթթիի արքայի քրոջ և Հուկկանայի ամուսնությամբ: Խաթթիի համար այս դաշնագիրը խիստ շահավետ է եղել: Ամրապնդելով իր քիկունքը ռազմական հաղթանակներով Կասկա, Ալգիյա, Արծավա և այլ երկրների նկատմամբ, Սուպալիուլիումաս I-ը դաշինք կնքեց իրենից որոշակի ուժ ներկայացնող Հայասա պետության հետ և ռազմական գործողություններ սկսեց Միտաննիի և Եգիպտոսի դեմ: Հավանաբար, Խաթթիի արքայի ռազմական խոշոր միջոցառումներին, ի թիվս մի շարք երկրների, մասնակցել են նաև Հայասայի ռազմական ուժերը, քանի որ այդ դաշնագիրը մինչև Խաթթիի արքայի իշխանության վերջին տարիները շարունակել է ուժի մեջ լինել:

Խաթթիի ռազմաքաղաքական բուռն վերելքի պայմաններում Հայասան չէր խախտել այդ պայմանագիրը: Սակայն հետագայում, օգտվելով Խեթական պետության ժամանակավոր թուլացումից, Հայասայի նոր արքա Աննիյան հրաժարվեց իր մախրդի՝ Հուկկանայի կողմից հանձն առած պարտավորությունները և ռազմական գործողություններ սկսեց Խաթթիի դեմ:

Հարևան երկրները սկսում են բշմամանալ Խեթական տերության հետ ղեռնա Մուսլիլիլիումսա I-ի կենդանության վերջին տարիներին, երբ համա-
ճարակ էր տարածվել Խաթթիում: Այնուհետև բշմամիների թիվը գնալով շա-
տանուն է՝ պայմանավորված այդ արքայի և նրա հաջորդ գահակալի՝ Անու-
վանդաս II-ի (Ջ.ա. 1322-1321թթ.) մահով: Իսկ երբ խեթական գահը փոխանց-
վում է ղեռնասա Մուրսիլիսին, քաղաքական իրավիճակը երկրում չի բարելավ-
վում: Մուրսիլիս II-ը (Ջ.ա. 1321-1295թթ.) իր տարեգրություններում հաղորդում
է այն մասին, որ բշմամի երկրները՝ նրանց թվում նաև Հայասա-Ազգին, հաղ-
ճակվել էին խեթական տարածքների վրա և ավերել դրանք: Հավանաբար, Հա-
յասա-Ազգիի և Կասկայի միջև գոյություն է ունեցել դաշինք, քանզի այս երկու
երկրների ռազմական ընդհարումները Խաթթիի հետ հաճախ ժամանակագրո-
րեն համընկել են: Կասկացիների Տիքիա երկրի արքա Պիխիսունիային պար-
տության մատնելուց հետո Մուրսիլիս II-ը իր իշխանության յոթերորդ տարում
ուշադրությունը կենտրոնացնում է Հայասա-Ազգիի վրա: Սկզբնապես փորձե-
լով հարցը խաղաղությամբ լուծել՝ Մուրսիլիս II-ը բարեկամական մամակներ է
ուղարկում Աննիային, պահանջելով նրանից ետ վերադարձնել Հայասայում ա-
պաստանած խեթահպատակներին և Իստիտինա ու Դանկուվա (վերին
երկրներ) խեթական երկրներից վերցրած գերիներին: Աննիայից մերժում ստա-
նալով՝ Մուրսիլիս II-ը հարձակվում է Հայասա-Ազգիի սահմանային Ուրա քա-
ղաքի վրա (Կունմախայից արևելք, առանձին սահմանային գոտի է հանդիսա-
ցել Հայասա-Ազգիի կազմում), սակայն արշավանքը ձախողվում է, և խեթա-
կան արքան հետագայում ստիպված է լինում կրկին արշավել դեպի Հայասա-
Ազգի: Օգտվելով այն առիթից, որ Մուրսիլիս II-ը գտնվում էր իր երկրի հարա-
վում, Աննիան վերստին հարձակվում է Իստիտինա երկրի վրա և պաշտում
Կաննուվարա խեթական քաղաքը: Խեթական մի բանակ Նուվանցա գրա-
հրամանատարի գլխավորությամբ շտապ կարգով օգնության է հասնում շրջա-
պատված Կաննուվարա քաղաքին: Հայասացիները, որոնք ռազմի դաշտ էին
հանել 700 մարտակառքեր և 10000 հետևազոր, Կաննուվարա քաղաքի մոտ
տեղի ունեցած ճակատամարտում պարտություն են կրում: Նույն տարվա վեր-
ջին Հայասայի վրա կրկին արշավելու մտադրությամբ Մուրսիլիս II-ը Կարգա-
միսից գալիս է Թեգարամա երկիր: Այստեղ նա, լսելով իր զորահրամանատար-
ների խորհուրդը, առժամանակ հետաձգում է արշավանքը:

Հաջորդ՝ իր թագավորության 10-րդ տարում, Մուրսիլիս II-ը սկսեց իր ռազ-
մերքը դեպի Հայասա-Ազգի: Ինգալավա քաղաքում զորատես անցկացնելուց
հետո խեթական արքան արշավում է դեպի Հայասա-Ազգիի խորքերը: Խեթերը
պաշարում և գրավում են Հայասայի «ծովի մեջ գտնվող» Արիպասա քաղաքը, ո-
րի բնակիչները հեռանում են սարերը: Արիպասա ավաթի մասնակետց հետո
Մուրսիլիս II-ը հաջորդ օրը հպատակեցնում է նաև Դուգամա հայասական
քաղաքը, որի բնակիչները դիմադրություն ցույց չեն տալիս: Խեթական արքան
քաղաքը չի ավերում, միայն 3000 դուրգամացիների, որպես զինվորների, տե-
ղափոխում է Խաթթի: Իր թագավորության 11-րդ տարում, Մուրսիլիս II-ը կրկին

ներխուժում է Հայասա-Ազգի, որի իշխանավորները, տեղի տալով գերազանցող ռազմական ուժին, ստիպված քանակցություններ են սկսում Խաթթիի արքայի հետ: Հայասա-Ազգին պարտավորվում է զորք տրամադրել խեթական քանակին, ինչպես նաև ետ վերադարձնել դեռևս իր մոտ պահվող խեթական զերիններին: Հայասական իշխանավորների կողմից հավատարմության երդում ստանալով և մոտ 1000 խեթական զերիններ ետ վերադարձնելուց հետո, Մուրսիլիս II-ը վերադառնում է Խաթթի:

Մուրսիլիս II-ին հաջողվում է մի որոշ ժամանակով Խաթթիի հյուսիսարևելքում չեզոքացնել հայասական վտանգը: Խեթերին այդպես էլ չի հաջողվել նվաճել Հայասա-Ազգին և նրանք բավարարվել են միայն իրենց զերիններին վերադարձնելով և ռազմական օգնություն ստանալով, սակայն որևէ խոսք չկա այն մասին, որ Հայասան հարկ է վճարել Խաթթիին, որպես պարտված երկիր: Այնուամենայնիվ, Մուրսիլիսի արշավանքն ունեցավ իր հետևանքները. հավանաբար, գահից զրկվել էր Խաթթիի անգիջում հակառակորդ Աննիյան, քանի որ խեթական արքայի հետ բանակցել էր Հայասայի Խալիմանա քաղաքից Մուտտին, որը, հավանաբար, փոխարինել էր Աննիային:

Մուրսիլիսի կառավարման հաջորդ տարիներին խեթական վավերագրերում տեղեկություններ չկան Հայասա-Ազգիի վերաբերյալ. Խաթթին և Հայասա-Ազգին խաղաղ գոյակցության շրջան են ապրել, և որևէ ռազմական ընդիսարում տեղի չի ունեցել երկու երկրների միջև:

ՂԱՐԻՔԶԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ (ՈՒ)

ՈՒՂՐԻՉ ՇԱՐԺՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐԶ

1970թ. նոյեմբերի 16-ին Սիրիայում Հաֆեզ ալ-Ասադի ղեկավարած ուղիչ շարժումն էապես փոփոխության ենթարկեց ոչ միայն պետության ներքին և արտաքին, այլ նաև սոցիալ-տնտեսական քաղաքականության հիմնական ուղիությունները:

Մտանձնելով Սիրիայի ղեկավարությունը՝ Հաֆեզ ալ-Ասադը սկզբնական շրջանում հատկապես մեծ ուշադրություն էր դարձնում երկրի տնտեսությանը՝ համոզված լինելով, որ առանց տնտեսության զարգացման և երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման անհնարին կլիներ որևէ հաջողություն ակնկալել քաղաքական ասպարեզում, հատկապես, իշխանության եկած նոր վարչակարգի ամրապնդման և ժողովրդի կողմից նրա հանդեպ վստահության մթնոլորտի ստեղծման առումով: Ասադը մտադիր էր իրականացնել տնտեսության ազատականացմանն ուղղված ծրագրեր: Նոր իշխանությունը նախապատվություն էր տալիս ինչպես պետական, այնպես էլ մասնավոր սեկտորի գոյությանն ու պետության համար շահավետ նրանց սրբակցությանը: Մասնա-

վոր սեկտորը նախատեսված էր խթանել հատկապես քեթև, սննդի ու վերամշակող արդյունաբերության, ինչպես նաև ծառայությունների և սպասարկման ոլորտում:

Ուղղիչ շարժումից ի վեր Միրիայի տնտեսությունը շարունակեց մնալ հնգամյակային պլանային, որի հիմքը դրվել էր դեռևս 1950-ական թթ. վերջից, երբ Միրիան և Եգիպտոսը միավորվեցին մեկ պետության մեջ: Մի կողմից Միրիայում հզոր պետական սեկտորի ստեղծումը համարվում էր սոցիալական արդարության հասնելու գրավական, իսկ մյուս կողմից Ասադն ու նրա համախոհները հասկանում էին, որ առանց մասնավոր կապիտալի ներգրավման անհնար է արձանագրել լուրջ տնտեսական առաջընթաց: Այս նպատակներին նախատեսվում էր հասնել հողային բարեփոխման, պետական սեկտորի դիրքերի ամրապնդման, արդյունաբերության զարգացման, տնտեսության մեջ խառը սեկտորի ստեղծման, մասնավոր, այդ թվում՝ օտարերկրյա ներդրումների ընդլայնման և ազատ ձեռներեցության խրախուսման միջոցով:

Հաֆեզ ալ-Ասադն առաջին հերթին մտադիր էր հետ քերել նախորդ վարչակարգի կառավարման տարիներին Միրիայից արտասահման հոսած մասնավոր կապիտալը՝ օգտագործելով այն երկրի տնտեսական խնդիրները լուծելու համար: 1970թ. կառավարության ընդունած որոշումը թույլ էր տալիս սիրիացի և արտասահմանցի թե՛ ռեզիդենտ, թե՛ ոչ ռեզիդենտ քաղաքացիներին տարադրամով հաշիվներ բացել սիրիական բանկերում, եթե այդ միջոցները գոյացել էին երկրի սահմաններից դուրս իրականացվող գործունեության հետևանքով: 1971թ. հունվարին համաներման ենթարկվեցին Միրիայի այն քաղաքացիները, որոնք կատարել էին կապիտալի ապօրինի արտահանման գործողություններ և այլ տնտեսական հանցագործություններ մինչև 1970թ.: Կապիտալները երկրից արտահոսել էին հիմնականում 1964-1965թթ. համատարած ազգայնացման քաղաքականության հետևանքով և պահվում էին արևմտյան բանկերում: Կառավարությունը կոչ էր անում Միրիայի ունևոր քաղաքացիներին իրենց գումարային կարողություններով վերադառնալ հայրենիք և ներդրումներ կատարել երկրի տնտեսությունում: Ասադն անձամբ առաջարկում էր հայտնի սիրիացիներին վերադառնալ հայրենիք և մասնակցել երկրի վերակառուցման ծրագրերին: Նա նաև խոստանում էր քաղաքացիական ծառայության ոլորտում պաշտոններ շնորհել այն պորձեխոնակ երիտասարդներին, որոնք ինչ-ինչ պատճառներով լքել էին երկիրը:

Իր իշխանավարության սկզբնական շրջանում Ասադն իրականացրեց մի շարք պոպուլիստական քայլեր՝ հրամանագիր ստորագրեց սննդամթերքի և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների գները նվազեցնելու, հարկերն իջեցնելու և ընտանեկան նպաստներն ավելացնելու վերաբերյալ: Բացի այդ զգալի մեղմվեցին արտաքին առևտրի արգելքները, սիրիացի առևտրականներին և գործարարներին թույլատրվեց հումք, արդյունաբերական և գյուղատնտեսական սարքավորումներ ներմուծել արտերկրից: Միրիայում արագ տեմպերով զարգանում էր նաև ծառայությունների և սպասարկման ոլորտը,

որը դարձավ Ասադի վարչակարգի սոցիալ-տնտեսական քաղաքականության կարևոր բաղկացուցիչներից մեկը:

Մասնավոր կապիտալի օգտագործումը և մասնավոր սեկտորի խրախուսումը նպատակ ուներ պետական սուղ միջոցներն ուղղել ռազմավարական կարևոր խնդիրներ լուծելու համար, որոնցից էին երկրի պաշտպանունակության ամրապնդումը, բանակի թվաքանակի մեծացումը, նրա սպառազինումը ժամանակակից զենքի բոլոր տեսակներով և այլն:

1971թ. Սիրիան միացավ ներդրումների և պահովագրման (երաշխավորման) արաբական կազմակերպությանը և վավերացրեց միջարաբական ներդրումների օժանդակման ու նրանց պաշտպանության համաձայնագիրը, որով Հաֆեզ ալ-Ասադը բացի տնտեսական շահերից, բարելավում էր նաև նախորդ տարիներին անկում ապրած քաղաքական հարաբերություններն արաբական միապետական երկրների հետ: Սիրիական ղեկավարության նոր տնտեսական քաղաքականությունը հնարավորություններ ստեղծեց ներդրումների համար նաև արևմտյան, մասնավորապես, եվրոպական պետությունների կողմից:

Ասադի տնտեսական ծրագրերն առավելապես պրագմատիկ էին համեմատած նախկին իշխանության հետ: Տնտեսական քաղաքականության մեջ նա առաջնորդվում էր «արդյո՞ք այն կաշխատի» մտեցմամբ, այլ ոչ թե «գաղափարախոսությունը դա է թեկադրում» կարգախոսով: Տնտեսության ազատականացման վերոհիշյալ բարեփոխումներն էին թերևս այն պատճառը, որ խորհրդային գրականության մեջ պարբերաբար շեշտվում էր այն միտքը, թե իբր «Սիրիայում 1966թ. փետրվարի 23-ի շարժման փուլում, երբ իշխանությունից հեռացվեց Բասսի աջ թևը, քաղաքական կուրսը կողմնորոշվեց դեպի սոցիալիստական սկզբունքները, սակայն 1970թ. նոյեմբերի 16-ի ուղղիչ շարժման սկզբից, երբ իշխանությունը եկավ զինվորական խմբավորումը Ասադի գլխավորությամբ և սկսեց անցկացնել առավել չափավոր կուրս սոցիալ-տնտեսական և քաղաքական ոլորտում, սոցիալիստական սկզբունքներով վերափոխումների գործընթացը դադարեց»: Այդուհանդերձ, ցանկանալով տնտեսության հիմնական լծակները պահել իշխանության ձեռքում՝ Ասադը արդյունահանող արդյունաբերության ոլորտը և ռազմավարական նշանակություն ունեցող բոլոր ձեռնարկությունները անհրաժեշտ էր համարում դնել պետական հսկողության տակ: Հարկ է նշել, որ տնտեսության մեջ պետական հատվածի դիրքերի ամրապնդման գործընթացները վարչակարգի կողմից որոշվում էր ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև որոշ չափով քաղաքական նկատառումներով: Եթե վարչակարգը տնտեսության ոլորտում ակտիվորեն համագործակցում էր նաև արևմտյան պետությունների հետ՝ լայնորեն կիրառելով արևմտյան փորձն ու տեխնոլոգիաները, քաղաքական աջակցությունը և ռազմատեխնիկական մատակարարումները ստանում էր գլխավորապես ԽՍՀՄ-ից:

Սիրիայի տնտեսության զարգացման վրա չափազանց մեծ ներգործություն ունեցավ նաև 1973թ. արաբա-իսրայելյան պատերազմից հետո արաբական հարուստ պետությունների կողմից Սիրիային հատկացվող ֆինանսական օգ-

նությունը, որը գրեթե անհնար էր նախորդ իշխանության ժամանակաշրջանում: Որպես Իսրայելի հետ ամփոփական առնակատման մեջ գտնվող արաբական երկիր՝ Սիրիային հատկացվող օգնությունը տարբեր մասշտաբներով շարունակվեց մինչև 80-ական թթ. վերջը: Այդուհանդերձ հարկ է փաստել, որ նշված գումարների առյուծի բաժինն ուղղվում էր ռազմական ծախսերին՝ կապված տարածաշրջանում ընդհանուր առմամբ անկայուն իրադրության և սպառնալիքների մեծացման հետ: Միայն Լիբանանում սիրիական զորքերի առկայությունը Սիրիայի համար արժենում էր օրական մոտ 250 հազ. ԱՄՆ դոլար, իսկ ըստ մեկ այլ աղբյուրի, Լիբանանում Սիրիայի ներկայության մեկ օրն արժեր մեկ մլն. դոլար:

ՄԱԻՆՅԱՆ ԲԵՆԻՍՄԱՆ (ՄԻ)

ԱԲԻԱԶԻԱՅԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԱՐՅԸ ՎՐԱՅ-ԱԲԻԱԶԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
(1917 ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ 1921 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐ)

Ռուսական կայսրության անկումից հետո նրա ամբողջ տարածքում, այդ թվում՝ Անդրկովկասում, լուծման հրատապ հարց է դառնում ազգային խնդիրը: Վրացական ազգային շարժման արմատական մասը հանդես եկավ երկրամասի վրացաբնակ շրջաններին քաղաքական ինքնորոշման իրավունք տալու օգտին: Դրան հակառակ՝ վրացական սոցիալ-դեմոկրատները բավարարվում էին Ռուսաստանի ապագա ենթադրյալ դաշնության կազմում տարածքային ինքնակառավարումով: Այս հարցում փոխզիջման տարբերակների որոնման փորձեր արվեցին միջկուսակցական խորհրդակցություններում: 1917թ. ապրիլի կեսին կուսակցությունները համաձայնության եկան ապագա Վրաստանի ենթադրյալ սահմանների շուրջ, նրա հնարավոր տարածքը բաժանելով «անվիճելի» և «վիճարկվող» շրջանների: Վերջիններիս ընդգրկումը պետք է որոշվեր տեղի բնակչության հանրաքվեի միջոցով: Այս առումով Աբխազիան դասվեց «վիճարկվող» շրջանների կարգում: Իր հերթին 1917 թ. նոյեմբերի 8-ն գումարված արխագական ժողովրդի համագումարը ստեղծեց Աբխազական ժողովրդական խորհուրդ (ԱԺԽ), որը, արտահայտելով համագումարի կամքը հանդես եկավ կազակների և Կովկասի լեռնականների Հարավ-Արևելյան Միությանը միանալու օգտին: Սակայն այս Միության կազմալուծման և Ռուսաստանի հարավում 1918 թ. սկզբի քաղաքացիական պատերազմի թեժացման պատճառով դա չիրականացավ: 1918 թ. փետրվարի 9-ին ԱԺԽ-ն և Վրացական Ազգային խորհուրդը համաձայնագիր կնքեցին, ուր սպված է, որ Աբխազիայի քաղաքական կառուցվածքի ապագա ձևը պետք է նշակվի այս միավորի հիմնադիր ժողովում՝ ելնելով ինքնորոշման սկզբունքից:

1918 թ. ապրիլի 8-ին Աբխազիայում հաստատվեցին խորհրդային կարգեր, սակայն առանց նրա պետականության վերականգման. որին ձգտումը լայն տարածում ուներ արխազական ժողովրդի շրջանակներում: Արդյունքում՝ արխազների մեծամասնությունը հրաժարվեց բուլշևիկների կուսակցությանը աջակցելուց: Մինչև խորհրդային կարգերի վերացումը, մայիսի 17-ը, Աբխազիան համարվում էր Խորհրդային Ռուսաստանի մասը: Նման եզրակացությունը ըլսում է այն փաստից, որ 1918 թ. ապրիլի 9-ին ԱՄԴ-Հ Ռուսաստանից անկախ հռչակելու պահին, Աբխազիայի տարածքն անդրկովկասյան նորաստեղծ կառավարության կողմից չէր վերահսկվում: Սեյմին ենթակա զինված ջոկատները, գրավելով Սոխումը, բուլյատրեցին բուլշևիկների կողմից բռնարգելված ԱՄԽ-ի գործունեությունը, սակայն լիակատար իշխանությունը անցավ վրացական ժողովրդական զվարդիայի հրամանատարությանը:

Թուրքական զորքերի ներխուժումը հանգեցրեց Անդրկովկասի ինքնաբերական տրոհմանը՝ անտեսելով վիճելի տարածքների նկատմամբ ենթարկվող պայմանավորվածությունների և հանրաքվեների հանգամանքը: 1918 թ. մայիսի 26-ին Վրաստանի անկախության հռչակման պահին Աբխազիան կառավարվում էր վրաց Ազգային խորհրդին ենթակա ռազմական ուժի կողմից: Ընդունելով Գերմանիայի հովանավորությունը, վրացական կառավարությունը նրանից ստացավ Աբխազիայի նկատմամբ իրավունքի ճանաչում: ԱՄԽ-ի պատվիրակությունը 1918 թ. հունիսի 8-ին և 11-ին Թիֆլիսում Վրաստանի կառավարության հետ ստորագրեց պայմանագրեր, համաձայն որոնց տեղի բուլշևիկների դեմ պայքարելու համար Աբխազիա ժամանեցին լրացուցիչ վրացական զորքեր: Այդ ամենով Վրաստանի իշխանությունները ճանաչեցին Աբխազիայի ինքնավար լայն իրավունքները, սակայն քաջ մնաց Վրաստան - Աբխազիա վերջնական փոխհարաբերությունների հարցը, որը, համաձայն պայմանագրերի, պետք է վճեր Աբխազիայի ենթադրվող Ազգային ժողովը: ԱՄԽ-ի ներսում՝ նրա վրացամետ և հակավրացական քեթրի միջև ծագած տարածայնությունները պատճառ դարձան 1918 թ. հոկտեմբերին նրա արձակման ու համամասնական ներկայացուցչությանը հանրնդիսնուր, հավասար, ուղղակի, գաղտնի քվեարկություն ենթադրող ընտրությունների նշանակման: Վերջապես, 1919 թ. փետրվարի 13-ն ընտրվեց ներկայացուցչական մարմին՝ Աբխազիայի Ժողովրդական Խորհուրդը (ԱՄԽ), որն էլ ձևավորեց տարածքային գործադիր իշխանություն՝ Կոմիսարիատ անվանումով: Ժամանակակիցների վկայությամբ այս երկու մարմինների լիազորությունները ձևական էին. իրական իշխանական լծակները գտնվում էին վրացական զինվորական հրամանատարության ձեռքում: Եվ չնայած ԱՄԽ-ն 1919 թ. մարտի 20-ին ընդունեց «Աբխազիայի ինքնավարության Ակտը», երկրամասի վերջնական իրավական վիճակը պետք է որոշեր Վրաստանի սահմանադրությունը և, որպես վերջինիս գումարելին՝ «Ինքնավար Աբխազիայի կանոնակարգը»: Նախագիծը քննարկվել է 1919 թ. սեպտեմբերից մինչև 1920 թ. նոյեմբեր Թիֆլիսում Վրաստանի Հիմնադիր համագումարը՝ ԱՄԽ-ի պատվիրակության մասնակցությամբ: Աբ-

խազիայի սոցիալ-դեմոկրատները, որոնք ԱՇԽ-ում մեծամասնություն էին, հանդես եկան մարզային ինքնակառավարման, իսկ ընդհանրությունը քաղաքական լայն ինքնավարության պահանջով: ԱՇԽ-ի լիազոր պատվիրակության կարծիքով, որը 1920 թ. նոյեմբերի 19-ն թիֆլիսում ստորագրել էր Վրաստանի կառավարության անունով ուղարկած հայտարարություն, այդ պահին Վրաստանի և Աբխազիայի հարաբերությունները օրինական չձևակերպվեցին, հետևապես, իրավաբանորեն պարտադիր չէին կողմերի համար: Աբխազիայի ինքնավարության անքակտելիության մասին Վրաստանի կառավարության հավաստիացումները հետո էին իրականությունից: Միայն 1921 թ. փետրվարին Խորհրդային Ռուսաստանի Կարմիր բանակի ներխուժման պայմաններում Վրաստանի Հիմնադիր համագումարը, հաստատեց «Ժրքնավար Աբխազիայի մասին կանոնակարգը»:

Ե՛վ վրաց, և՛ արխազ պատմաբանները միասնական են այն հարցում, որ ուշացած այս որոշումը այլևս ոչ մի նշանակություն չուներ և, հետևապես, չէր կարող իրական ուժ ունենալ:

ՄԱԼԵՔ-ՄԱՀԱՍՏԱԳԻ ՄԱՀԱՍՏԱԳ. (ԵՊՀ)

ԱՇԽԱՐՀԻ ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՆՃԱՆԱԲԱՆԱԿԱՆ
ԶՐԱԳԱՇՏԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐՆ ԸՍՏ ԵԶՆԻԿ ԿՈՂՔԱՅՈՒ

Հայ մեծամուտ փիլիսոփա Եզնիկ Կողբացին իր «Եղծ աղանդոց» երկի երկրորդ մասը հատկացրել է զրադաշտական կրոնի հերքմանը, որը շատ է կարևորվում թե՛ ազգագրության, թե՛ բանահյուսության և թե՛ զրադաշտագիտության բնագավառներում: Զրադաշտության վերաբերյալ առասպելներն ու դիցաբանական մոտիվները առանցքային դեր են ստանձնում հինգերորդ դարի հայ հեղինակի քննադատական գաղափարների համար:

Ստորև կդիտարկենք Եզնիկի հաղորդած առասպելներից երկուսը, որոնք պարունակում են կարևոր պաշտամունքային տարրեր և պատմա-բանահյուսական կարևոր նշանակություն ունեն: Եզնիկը մալս մեջբերում է աշխարհի արարչագործության իրանական առասպելը՝ կապված Զրվանի, բարի ու չար սկզբունքներ մարմնավորող նրա զույգ զավակներ Որմիզդի և Արիմանի ծննդյան և գործունեության հետ: Ըստ այդ առասպելի՝ աշխարհում ժամանակին ոչինչ գոյություն չի ունեցել Զրվանից բացի, որի անունը նշանակել է «բախտ» կամ «փառք»:

Միաստվածությունը Եզնիկի փիլիսոփայության հիմնական գաղափարն է: Նա արտահայտելով վերոհիշյալ առասպելը, վերլուծական ու իմաստասիրական սուր հայացքներով քննադատում ու հերքում է զրադաշտական երկվությունը: Ժամանակակից հայ փիլիսոփա Հ. Գաբրիելյանը Եզնիկի փիլիսոփայության մասին գրում է. «Եթե խոսքը վերաբերում է զրադաշտության քննադատու-

յանը, Եզնիկը բավականաչափ հետևողական է և համառ, բայց երբ հարկ է լինում բացահայտել քրիստոնեական դոգմաների բուն էությունը, նույն Եզնիկը ցուցաբերում է զարմանալի անհետևողականություն և մտքի տկարություն: ... Եզնիկն իր էությունը երկփեղկված է. նա, մի կողմից, գիտնական է, երևույթների օբյեկտիվ պատճառներն ու օրինաչափություններն ուսումնասիրող, մյուս կողմից էլ՝ կրոնավոր, եկեղեցու սպասավոր, և նրա ցուցաբերած բոլոր հակասությունները Եզնիկ-գիտնականի պայքարի արտահայտություններ են Եզնիկ-հոգևորականի հետ»:

«Չարի և բարու հարցը,- գրում է Հ. Գաբրիելյանը,- հեթանոսական կրոնների, հատկապես՝ զրադաշտության մեջ բարոյական նորմերի նշանակություն չունեն, դա պարզապես սկզբնագոյի հարց էր: Ուստի սխալ է նրա այդ բայլին գուտ կրոնական բնույթ տալ»:

Պետք է նշել, որ այժմ էլ զրադաշտության բարոյական նորմերի նշանաբանը՝ «բարի միտք, բարի խոսք, բարի վարք», դեռ հնչում է զրադաշտական օջախներում: Հիշված խոսքը Ավեստայի բոլոր էջերում կրկնվում է և շեշտվում. մաքուր ենք մկտությունը այս երեք լուսավոր գոհարների շրջանակներում է տեղադրում: Ջրադաշտն ինքն էլ իր հեղինակած գաթաներում, ինչպես նաև հետագայում ամբողջ Ավեստայում այս երեք մաղբանքը հղում է իր բոլոր հետևողներին:

Եզնիկը հաղորդում է զրադաշտական վախճանաբանական առասպելի մի տարբերակ, որը, ինչպես նկատում է ակադ. Ս. Հարությունյանը, փոքր ի շատե համապատասխանում է Ավեստայի յաշտերից հայտնի վախճանաբանական մոտիվներին. «Երբ Ռամիզդի որդին մեռնում էր, իր սերմը մի աղբյուրի մեջ գցեց, և (աշխարհի) վախճանին մոտ այն սերմից մի կույս է ծնվելու, իսկ նրանից մի որդի լինելով ջարդելու է Աիրիմանի գորբերից շատերին. և նրա նման երկուն էլ, նույն ձևով ծնվելով, կտորելու ու ոչնչացնելու են նրա գորբերը»:

Եզնիկն այստեղ հիշատակում է Խորաշեռի անվանումը և նրան համարում է Ռամիզդի որդին, մինչդեռ, ըստ Ավեստայի, նա Ջրադաշտ մարգարեի անդրանիկ որդին՝ զրադաշտական առաջին փրկիչը՝ uxšyat. ereta «սուրբ օրենքի մշակողն» է, որը միջին պարսկական բնագրերում հանդիպում է Xoršetar կամ Hušetar, պազենդերեն. Hušedar ձևով:

Ըստ զրադաշտության՝ Ջրադաշտ մարգարեի երեք որդիները՝ Հուշիդերը, Հուշիդերմահը (պազ. Hušēdarmah = միջին պարս. Xoršēdarmah) և Սուշյանքը, հազար տարվա տարբերությամբ ծնվում և արդարություն են տարածում աշխարհում: Սուշյանքը, որը Ջրադաշտի երրորդ որդին է, Անուրամագդայի վերջին ստեղծագործությունն է համարվում:

Լ.-Ֆ. ՖԵՐԻԵՐ-ՍՈՎԸԵՖԻ ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Եվրոպական երկրների՝ Արևելքի հետ ունեցած դիվանագիտական-քաղաքական առնչությունները սկսվեցին 11-րդ դարի վերջից. այդ հարաբերությունների սկզբնավորումը սերտորեն կապված էր խաչակրաց արշավանքների հետ: Մինչ այդ եվրոպական երկրներն Արևելքի երկրների հետ ծավալել էին աշխույժ առևտրական հարաբերություններ: Սակայն Եվրոպական երկրների ուշադրությունը Արևելքի նկատմամբ մեծացավ հատկապես 13-րդ դարում՝ կապված առևտրի զարգացման և առևտրական կապիտալի սկզբնական կուտակման հետ: Հաճախակի դարձան եվրոպացիների այցելությունները դեպի Արևելք, այդ այցելությունները պայմանավորված էին ինչպես քաղաքական, այնպես էլ առևտրական շահերով:

Արևելքում եղած եվրոպացիներն այդ երկրների մասին թողել են բազմաթույք հաղորդումներ և տեղեկություններ՝ դիվանագիտական զեկուցագրեր, ուղեգրություններ, հուշեր, դիտադրություններ, առևտրական պայմանագրեր, պատմական երկեր և այլն: Եվրոպացի հեղինակների մոտ կան շատ օգտաշատ ու երբեմն էլ՝ բացառիկ արժեք ունեցող նյութեր. դրանք վերաբերում են Արևելքի ժողովուրդների քաղաքական, հասարակական-տնտեսական պատմությանը, Եվրոպայի հետ նրանց ունեցած տարաբնույթ հարաբերություններին: Սակայն, ինչպես իրավացիորեն մշել են հետազոտողները (Ա.Ա. Պոլիսկոտով, Ջ.Ս. Յանպոլսկի, Մ.Կ. Ջուլյան)՝ եվրոպական այս աղբյուրներին պետք է քննադատաբար մոտենալ, որովհետև գալով Արևելք՝ եվրոպացի հեղինակներից շատերն իրենց պետությունների որոշակի համձնարարություններն են կատարել և որոշակի դիրքերից նկարագրել տեղի երկրների կացությունը:

Մույն զեկուցման մեջ ներկայացվում է 18-րդ դարի վերջին քառորդին Արևելքում ճանապարհորդած ֆրանսիացի հեղինակ Լուի-Ֆրանսուա Ֆերիեր-Սովբեֆի ուղեգրությունը: Ֆրանսացի քաղաքական գործիչ և դիվանագետ Ֆերիեր-Սովբեֆը Լյուդովիկոս 16-րդի կառավարության համձնարարությամբ ուղարկվում է Կ.Պոլիս և այստեղից երկու անգամ (1784-1785, 1787 թթ.) մեկնում է Իրան՝ Սպահան: Արևելքում նրա զունվելը համընկավ ռուս-ֆրանսիական հարաբերությունների սրման ժամանակաշրջանի հետ և Ֆերիեր-Սովբեֆը իրանական կառավարությանը խորհուրդ էր տալիս հնարավորության սահմաններում թույլ չտալ Ռուսաստանին ներթափանցել Անդրկովկաս:

Ուղեգրության մեջ Ֆերիեր-Սովբեֆը տեղեկություններ է հաղորդում Երզրումի, Տրապիզոնի, Կարսի, Բայազետի, Երևանի, Նախիջևանի, Նոր Ջուղայի, Անտիոքի, Բիրի (Բիրեջիկ), Ուրֆայի, Մերդինի, Դիարբեքրի, Թրքասի, Սվազի, Ջնյուտնիայի և այլ բնակավայրերի, Վրաստանի, Դաղստանի, Շիրվանի (Պոլիսկոտովը կասկածանքով է վերաբերվում Ֆերիեր-Սովբեֆի՝ Կովկասում լինելու հանգամանքին), Ատրպատականի, Իրանի քաղաքական պատմության՝

հատկապես իրեն ժամանակակից շահերի՝ Ալի Մուրադ խանի և Աղա Մուհամմեդ խանի, ռուս-թուրքական 1787-1791թթ. պատերազմի և այլ հարակից հարցերի մասին:

Ֆերիեր-Սովբեֆի ուղեգրությունը («Mémoires historiques, politiques et géographiques des voyages du comte de Ferrie-re-Sauveboeuf, faits en Turquie, en Perse et en Arabie, depuis 1782 jusqu'en 1789 etc.») առաջին անգամ հրատարակվել է 1790թ. Մասսաչուսեթսում, 2 հատորով: 1807թ. վերահրատարակվել է Փարիզում («Voyages faits en Turquie, en Perse et en Arabie», 2 vol.):

ՄԱՂԱՍԱՆ ԱՐՏԱԿ (ՊԻ)

ԴԻԶԱԿ ԳԱՎԱՌԻ ՏԻՐԱԿԱԼ ՄԵԼԻԶ-ԵԳԱՆՅԱՆՆԵՐԻ ՏՈՂՄԱԾԱՌԸ

Հայոց պատմությունը հարուստ է իշխանական բազմաթիվ տոհմերով: Մելիքական տների ներկայացուցիչները մի քանի հարյուրամյակ շարունակ (XVII դարի սկզբից մինչև XIX դարի առաջին քառորդը) հանդիսացել են ազգային-ազատագրական պայքարի դրոշակակիրներ: Հատկապես անվանի են եղել Գյուլիստանի Մելիք-Բեգլարյանների, Ջրաբերդի Մելիք-Իսրայելյանների, Խաչենի Հասան-Ջալալյանների, Գեղարքունիքի և Վարանդայի Մելիք-Շահնազարյանների, Դիզակի Մելիք-Եզանյանների (Մելիք-Ավանյաններ) ու Երևանի Մելիք-Աղամալյանների տոհմերը: Մեր ուսումնասիրության առարկա է դարձել Մելիք-Եզանյանների ազգաբանությունը և տոհմաձառը:

Հիմնական շեշտը դրել ենք առավել անվանի մելիքների ներկայացման վրա, իսկ մյուսներին և նրանց ընտանիքների կրտսեր անդամներին, որոնք կոչվել են բեկեր, պարզապես թվարկել ենք: Հարկ ենք համարում նշել նաև, որ շատ դեպքերում ժամանակը ջնջել է ամեն հիշատակ և հիշողություն, իսկ ժողովրդական ավանդազրույցներում, հաճախ, մեկի կատարած գործը վերագրվում է մյուսին, որպես կանոն, առավել հեղինակավորին և ուսումնասիրողների համար դժվարանում է ճշմարտության բացահայտումը:

Կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել և ամբողջացրել ենք Դիզակի Մելիք-Եզանյանների տոհմաձառը՝ սկսած XVIII դարի սկզբից մինչև XIX դարի կեսերը: Ներկայացրել ենք այս տոհմի բաժանումը երկու մասի՝ քրիստոնյա Մելիք-Եզանյանների և մահմեդական Մելիք-Ասլանովների, ինչպես նաև այդ ճյուղերի տեղաշարժերը:

ԲՐԴԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԹՈՒՐԸ – ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՆԹԱՏԵՔՍՏՈՒՄ

Թուրքիայի և Սիրիայի միջև առկա քաղաքական հակասությունները բավականին խոր արմատներ ունեն, և նրանց միջպետական հարաբերությունների վայրիվերումները պատմական մոր իրողություն չեն: Թուրք-սիրիական հարաբերությունները մշապես եղել և մնում են արևելագետների ուշադրության կենտրոնում՝ ենթարկվելով համապարփակ վերլուծության:

Քրդական խնդիրը այս երկրների միջպետական հարաբերություններում համեմատաբար մոր երևույթ է. 1960-ական թվականներից քրդական հարցը դարձել է նրանց միջև երբեմն մերձեցման, երբեմն էլ, ընդհակառակը, առճակատման պատճառ: Քաղաքական լուրջ հակասություններ ունեցող Անկարան և Դամասկոսը պաշտոնական մակարդակում միշտ հայտարարել են քրդական պետություն ստեղծելու վերաբերյալ իրենց հստակ բացասական դիրքորոշումը:

Քրդական գործոնը առավել հաճախ սկսեց շահարկվել հատկապես 1980-90թթ., երբ թուրք-խորալեական հարաբերությունների զարգացման ֆոնի վրա նկատվում էր թուրք-սիրիական երկխոսության ակնհայտ սառեցում:

1980-ական թվականներից Սիրիան, քաղաքական ապաստարան տալով Քրդական աշխատավորական կուսակցության (PKK) առաջնորդ Աբդուլահ Օջալանին, աջակցում և հովանավորում էր այդ կուսակցության գործունեությունը և զինված անջատողական պայքարը Թուրքիայի դեմ:

Թուրք-սիրիական հարաբերություններում լուրջ միջադեպ արձանագրվեց 1998թ. հոկտեմբերին, երբ դիվանագիտական ճանապարհով չկարողանալով ստիպել Սիրիային դադարեցնել աջակցությունը PKK-ին՝ Թուրքիան սպառնաց պատերազմով: Դամասկոսը խուսափելով վերահաս պատերազմի սպառնալիքից և միջազգային ճնշումներից՝ իր տարածքից վտարեց Օջալանին և փակեց PKK ռազմական հենակետերը: Սակայն դժվար է ասել, թե Սիրիան կարողացավ PKK օգտագործել որպես խաղաքարտ Թուրքիայի դեմ, եթե հաշվի առնենք սեփական տարածքում քուրդ ազգաբնակչության և քրդական խնդրի առկայության փաստը:

1999թ. Թուրքիայի և Սիրիայի միջև ստորագրվեց համաձայնագիր, ըստ որի Սիրիան պարտավորվեց չսատարել քրդերի անջատողական շարժումները Թուրքիայի դեմ, որի արդյունքում PKK զրկվեց Մերձավոր Արևելքում միակ աջակցից, կորցրեց իր քաղաքական հենարանը, ինչը և դարձավ կուսակցության անկման ու ներքին պառակտման պատճառներից մեկը:

Չնայած որ քրդական խնդիրը միակ և ամենակարգաբան հակասությունը չէ երկու երկրների միջև, այնուամենայնիվ, պետք է փաստել, որ Սիրիայից Օջալանի արտաքսումից հետո թուրք-սիրիական հարաբերություններում

դրական տեղաշարժ արձանագրվեց, որ ավելի որոշակի դարձավ Բաշար Ասադի նախագահության տարիներին:

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ (ԵՊՀ)

**ՄԵՔԶԱՅԻ ՇԵՐԻՖ ՈՒ ԷՄԻՐ ԱԼ ՀՈՒՍԵՅՆ ԻԲՆ ԱԼԻ ՌՒԴԵՐՉՆԵՐԸ
ԵՎ ԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՄԲ**

Արաբ ժողովուրդը հայոց ցեղասպանության տարիներին հոգատար և կարեկից վերաբերմունք է տածել հայ տարագիրների նկատմամբ: Հայ և արաբ ժողովուրդները կարողացան բարեկամական հարաբերություններ հաստատել, որին նպաստեց այն իրողությունը, որ երկու ժողովուրդներն էլ գիտակցում էին, որ իրենք նույն ճակատագրի բախտակիցներն են: Արաբ ժողովրդի բարեկամական վերաբերմունքն ավելի հաստատուն դարձավ և նրանց օգնությունն ավելի պաշտոնական բնույթ ստացավ Մեքքայի շերիֆ ու էմիր Հուսեյն իբն Ալիի 1916 թ. հունիսի 26-ի և 1917 թ. մարտի հայտնի ուղերձներից հետո: Այս ուղերձներով նա դիմում է ողջ մահմեդական աշխարհին: Խոսելով թուրքական վայրագությունների մասին՝ նա անդրադառնում է հայ ժողովրդին, որն անօթևան է մնացել Միջագետքի անապատներում և կոչ է անում բարյացակամ ու հոգատար լինել հայ ազգի նկատմամբ, հաստատակամորեն պահանջում է արաբական տեղական իշխանավորներից իրենց մահանգներում հայտնված հայ տարագրյալներին պաշտպանել, հովանավորել և ամեն տեսակ մարդկային օգնություն ցույց տալ: Հուսեյնի ուղերձը ստանում են բոլոր տեղական կառավարիչները, աշիրաքների առաջնորդները, հոգևոր այրերը. «Առաջնորդվել իսլամի պատվիրաններով և նրա օրենքներով, պաշտպանել նրանց այնպես, ինչպես պաշտպանում եք ձեր որդիներին, ձեր ունեցվածքը, որովհետև նրանք մահմեդականների հովանավորություն տակ են գտնվում (զինմի են համարվում)»: Շերիֆ Հուսեյնը հայտարարում է, որ հայ ժողովուրդը և նույն վիճակի մեջ գտնվող մյուս ժողովուրդները նույնպես իրենց դաշնակիցներն են, ինչպես լավ, այնպես էլ վատ օրերի համար:

Շերիֆի ուղերձները լայն արձագանք են գտել արաբական աշխարհում: Աշիրաքների առաջնորդներն ու տեղական իշխանությունները սրբությամբ են կատարել իրենց հոգևոր առաջնորդի հրահանգը: Դժվար կլինեք ասել, թե ինչ կպատահեր հայ տարագրյալներին, եթե չլինեին Մեքքայի շերիֆի ուղերձները: Չմայած այդ մասին քիչ է խոսվել, այնուամենայնիվ վերջիններս կարևոր սկզբնաղբյուր ու փաստաթուղթ են հայոց ցեղասպանության պատմության համար:

**ՏԱՐՈՆԻ ԻՆՆԱԿՆՅԱ ՎԱՅՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԾԱԳՄԱՆ
ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ**

Արևելագիտության մեջ արդարացիորեն կարծիքներ են հայտնվել, որ Հովհան Մամիկոնյանի «Պատմություն Տարոնի» երկում հիշատակված «Իննակնայ» վայրի հետ կապվող Գիսիանե և Դեմետր աստվածների պաշտամունքի հիմքում Վահագնն ու Անահիտն են (Արև, Լուսին) կանգնած (Գր. Խալաթյան, Ս. Հմայակյան և այլք): Դեմետրի անունը Մ. Խ. Աբեղյանը կապել է հացագործության հովանավոր հունական Դեմետրա դիցուհու հետ, որի աստղային համարժեքը հույները համարում էին Կույս համաստեղությունը: Կենդանաշրջանի շուներական համաստեղությունների շարքում Կույսն արձանագրված է AB.SIN գրությամբ, ուր ակնհայտ է միջազետրյան SIN Լուսնի աստվածության անունը: Հատկանշական է, որ Կույսի ամենապայծառ աստղ «սպիկան» լատիներենում «խասկ» է նշանակել: Դեմետրայի անվան հիմքում ընկած է հունարեն «Վետրոն»՝ չափ հասկացությունը, իսկ հնում լուսինը տոմարական չափումների միջոց է դիտվել:

Աստղային երկնքում Կույսի ամմիջական հարևանությամբ է գտնվում Գեւաը կամ Բերենիկեի գեւը, որի անվանակոչման հիմքը պատմական ենթատեքստ ունի՝ կապված Զ. ա. III դարի եգիպտական քաղաքի Բերենիկեի հետ: Սակայն Գեսին շրջապատած Կույս, Եզնարած և Այունի համաստեղությունների՝ շատ ավելի վաղ ժամանակներում հայտնի լինելը բույլ է տալիս պնդել, որ այս աստեղտան անունն էլ ավելի վաղ է ծագել, իսկ նրա մասին հյուսված առասպելը մեզ չի հասել: Գեսի հետ կարող է առնչվել Տարոնի Գիսիանե-Արև աստծո աստեղությունը: Գեւը՝ վարսերն առասպելաբանորեն Արևի ճառագայթներն են: Գիսավոր էր նաև Գիսիանե աստծուն փոխարինելու եկած ս. Կարապետը, որը կուրացնում էր քջամախների աչքերը՝ ինչպես Գիսիանեն:

Կարապետի անունը Ն. Յա. Մառը բխեցրել է Դեմետրի և Գիսիանեի առասպելության աղերսվող Կիևի հիմնադրման մասին ռուսական ավանդության 3 եղբայրներ Կիևի, Շչեկի և Խորիվի բույր Լեբեդի՝ կարապի անունից: Սակայն Կարապ համաստեղությունը, որը երկնքի հյուսիսային կիսագնդում շատ հեռու չէ Կույսից և Գեսից, ամենայն հավանականությամբ, հայոց մեջ Աստղիկ դիցուհու աստեղտունն է համարվել: Ազաբանգեղոսի հաղորդմամբ, Ջարքե լեռան սնարին, ուր ըստ Հովհան Մամիկոնյանի, Դեմետրի և Գիսիանեի տաճարներն էին, Վահագնի, Անահիտի և Աստղիկի քաղիններն էին գտնվում: Հունական առասպելը Կարապի մեջ է տեսնում Էվրիդիկեի սիրեցյալ, տաղերգու Օրփեոսին, ինչպես հայոց մեջ Վահագնն էր Աստղիկի տարվածուն: Վահագն-Գիսիանեի փոխարինելու եկած Սուրբ Կարապետն էլ գուսանների հովանավորի համբավ ուներ:

Դեմետրի և Գիսիանիի 3 որդիների՝ Կուռտի, Մեղտեսի և Հռոի անուններն արձանագրված են Մեերի դռան քիսայնական դիցացանկում՝ Մելարդի, Աբբիմի, Կուեռա հերթականությամբ: Աստղային երկնքում իրար են հաջորդում Կենդանաշրջանում՝ Կշեռը և Կարիճը, որոնց միջև՝ Հարավային կիսագնդում Կենտավոսն է: Բանագիտական նյութի քննությունը ցույց է տալիս, որ վիշապի պաշտամունքին առնչվող Կուեռան Կարիճն է, Աբբիմին՝ 10000 ձիերի և արքյուրների հետ կապված Կենտավոսը, իսկ Մելարդին՝ Կշեռը, որը հայկական հնագույն անշարժ տոմարի համաձայն, Հռոի ամսին է բաժին ընկնում: Ք. ա. շուրջ 2000 թվականից սկսած, Կշեռքում է գտնվել աշմանային օրահավասարի կետը, որտեղ 3 եղբայրների մասին հեքիաթների ավանդական սյուժեների համաձայն, Մուֆ՝ հանդերձյալ աշխարհ է ընկնում 3-րդ եղբայրը: Հանդերձյալ աշխարհն անվանվում է Անտակ, որը հին հայոց աշխարհայացքում ստորերկրայքի ամենախոր տեղն է: Ուստի, անհավանական չէ, որ Հովհան Մամիկոնյանն իրար է խառնել «աստկաց» և «հնդկաց» բառերը՝ Տարոնի աստվածներից հնդիկներ հորջորջելով: Իննականյա վայրն էլ նա անվանում է «դրունք դժխտց», «դրունք մահու», այսինքն՝ հանդերձյալ աշխարհի դռներ:

Համաստեղությունների և քիսայնական դիցանունների հերթականության կարգը բոլր է տալիս լեզվաբանական հիմքի վրա շարունակել վերծանումները Մեերի դռան Էլիպուրի դիցանունից մինչև Յանապա ընկած հատվածում: Այսպես, Էլիպուրին Չոհարանն է: Կարդացվել է Էդիբուր (Աստված բուրվառ-բուրանոց): Միլիան և Դի(ե)դուաիին երկրագործության հետ առնչվող «սպիկա» աստղը (Դեմետրան) և Եզնարածն են: «Միլիա»-ն կարդացվել է «Միլյա», որից ունենք «սիդիզն»՝ ազնիվ այլուրի և հացի գաղափարը: Յանապան Առյուծն է, որի հետ է առնչվում հայերեն «սպշոպ» բառն՝ ահի, վտանգի, շփոթի և իրարանցման իմաստով:

ՄԱՐՏՈՅԱՆ ԹԵՎՄԻՆԵ (ԱԻ)

ԿԱՐՄԵԼՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԹԱՓՈՒՆՅՈՒՄՆ ԻՐԱՆ

Կարմեյան միաբանությունը հիմնադրվել է 1155թ. Բարտող անունով խաչակիր քահանայի կողմից: Կարմեյանները հայտնի են նաև ճերմակ վանականներ անվամբ՝ պայմանավորված ճերմակ քիկնոցով, որ կրում են իրենց շագանակագույն զգեստի վրա:

Միաբանության անվանումը ծագել է Կարմել լեռան անունից, որին երկըրպագում էին Իսրայելում, Ք.ա. 878-850թ.թ., Ահաբ թագավորի օրոք. հետագայում լեռը դարձավ ճգնավորների ու Աստծու մարդկանց հավաքատեղի: Հանաձայն Երուսաղեմի Սուրբ Ալբերտ հայրապետի կանոնադրության, վանական-

ների հիմնական և կարևորագույն նպատակը հոգու խորհրդավոր միավորումն էր Աստծու հետ՝ սիրով և մտքումնի հայեցությամբ:

Շնորհիվ կենտրոնացված կառավարման և ինքնատիպ կարգապահության, միաբանությունը վերածվեց կաթոլիկ եկեղեցու գեների՝ ի դեմս պապերի, որոնք հավատարիմ էին իրենց «ամսխալականության» դոգմային: Կաթոլիկ եկեղեցու համոզմամբ՝ պապը «Աստծու փոխանորդն է երկրի վրա», ուստի և՛ «ամսխալական»:

Հենվելով Արևելքի երկրներ «խաղաղ» ճանապարհով ներքափանցելու իր մշակած ծրագրին՝ Կլեմենտ VIII պապը (1536-1605թ.թ) հավատի միաբանության ապագայի համար վճռորոշ համարեց Կարմեյանների՝ դեպի Իրան մեկնելու անհրաժեշտությունը, որը մեծ խանդավառությամբ ընդունվեց միաբանների կողմից:

«Շշմարիտ կրոնի լույսը սփռելու» նպատակով նախապես ուսումնասիրվում էր նպատակակետ ընտրված երկրի քաղաքական կարգը, տնտեսական դրությունը, կենցաղը և այլն: Կարմեյաններն ակնկալվող հաջողության հասան Իրաքում, Մերձավոր Արևելքում, ներքափանցեցին ընդհուպ մինչև Հընդկաստան, Չինաստան և Ամերիկա:

Կարմեյան միաբանության առաքելությունն Իրան համընկավ Սեֆյան արքայատոհմի շահ Աբբաս I-ի գահակալության հետ (1587-1629թ.թ.):

Ինչ վերաբերում է Իրանին, ապա Կլեմենտ VIII-ը մտադիր էր բարեկամական հարաբերություններ զարգացնել պարսից շահի հետ:

Թեպետ Հռոմի պապերի և պարսից շահերի միջև արդեն գոյություն ունեին որոշակի հարաբերություններ, սակայն, ըստ մեր դիտարկումների, Կլեմենտ VIII պապի օրոք դրանք փոխադարձաբար ակտիվ բնույթ էին կրում: Հեռատես պապն ընտրել էր բարեպատեհ ժամանակահատված արտաքին քաղաքականության խաղաղ ուղով, այն է՝ դիվանագիտորեն աջակցելու քրիստոնյաներին ընդդեմ Թուրքիայի:

«Բարեկամանալով իր թշնամու թշնամու հետ»՝ շահն ամենայն սիրալիությամբ էր ընդունում հատկապես պապին, քանզի ավելի քան վստահ էր, որ վերջինս շահագրգռված է Թուրքիայի կործանումով կամ առնվազն ընդարձակմանը խոչընդոտելով. «Եթե քրիստոնյա թագավորները պատերազմ սկսեն Թուրքերի դեմ և նրանցից գրավեն գեթ մի այժ, ապա ես Կարմեյան հայրերին և՛ տեղ կհատկացնեմ, և՛ եկեղեցի. օրևան կտամ, եթե նույնիսկ դա լինի իմ սեփական տունը կամ գուլխը ...»:

«Կարմեյան միաբանության տարեգրությունն Իրանում և պապական քարոզչությունը XVII-XVIII դարերում» արժեքավոր աշխատությունը, որի հեղինակն անհայտ է, վկայում է աշխույժ մամակագրական կապերի մասին եվրոպական միապետների և, մասնավորապես, Հռոմի պապերի և պարսից շահերի միջև: Կլեմենտ VIII պապի համար Իրանի կաթոլիկացումը նույնքան ցանկալի էր, որքան Եվրոպայում քրիստոնյաների նկատմամբ բուրքական սպառնալիքի վերացումը:

1604թ. առաջին Կարմեյանները հայր Պոլ Սայմընի ղեկավարությամբ ուղևորվեցին Իրան և հաստատվեցին Սպահանում 1607թ.:

Կլեմենտ VIII պապի՝ պարսից շահին հղած մամակն իրագեկում է. «Կարմեյան միաբանությունից ընտրել ենք երեք բարեպաշտ և ուսյալ քահանա, որոնց ուղարկում են Ձեզ՝ Պոլ Սայմըն, Ջոն Թադդեուս, Վինսենտ...»:

Հարկ է նշել, որ այդ ժամանակահատվածում Իրանում, մասնավորապես Սպահանում, իրենց գործունեությունն էին իրականացնում նաև Ավգուստինյան միաբանները, ուստի Կլեմենտ VIII պապը, հաշվի առնելով այդ հանգամանքը, կարևորեց ուղերձ հղել՝ վերջիններիս խորհուրդ տալով ներդաշնակություն պահպանել Կարմեյան պատվիրակության նկատմամբ:

Աճերկքայորեն կարելի է պնդել, որ Կարմեյան միաբանության առաքելությունն Իրան, ըստ էության, թելադրված էր քաղաքական նպատակներով, որոնք Հռոմի կաթոլիկ եկեղեցին ձգտում էր իրականացնել կրոնաբարեգործական շղարշի ներքո՝ օգտագործելով Թուրքիայի հարևանին ընդդեմ թուրքերի:

Իսկ Իրանի բարյացկամ վերաբերմունքը և գրկաբաց ընդունելությունը պայմանավորված էր իր իսկ կենսական շահերով: Շահեր, որոնք համընկնում էին և նպաստում, որպեսզի Հռոմի և հեռավոր Սպահանի միջև ձևավորվեր համագործակցություն, որը, բնականաբար, չէր կարող վտանգ ներկայացնել Իրանի նման մի երկրի համար, որի շահը հստակ պատկերացնում էր իր գործունեության առաջիկա խնդիրները: Այդ մասին քաջ գիտեին Իրանում տեղակայված միաբանները և պարբերաբար իրագեկում էին Հռոմին:

ՄԻՆԱՍՅԱՆ ԼԵՎՈՆ (ՄԻ)

1973 ԹՎԱԿԱՆԻ ԱՐԱԲ-ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ

1973 թ. հոկտեմբերի 6-ին սկսվեց արաբ-իսրայելական պատերազմը: Մեկ ամսվա ընթացքում Իսրայելը կորցրեց օդուժի գրեթե կեսը և շուրջ հազար միավոր զրահատեխնիկա: 1967թ. Իսրայելի հաջողությունները չկրկնվեցին: Հոկտեմբերի կեսերին ԱՄՆ-ը սկսեց զենքի զանգվածային տեղափոխում Իսրայել: Իրենց հերթին Արաբական երկրները դիմեցին նավթային ենթարգոյի՝ նվազեցնելով նավթի առաքումը ԱՄՆ և արևմտյան Եվրոպա: 1973թ. դեկտեմբերի 21-ին ԱՄՆ-ի ջանքերով գումարվեց Ժնևի կոնֆերանսը, որտեղ համաձայնություն ձեռք բերվեց եգիպտական և իսրայելական զորքերի բաժանման և երկու կողմերի միջև բանակցություններ շարունակելու վերաբերյալ: Չնայած որոշ հաջողությունների՝ արաբական երկրները չհասան հաղթանակի:

1973-ի արաբ-իսրայելական պատերազմից հետո թե՛ արաբները, թե՛ հրեաները հայտնվեցին որակապես նոր քաղաքական իրավիճակում: Իսրայելական քաղաքական գործիչների մեծ մասը չէր ըմբռնում կամ չէր ցանկանում ըմբռնել,

որ արաբների հետ հակամարտության ավարտը ուղիղ համեմատական է պաղեստինյան խնդրի լուծման, այսինքն՝ պաղեստինյան պետության ստեղծման հետ: Առանց դրա լուծման հնարավոր չէր հասնել խաղաղության հաստատմանը Մերձավոր Արևելքում և ապահովել երկրի ներքին քաղաքական ու տարածաշրջանային կայունությունը:

Սակայն իսրայելական քաղաքական վերնախավը պատրաստ չէր իր դիրքերի կարդիոնալ փոփոխմանը պաղեստինցիների և, ընդհանրապես, խաղաղ գործընթացի նկատմամբ: Պատերազմից հետո, Իսրայելի կառավարող օղակների հիմնական ջանքերը նպատակաուղղված էին ազգային զինված ուժերի վերակազմավորմանն ու վերազինմանը, ինչը հետագայում կբացառեր որևէ անակնկալ: Հրեական սփյուռքի ամսահամաձևփակ օգնությունը, ԱՄՆ-ի տնտեսական և ռազմական օժանդակությունը, նպաստում էին իսրայելական քաղաքական մտքի հետագա ռազմականացմանը:

Այնուամենայնիվ, 1975-76թթ. սկսվեց երկխոսություն Իսրայելի որոշակի քաղաքական շրջանակների ու ՊԱԿ-ի միջև՝ երկուստեք ճանաչման և ուղղակի բանակցությունների սկսման պայմանների շուրջ: Նախաձեռնության հեղինակներն էին ՊԱԿ-ի ներակայացուցիչներ Ս. Քամանին, Ս. Ջիրջիան, Ի. Սարտաուին և այլոք, որոնք առաջ քաշեցին նոր խաղաղ ռազմավարություն, որը նախատեսում էր Պաղեստինյան պետության և Իսրայելի գոյությունը կողք-կողքի: Վերջիններս կապեր հաստատեցին իսրայելցի մի շարք գործիչների՝ Լ. Էլիավի, Մ. Պելեդի, Յ. Արնոնի և այլոց հետ:

Միաժամանակ Իսրայելի քաղաքական շրջանակներում լայն քննարկման մեջ էր այսպես կոչված “Յարիվա-Շենտովի բանաձևը”, որում պատրաստակամություն էր հայտնվում պաղեստինցիների ցանկացած խնդիր հետ բանակցությունների հետ մտելը, որը կճանաչեր Իսրայելի գոյության իրավունքը և կդատապարտեր ահաբեկչությունը: Այս բանաձևը արժանացավ քաղաքական լայն շրջանակների հավանությանը: “Մապամ” (Միացյալ աշխատանքային կուսակցություն) կուսակցությունը այս բանաձևը ընդունեց որպես պաշտոնական քաղաքականություն և շնայած ավելի հակված լինելով պաղեստինա-հորդանանյան պետության ստեղծման գաղափարին, հայատարարեց, որ պատրաստ է ճանաչել պաղեստինյան ինքնավարությունը արևմտյան ափում՝ որպես պետական միավորում: Իսրայելա-պաղեստինյան խաղաղության խորհուրդը, որը ղեկավարում էր Է. Էլիզարը, կոչ էր անում ՊԱԿ-ի հետ ուղղակի բանակցությունների: Խորհուրդը սերտ կապեր հաստատեց ՊԱԿ-ի հատուկ ներկայացուցիչ Սարտաուիի, իսկ ավելի ուշ արդեն Արաֆաթի հետ: Ահա այս ժամանակաշրջանում ամերիկյան վարչակազմի մի շարք քաղաքական գործիչներ սկսեցին արտահայտել այն կարծիքը, որ փոխզիջումը երկու կողմերի համար հնարավոր է, քանի որ պաղեստինյան պետության ստեղծումը արևմտյան ափում համառոտ է քե՛ պաղեստինցիների և քե՛ Իսրայելի ու ԱՄՆ-ի շահերին:

Փաստորեն՝ կարելի է ասել, որ 1973թ. Իսրայելը առաջին անգամ զգալի կորուստներ կրեց ռազմի դաշտում և ցրվեց Իսրայելի անպարտելիության առասպելը: "Հատուցման օրվա պատերազմը" (այսպես են այն անվանում Իսրայելում) ցույց տվեց, որ արաբները համատեղ և միասնաբար գործելու դեպքում կարող էին հասնել հաջողության համեմատաբար ավելի հզոր ու լավ զինված Իսրայելի նկատմամբ: Կարելի է ասել, որ սա նաև հոգեբանական հաղթանակ էր արաբների համար: Պաղեստինյան պետության ստեղծումը դարձավ կենտրոնական հարց, և ի հայտ եկավ պաղեստինյան պետության կամ պետական կազմավորման ստեղծման անխուսափելիության գաղափարը:

Ամհաջողությունը պատերազմում ստիպեց իսրայելական հասարակության բոլոր խավերին նոր աչքերով նայել արաբ-իսրայելական հակամարտությանը: 1973-ից հետո, կարելի է ասել, որ հակամարտության պատմության մեջ առաջին անգամ երևան եկան իրական անխաղաղակցի հակամարտության քաղաքական կարգավորման համար:

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՏԻԳՐԱՆ (ԵՊՀ)

ԻՌՅԱԿԵՐՊ ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐ ՍԻՍԻԱՆԻՑ

Սիսիանի երկրագիտական քանգարանն ունի քարակերտ մեմորիալ հուշարձանների բավական հարուստ հավաքածու: Թանգարանի բակում ցուցադրված են հնագույն մենհիրներ, ժայռապատկերներ, տարբեր ժամանակաշրջաններին վերաբերող խաչքարեր ու տապանաքարեր:

Մեր ուշադրությունը գրավեցին Սիսիանի մերձակա բնակավայրերից քանգարան բերված շուրջ մեկ տասնյակ խոյակերտ պյունի հուշարձանները, որոնց վրա փորագրված են արաբատառ արձանագրություններ: Դրանք ունեն հիշատակագրային բովանդակություն:

Տապանագրերի վերծանությունից պարզվեց, որ հիշյալ կոթողները մահմեդական տապանաքարեր են և վերաբերում են ուշ միջնադարին: Դրանցից ամենավաղը թվագրվում է 1585թ.՝ (հիջրի 993 թ.): Այն հաղորդում է ննջեցյալի անունը՝ Մաֆար Կուլի, իսկ ամենաուշը թվագրվում է 1720թ. (հիջրի 1132թ.) և պատկանում է ոմն Իբն Համիդին:

Հիշյալ խոյակերտ կոթողներն ունեն մահմեդական տապանաքարերի վրա փորագրվող հանգուցյալների անունները հաղորդող ընդունված բանաձևեր և հատվածներ Դուրանից: Արձանագրված տապանաքարերից երկուսը թվագրված են 1610 և 1697 թթ.:

Տապանաքարերի վրա կան միևրաբի, քամբած ձիու պատկերներ, որսորդության տեսարաններ:

Խոյակերտ տապանաքարերի մի մասը բերված է Որոտն գյուղից, իսկ մյուսները՝ մոտակա բնակավայրերից: Մեզ հայտնի չէ, սակայն, թե կոնկրետ

որ կոթողը որտեղից է բերված: Թանգարանի բակում կան մահ հայերեն արձանագրությամբ խոյակերպ տապանաքարեր, որոնցից մեկը ունի ՌՇԺ (1651թ.) քվականը:

Խոյակերպ տապանաքարերը լայնորեն տարածված են այժմյան Հայաստանի Հանրապետության հարավային շրջաններում և, հատկապես, Մյունիքի ու Վայոց Ձորի մարզերում:

Նմանատիպ խոյակերպ տապանաքարերի վերոհիշյալ մարզերում տարածված լինելը հավանաբար կապված է Սեֆևյանների (1501-1732թթ.) կողմից խրախուսվող թուրքմենա-ադրբեջանա-քրդական ղզլբաշական ցեղամիավորումների Հայաստանի հարավային շրջաններ ներթափանցման հետ:

Հայաստանի արաբատառ խոյակերպ տապանաքարերը քվագրվում են 16-18 դարերով: Ուշագրավ է, որ հայերեն արձանագրությամբ մույնատիպ տապանաքարերն ունեն ավելի վաղ քվագրություն: Նրանցից հնագույնները ստեղծվել են 13 դարում:

ՄԿՐՏՉՅԱՆ ՆԱԻԲԱ (ԱԻ)

ՀԱՅԵՐԻ ԴԵՐԸ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔՈՒՄ

Հնդկաստանի պատմության մեջ եղել են քաղաքական, տնտեսական, ուսման, մշակութային և այլ բնագավառներում աչքի ընկած շատ հայեր:

Ձեկուցման մեջ կենդակացվեն կայսր Աբգարի արքունիքի հայերը (Պայտոնի պոետներ Սարմադ և Միրզա Ջուլ-Կարնայն, բանակի հրամանատար Գորգին Խան, զնդապետ Հակոբ, երգչուհի-պարուհի Գոհար Ջան, նկարիչ-վերականգնող Սարգիս Խաչատուրյան և այլք):

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ԳԱՅԱՆԵ (ԵՊՀ)

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵՎ ՄՈՒՍՈՒՄԱՆ ԻՇԽՈՂՆԵՐԻ
ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ՈՐՊԵՍ ՆՐԱՆՑ
ՓՈՒՀԼՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Արաբական խալիֆայության և արաբների կողմից նվաճված երկրների ազգաբնակչության միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունները կարգավորվում էին պայմանագրերի միջոցով:

Վաղ իսլամի գիտական գրականության մեջ «սահաղ» (արաբ. պայմանագիր) տերմինը քարգմանում են որպես «պայմանագիր խաղաղության մասին» կամ «պայմանագիր անձեռնմխելիության մասին» և կամ «պահպանագիր»:

Մուսուլմանական հավատի ուսմունքում մեծ տեղ է զբաղեցնում «ջիհադի» (արաբ. - պատերազմներ հավատի համար) քարոզը ոչ մուսուլմանական երկրների դեմ: Սակայն քրիստոնյաներն ու հրեաները, որպես Սուրբ Գրքի ժողովուրդ, ունենի յուրահատուկ կարգավիճակ. Դուրսնում նշվում է, որ մուսուլմանների և քրիստոնյաների միջև կա «ազգակցական կապ» և նրանք երկուսն էլ «երկնային կրոնի» ժողովուրդներ են ու գտնվում են իսլամի հովանավորության ներքո:

Դուրսնում «ահադ» տերմինը հանդիպում է երկու նշանակությամբ. կախված կոնտեքստից՝ այն կարող է նշանակել կամ «մուսուլմանների պայմանագիր հեթանոսների հետ», կամ էլ՝ «ուխտ Աստծո հետ»:

Մեկ դարաշրջանի տարբեր պայմանագրերի համեմատությունը ցույց է տալիս համաձայնագրերի կառուցվածքի նմանությունները, որոնք կնքվել էին մուսուլման իշխողների և նշվածված ազգաբնակչության միջև: Պայմանագիրը կազմվում էր ուղերձի ձևով, ներածական մասը սկսվում էր Դուրանից մեջ բերված խոսքերով, այնուհետև նշվում էին պայմանագիր կնքող կողմերի անունները, որին հաջորդում էր պայմանագրի բուն տեքստը, որով տեղի բնակչությանը առաջարկվում էր կամ իսլամի ընդունում, կամ քաղաքական ենթարկում մուսուլմանական իշխանություններին՝ հարկ վճարելու պայմանով:

Քրիստոնյաներին, հրեաներին, հետագայում նաև զրադաշտականներին, որոնք պայմանագիր էին կնքել մուսուլմանների հետ, երաշխավորվում էր նրանց անձերի, ընտանիքների, ունեցվածքի, պաշտամունքի օջախների անձեռնմխելիությունը, ինչպես նաև նրանց սովորույթներին ու կրոնական օրենքներին չմիջամտելը, պաշտպանությունը թշնամիների հարձակումներից:

Քրիստոնյաներն էլ պարտավորվում էին չվերականգնել իրենց քանդված եկեղեցիները, օրևան տալ ու կերակրել մուսուլմաններին, իրենց տներում լրտեսներ չբացնել: Արաբ նվաճողներին և նվաճված ազգաբնակչության միջև կնքված պայմանագրի լավագույն օրինակ է Օմար խալիֆայի՝ Ասորիքի քրիստոնյա ազգաբնակչությանը տված պայմանագիրը:

Հետաքրքրական են նաև արաբ զորավարների կնքած պայմանագրերը Ասորիքի, Միջագետքի, Հայաստանի և Կրաստանի քաղաքների հետ: Այս պայմանագրերը թև ունեն ընդհանրություններ, այդուհանդերձ ունեն նաև յուրաքանչյուրին հատուկ կետեր: Իսլադ իբն Դանըմի և Ռակկայի բնակիչների միջև կնքված պայմանագրով վերջիններին տրվում է անձի և ունեցվածքի ապահովություն՝ պայմանով, որ գլխահարկ վճարեն: Տիխիս քաղաքի բնակչության հետ Հաբիբի կնքած պայմանագրում մանրամասնորեն խոսվում է գլխահարկի չափի մասին՝ նշանակելով ամեն տնից մեկ դիմար չափը: Ըստ Աբու Յուսուֆի 48 դիրհան պետք է վճարելին հարուստները, 24 դիրհան՝ միջին խավի մարդիկ:

Պայմանագրերի բովանդակությունը կարող էր փոխվել մի շարք հանգամանքներից ելնելով, շատ հաճախ նվաճված բնակչության ընդվզումներից հետո: Այստեղ մեծ նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ իրենց նվաճումների սկզբնական շրջանում արաբները մեղմ քաղաքականություն էին

վարում նվաճված հողերում, իսկ հետագայում, հիմնավորապես հաստատվելով այդ տարածքներում, ավելի խիստ էին վարվում ազգաբնակչության հետ:

Պայմանագրի առկայությունը մուսուլմանների հետ նվաճված ժողովուրդներից տալիս էր զինմանի կարգավիճակ, որոնց վրա տարածվում էր մուսուլմանական համայնքի հովանավորությունը: Պայմանագրային հարաբերությունների պրակտիկայում նվաճողների և նվաճված ազգաբնակչության միջև տեղի էին ունենում նաև պայմանագրերի վերահաստատումը, երբ այդքան կարևոր փաստաթղթերը մտրից պիտի հաստատվեին իշխանության փոփոխության դեպքում: Դրա վրա օրինակ է Նեջրանի քրիստոնյա ազգաբնակչությանը Մուհամմեդի կողմից տրված պայմանագիրը, որը նրա մահից հետո հաստատվել է 4 անգամ ուղղափառ խալիֆաների կողմից:

Շատ հաճախ քրիստոնյա ազգաբնակչությունը, ձգտելով պահպանել իր կրոնական և սոցիալական իրավունքները մուսուլման իշխողների ոտնձգություններից, մարգարեի և նրան հաջորդող չորս ուղղափառ խալիֆաների անուններով ստեղծում էր կեղծ պայմանագրեր ու արտոնագրեր, որոնց հիմքում ընկած էին վաղ շրջանի մուսուլման իշխողների ու նվաճված ազգաբնակչության միջև կնքված իրական պայմանագրերը՝ հարմարեցված օրվա պահանջներից:

ՄՈՎՄԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ (ԱԲ. Ա. Գ. Ք.)

ԹՎԵՐԻ ՆՇԱՆ ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ ՆԱԽԱՍՏՇՈՑՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՀԱՍՏԱՎԱՐԳԵՐՈՒՄ

Մերոպ Մաշտոցի ստեղծած այբուբենը, ինչպես հայտնի է, ծառայել է նաև որպես բվանշանային համակարգ: Երեսուցկեց տառերը բաժանելով չորս սյունակների՝ Մերոպ Մաշտոցն առաջին սյունակի ինը տառերին տվեց միավորների, երկրորդին՝ տասնավորների, երրորդին՝ հարյուրավորների, չորրորդին՝ հազարավորների արժեք: Տառերից բաղկացած այս հաշվեհամակարգի հիմքում ընկած է տասնորդական սկզբունքը:

Այսքանով հնարավոր էր գրել մինչև 9999 (ներառյալ): Տասը հազարը (որը գրաբարում կոչվում է «բյուր») նշելու համար առկա է հատուկ նշան՝ դեպի վեր ուղղված անկյունիկ: «Բյուրի» նշանը դրվելով այբուբենի տառերի վրա՝ ստացվում էր դրանց բազմապատիկը 10.000-ով (Բ-ն «բյուրի» նշանով հավասար էր 20 հազարի, Զ-ն՝ 90 միլիոնի):

Հայկական մատենագրությունից հայտնի «բյուրին» հաջորդող մյուս անվանակոչված միավորը «գունդն» է («բյուր» x «բյուր»), ապա «ավագ գունդը» («բյուր» x «գունդ»), «արքա գունդը» («բյուր» x «ավագ գունդ»), «կայսր գունդը» («բյուր» x «արքա գունդ»), որը ներկայումս գործածվող բվերով կտասցվի՝ մեկից հետո քսան գրո): Այնհայտ է, որ ողջ համակարգի հիմքում ընկած է հաշվարկի տասնորդական սկզբունքը:

Մերոպ Մաշտոցի ապրած ժամանակաշրջանում Հայաստանում կիրառվել են հունական, ասորական և պահլավական այբուբենները: Սակայն անհրաժեշտ է նշել, որ դրանցից և ոչ մեկը չունեն քվանշանների արտահայտման այնպիսի կատարելություն, ինչպիսին Մաշտոցի այբուբենինն է: Կարելի էր ենթադրել, որ Մերոպ Մաշտոցը վերցրել է հունական և ասորական այբուբենների քվանշան համակարգերի սկզբունքը (որը նույնպես տասնորդականն էր) և, ելնելով իր ստեղծած այբուբենի տառերի քանակից, ստեղծել է մինչև «քյուր» հասնող քառաստիճան համակարգ, եթե նախաքրիստոնեական Հայաստանում չունենայինք հազարամյակների ճանապարհ անցած քվաքանական համակարգ, որի հիմքում ընկած է հաշվարկի նույն տասնորդական սկզբունքը:

Ի տարբերություն Եգիպտոսի, Փոքր Ասիայի, սեպագիրը գործածող Միջագետքի և առաջավորասիական երկրների, Հայկական լեռնաշխարհում քվերի նշումները կատարել են ոչ թե գծիկներով, սեպերով կամ այլ սիմվոլիկ նշաններով, այլ կետ-շրջանակներով: Թվերի կետային նշումը, լինելով հայաստանյան երևույթ, գալիս է դեռևս ժայռապատկերներից, իր կատարելությանն է հասնում Վանի թագավորության մեհենագրության մեջ, միաժամանակ դառնալով վերջինիս տեղական ծագման ապացույցներից մեկը: Վանի թագավորության մեհենագրության մեջ ընդունված քվահամակարգն ուներ ցայտուն արտահայտված տասնորդական բնույթ: Հիմքեր կան ենթադրելու, որ բիայնական մեհենագրությունը նախորդ դարաշրջաններից ժառանգություն է ստացել ոչ միայն քվանշանների արտաքին տեսքը, այլև հաշվեհամակարգի տասնորդական սկզբունքը:

Հայկական լեռնաշխարհում հաշվեհամակարգի տասնորդական սկզբունքի վաղնջական գոյության և բնիկության դրսևորմանն ենք հանդիպում բիայնական սեպագրության մեջ: Ներմուծելով և բարեփոխելով հաշվարկի վեցական համակարգ ունեցող միջագետքյան սեպագիրը՝ Վանի թագավորության դպիրները տեղական առանձնահատկություններով օժտված իրենց սեպագրում ևս կիրառում են հաշվարկի տասնորդական համակարգը, ինչի հետքերը պահպանվել են «60» և «70» քվերի գրության մեջ:

Քրիստոնեության պետական կրոն հռչակումով՝ Հայաստանում արգելվեց մեհենագրությունը, բայց ոչ քվաքանությունը (հաշվեհամակարգը), որն ընկած էր կենսական բոլոր պահանջների կատարման հիմքում: Քրիստոնեական եկեղեցին չէր կարող այն վերացնել առավել ևս այն պատճառով, որ Հայաստանում առկա քվահաշվարկման համակարգը շատ ավելի կատարյալ էր, քան ներմուծված գրահամակարգերի հաշվարկման սկզբունքները: Ուստի մեծագույն հավանականությամբ կարելի է եզրակացնել, որ մաշտոցյան այբուբենի քվահաշվարկման հիմքը վերցված է նախաքրիստոնեական ժամանակաշրջանից եկող քվաքանական ավանդույթներից:

ԼԵԶՎԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՏՎԱԾԱՅԻՆ ԹԵՔՆՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՐԱՔԵՐԱԿՅՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ ԳՐԱԿԱՆ ԱՐԱՔԵՐՆԵՒ ՆՅՈՒԹԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

Լեզվական միավորները գրական արաբերենում առաջարկվում է ներկայացնել որպես վերլուծական *fā', eayn, lām* այբուբենի միջոցով պատկերվող ինվարիանտային հատվածի շուրջ խմբավորված՝ քերականական նշանակություններ արտահայտող որոշակի կոնկրետ դիրքերի կոնկրետ հերթագայություն: Այդօրինակ ներկայացման արդյունքում միավորները կստանան հետևյալ (*)(1)(2) պատկերում. որտեղ. (*) = լեզվական միավորների համար նույնական ներկայացող ինվարիանտային հատված, այլ կերպ (*) = *fā', eayn, lām*, (1) = միավորի վերջնահատվածային քերայքների փոփոխականության իմաստապատիչ լինելու/լինելու հակադրություն, այլ կերպ. *variable/invariable* (այն ինչ արաբական լեզվաբանական ավանդույթում նկարագրվում է որպես (*ḥarakāt*) *ḥarf 'al-'ierāb* և (*ḥarakāt*) *ḥarf 'al-binā'*), (2) = միավորի՝ ինքնուրույն կամ կապակցված բառածև լինելու հակադրություն, այլ կերպ. *Absolutus / constructus*:

Լեզվական միավորների ձևաիմաստային կազմությունն առաջարկվում է դիտարկել երկու տարբեր մակարդակներում, որոնք պայմանականորեն անվանվելու են ձևահնչույթաբանական և ձևաշարահյուսական (վերոհիշյալ մակարդակների առանձնացումը պայմանավորված է սուկ հետազոտական կոնկրետ նպատակով):

Abs./constr. հակադրական հարաբերակցության մեջ. լեզվաբանական վերլուծության ձևահնչույթաբանական մակարդակում լեզվական միավորների միայն *constr.* կարգավիճակն է ենթադրելու բառածևերի «ներքին կայացվածություն, ավարտուն ձևավորվածություն», որն էլ անմիջականորեն պայմանավորված է վերջիններում «ըրացուցիչ» ո (*tanwīn*) և ժ (*ḍamīr*) համակարգերի գործառնությունը:

Իր հերթին ժ (*ḍamīr*) համակարգը ձևահնչույթաբանական մակարդակում պայմանավորելու է միավորների վերջնահատվածային հատույթի (վերջնաքերայքների) փոփոխականության ապահովում: ո (*tanwīn*) համակարգը վերոհիշյալ հատվածի (վերջնաքերայքների) այդպիսի փոփոխականություն անմիջականորեն չի պայմանավորելու:

Այս բոլորությունը բոլի է տալիս արձանագրել, որ ձևահնչույթաբանական մակարդակում միավորների «ներքին կայացվածությունն ու ավարտուն ձևավորվածությունն» ապահովվում է մի կողմից փոփոխական (*var*) վերջնահատվածով և ժ (*ḍamīr*) համակարգով և մյուս կողմից՝ ոչ փոփոխական, կայուն (*inv*) վերջնահատվածով և ո (*tanwīn*) համակարգով:

միավոր փոփոխական վերջնահատվածով և ժ (ժամիր) համակարգով	միավոր ոչ փոփոխական, կայուն վերջնահատվածով և ո (tanwīn) համակարգով
(fā', eayn, lām) + (var) + (ժ) (x) + ^(a) , ^(u) , ^(o) + (ժ)	(fā', eayn, lām) + (inv) + (n) (x) + ^(u) + (n)

Դեպի ձևաշարահյուսական դիտարկման պլան մակարդակային անցման դեպքում արդեն իսկ «ճերքին կայացվածությամբ ու ավարտուն ձևավորվածությամբ» բնութագրվող միավորների արտաքին շարահարական հարաբերությունների (այլ կերպ. այն, ինչ անվանվում է «միավորի արտաքին վերաբերություն») առաջնային պլանում հայտնվելը մի դեպքում պայմանավորելու է ո (tanwīn) համակարգի գործառնության զրոյացում (զոնե այնպիսի բեռնվածքով, ինչպիսին վերջինս ուներ ձևահնչույթաբանական մակարդակում) կամ վերախմաստավորում և վերոհիշյալ արտաքին շարահարական հարաբերությունների ապահովման պլանում առաջնային է զնահատվելու լեզվական միավորի վերջնահատվածային բեքույթների արդեն իսկ իմաստազատիչ փոփոխականության հանգամանքը (հմմտ. ħarf 'al-'ierāb արաբական լեզվաբանական ավանդույթում), իսկ մյուս դեպքում արտաքին շարահարական հարաբերությունների արտահայտումը վերագրվելու է ժ (ժամիր) համակարգին (վերջինիս կարծես թե վերագրելով «իմաստազատիչ փոփոխականության» հատկություն, այլ կերպ ասած՝ տեղի է ունենում «վերադիրբավորում»)։ միևնույն ժամանակ լեզվաբանական վերլուծության այս մակարդակում զրոյացնելով միավորի վերջնահատվածային բեքույթների գործառնական բեռնվածքը (հմմտ. ħarf 'al-biāḏ' արաբական լեզվաբանական ավանդույթում)։

միավոր ոչ փոփոխական, կայուն վերջնահատվածով և իմաստազատիչ ժ (ժամիր) համակարգով	միավոր փոփոխական իմաստազատիչ վերջնահատվածով և ո (tanwīn) համակարգով
(fā', eayn, lām) + (inv) + (ժ) (x) + ^(a) + (ժ')	(fā', eayn, lām) + (var) + (n) (x) + ^(u) , ^(a) , ⁽ⁱ⁾ + (n)

Արդյունքում, մի կողմից, միավորի «ճերքին կայացվածությունն ու ավարտուն ձևավորվածությունը»՝ շնորհիվ «լրացուցիչ» համակարգերի ներառման վերջիններիս կազմում, ու մյուս կողմից՝ վերջնահատվածային բեքույթների իմաստազատիչ գործառնական բեռնվածքը (կամ այդպիսի բեռնվածքի զրոյացումն ու վերջինիս «վերադիրբավորումը»)՝ համապատասխան միավորի արտաքին վերաբերության հնարավորություններին ու «պահանջմունքներին», կոչված է ապահովելու նրանց գործառնության հնարավորությունը խոսքի իռուքում։

ԴԵՎՇԻՐՄԵՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Դեվշիրմեին (մանկաժողով) վերաբերող խնդիրների շարքում պատմագրության մեջ առանձնանում են նրա անցկացման փուլերի, տարիքային և քանակական, ազգային և ֆիզիկական սահմանափակումների ուսումնասիրությունները:

Ժամանակակից բուրք պատմագրության մեջ տարածված է այն կարծիքը, թե դեվշիրմեն շատ սահմանափակ դեր է կատարել Օսմանյան կայսրության քրիստոնյա ազգաբնակչության մահմեդականացման ու քրոքացման գործում: Որպես փաստարկ բերվում է այն տեսակետը, թե մանկահավաքը սահմանափակված է եղել մի շարք կետերով. քրիստոնյա հայտարկների մի զգալի մաս ազատված է եղել դեվշիրմեից, իսկ արտոնությունների քվում նշվում են մասնավորապես քաղաքում բնակվելը, պետության համար կարևոր աշխատանք կատարելը:

Սույն գեկուցումով փորձ է արվում օսմանյան փաստաթղթերի ժողովածուների, ինչպես նաև եվրոպացի ճանապարհորդների նարատիվ նյութերի հիման վրա ժխտել այդ արտոնությունների համատարած, երկարաժամկետ և հուսալի, հետևաբար, նաև ազդեցիկ լինելը:

Այսպես, եվրոպացի ճանապարհորդները, ինչպես նաև օսմանյան որոշ փաստաթղթեր կտրականապես մերժում են քաղաքային ազգաբնակչության՝ դեվշիրմեից ազատված լինելու հանգամանքը, քանի որ նրանք երբեմն հիշատակում են որպես հավաքին ենթակա նաև քաղաքատիպ բնակավայրերը: Այս պարտավարությունից ազատելը վերաբերվում է միայն որոշ քաղաքների կենտրոնական մասերին: Եվրոպացի ճանապարհորդները իրարամերձ տեղեկություններ են հայտնում այս մասին, սակայն ամեն դեպքում նրանք հիշատակում են, որ դեվշիրմեից ազատվել է լավագույն դեպքում մի քանի քաղաք:

Այսպես, օրինակ, փաստաթղթերի ժողովածուներից, ինչպես նաև ֆրանսիացի ճանապարհորդ Ժ.Փ.Ֆորեզինեի հուշերից երևում է, որ դեվշիրմեից ազատված չէր նույնիսկ այնպիսի նշանակալի քաղաք, ինչպիսին էր Սոֆիան 16-րդ դարում:

Ինչ վերաբերվում է հատուկ մասնագիտությունների տեղ մարդկանց ընտանիքներին, ապա, իրոք, դեվշիրմեից ազատված էին բնակչության փոքրաթիվ կատեգորիաներ, որոնք ունեին հատուկ պարտավորություններ, սակայն այդ արտոնությունները երկարատև չէին: 1621թ. հավաքի ֆերմանը ցույց է տալիս, թե որքան երեքային էին այդ ժամանակավոր արտոնությունները: Այնտեղ հստակորեն նշվում է, որ եթե որոշ վակուֆների ուսաբներ և կամ հանրափորությամբ զբաղվող բնակչությունը ցույց տան հավաքից ազատման վկայական, ապա այն այլևս պետք չէ համարել վավեր: Ավելին, այդ փաստաթուղթը վերցնել ու ուղարկել Ստամբուլ, իսկ տղաներին հավաքել ընդհանուր հի-

մուճըքներով: Այստեղ տեղին է ընդգծել երկու հանգամանք: Ակնհայտ է ավատատերերի ցանկությունը ապահովել աշխատող ձեռքի մշտական քվաքանակ, որի համար նրանք երբեմն հասցնում էին ազատել ղեկշիռմեից իրենց ենթակա բնակչությանը: Սակայն դա տևում էր շատ կարճատև, քանի դեռ հակասում էր կենտրոնական իշխանության շահերին: Այսպիսով, հստակորեն երևում է, որ այս հավաքից ազատվելն ավելի շուտ բացառություն էր, քան կանոն:

Հանքավորների բնակավայրերի ուայաքների ազատումը ղեկշիռմեից կապված էր աշխատուժի ապահովման հետ, որը բխում էր արդեն կենտրոնական իշխանությունների հատուկ շահերից: Օրինակ, երկաթի հանույթի ոլորտում անհրաժեշտ դրակավորման պահպանման համար պետության կողմից կիրառվում էին հատուկ կարգավիճակներ: Դա ֆիքսված է ղեկշիռմեից ազատման մասին 1536թ. սուլթանական հատուկ հրովարտակով: Սակայն դրա երկարածամկետ ուժը հույժ կասկածելի է: 1621թ. հիշատակված սուլթանական հրովարտակը վկայում է, որ կենտրոնական իշխանությունը հակասում էր սեփական ընդունած որոշումներին ու պահանջում էր հավաք անցկացնել նաև հանքավորների միջև:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ հնարավոր չէ խոսել քրիստոնյա հպատակների համար որևէ արտոնության մասին Օսմանյան կայսրության մեծ պետությունում, որտեղ իշխում էին ամեն տեսակի կամայականություններն ու կաշառակերությունը՝ սուլթանից մինչև ամենաստորին պաշտոնյան: Ուստի, հարկ ենք համարում չհամաձայնվել այն պնդման հետ, թե ղեկշիռմեի ժամանակ կիրառված արտոնությունները նշանակալի դեր են խաղացել մանկահավաքի բացասական ազդեցությունը սահմանափակելու մեջ:

ՉԱՐՉԱՆ ԹԱԴԵՆՍՈՒԿԱՆ

ԱՍԱԴԻ-Ե ԹՈՒՄԻԻ «ԼՈՒՂԱԹ-Ի ՖՈՒՐՍ» ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲԱՌԱՐԱՆԸ ԵՎ ԴՐԱ ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ-ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՐԺԵԸԸ

Իրանական միջնադարյան բառագիտության ուսումնասիրման և Սամանյանների գահակալման շրջանից (9-10 դդ.) մեծ տարածում գտած ֆարսի-ե դարի լեզվի քննության գործում կարևոր հուշարձան է հանդիսանում 11-րդ դարում կազմված «Լուղաթ-ի ֆուրս» պարսկերեն բացատրական բառարանը, որի հեղինակն է պարսից դասական շրջանի բանաստեղծ Աբու Մանսուր էրն-ե Ահմադ Ասադի-ե Թումսին: «Լուղաթ-ի ֆուրս»-ը մինչ օրս պահպանված և հրատարակված պարսկերեն լեզվի ամենավաղ բացատրական բառարանն է, որի բառակազմը ներկայացնում է Միջին Ասիայի և Խորասանի բառապաշարը, բարբառային-խոսակցական մի շարք բառեր: Բառարանը կոչված էր բացատրելու խորասանյան և միջինասիական բանաստեղծ-ների տողերում հանդիպող բառերը, որոնք անհասկանալի և խորին էին արևմտաիրանական տա-

րածքներում ապրող բնակչության համար: Այս բացառիկ բառագիրքը հետա-
պնդում էր մի շարք այլ նպատակներ. Ասադի-ե Թուսին «Լուղաք-ի ֆուրս»-ը
կազմել է 11-րդ դարի 2-րդ կեսի սկզբին, այսինքն մի ժամանակաշրջան, որը
հաջորդել էր Իրանում խառնաշփոթ և պատերազմական իրադրությանը: Պայ-
քարի և պատերազմների արդյունքում քոչվոր սելջուկ օղուզները, ձգտելով կոր-
ծանել տեղական գահակալներին և նվաճել Իրանը, 1040թ. ծանր պարտության
մատնեցին ներքին խժոժություններից թուլացած Դագնևիդներին և հետագա մի
քանի տարիների ընթացքում գրավեցին գրեթե ողջ Իրանը: Ահա այսպիսի
պայմաններում Ասադի-ե Թուսին քաջ գիտակցում էր Իրանի արևմտյան և
արևելյան հատվածների միասնության կարևորությունը, որի ապահովման
գրավակազմներից էր նաև լեզվական ընդհանրությունը, երկրի մի հատվածի
բնակչությանը մյուսի լեզվին և գրականությանը իրագրելի դարձնելը: Պատա-
հական չէ, որ «Լուղաք-ի ֆուրս»-ը կազմվել է Ազարբայջանում (Ատրպատա-
կանում): Ժամանակին արևմտյան և արևելյան հատվածների միասնության
գաղափարին էր ուղղված նաև Թուսիի համատեղացի Ֆիրդուսու «Շահնամե»
հերոսական էպոսը:

«Լուղաք-ի ֆուրս»-ը նաև գրականագիտական մեծ արժեք ունի. բառա-
գրքում հանդիպում ենք այնպիսի բանաստեղծների անունների և չափածո տո-
ղերի, որոնք իրանական գրականությանը հայտնի են դարձել միայն այս բա-
ռարանի շնորհիվ: Օրինակ՝ 11-12-րդ դդ. բանաստեղծ Ուհնուրիի 3 պոեմներից
ոչ մեկը մեզ չի հասել, բացառությամբ «Լուղաք-ի ֆուրս»-ում տեղ գտած 75 բեյ-
քերի:

«Լուղաք-ի ֆուրս»-ում հանդիպում ենք Ասջադիի, Բուշուբուրի, Դադիդիի,
Լաբիբիի, Մանջիբի, Ռուդաբու, Քիսայիի, Ֆարրուխիի, Ֆիրդուսու և այլոց բեյ-
քերը (երկտող): Բառարանում բանաստեղծական տողերի միջարկումները
կարևորվում է նաև նրանով, որ ավելի հստակեցնում են բացատրվող բառերի
ինաստը, քանզի շատ բառերի դեպքում բացատրությունը ոչ այնքան հստակ է:

«Լուղաք-ի ֆուրս»-ը մեծապես կարևորվում է լեզվաբանական-բարբառա-
գիտական տեսակետից. այստեղ հիմնականում տեղ են գտել հին և միջի
պարսկերենից ավանդված բառեր, որոնց մի սովոր հատվածը չի գործածվում
ժամանակակից պարսկերենում: Բառարանում բերված են մի շարք բարբառա-
յին-խոսակցական եզրեր (ինչպես հայտնի է, խոսվախքն արխայիզմի կողմ
է)՝ բնորոշ Միջին Ասիայի, Խորասանի որոշակի բնակչությանը: Բառագրքի
բառապաշարն ընդգրկում է կենցաղային բառեր, կենդանական և բուսական
անշխարհին առնչվող բառեր, գյուղատնտեսական և արհեստագործական ան-
վանումներ և այլն: Միջնադարյան արտագրողների ձեռագրերի հիման վրա
կազմվել են Փաուլ Հորնի, Դաբի Միադիի, Աշրաֆ Մադեդիի, Աբբաս Էդրաի
բառարանի իրատարակությունները, որոնց համեմատության շնորհիվ առավել
պարզ է դառնում Ա.Թուսիի կազմած բարձրարժեք բառարանի նշանակությունը:

**«ԳՈՒՄԱՆ» ԵԶՐՈՒՅԹԸ «ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍՈՒՄ
ԵՎ ՆՐԱ ՀԵՏԱԳԱ ՏԱՐԱՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

«Սասունցի Դավիթ» էպոսը մեզ է հասել ասացողների միջոցով, որոնք գուսանական ինստիտուտի ժառանգորդներն են:

Ժամանակի ընթացքում գուսանների ինստիտուտը ենթարկվել է տարափոխության և հասարակությանը ներկայացել վիպասանների, տաղերգուների, աշուղների, սազանդարների, «նաղ սատղների» և պատմողների միջոցով:

Միջնադարյան գուսան-վիպասանները ժողովրդի ընդերքում պահպանված բազմաթիվ իրական և առասպելական պատմություններն ընդհանրացնում էին քատերական բազմապիսի ձևերով: Նախաքրիստոնեական ժամանակաշրջանում գուսանական ինստիտուտի բոլոր ներկայացուցիչները՝ փանդիտների, քնարի, սագի, քմբուկի, սրինգի նվագակցությամբ ցուցադրում էին իրենց արվեստը, սակայն քրիստոնեության ընդունումից հետո, նրանց բազմադարյա արվեստը ժառանգած աշուղները, սազանդարները, «նաղ սատղները» ավելի սահմանափակ էին և՛ գործունեությամբ, և՛ խաղացանկով: Այդ էր պահանջում նոր լսարանը:

«Գուսան»-ի պատմամշակութային երևույթը ժամանակի մեջ իր բոլոր տարափոխություններով հանդերձ գոյատևել է մինչև 19-20-րդ դարերը:

**1873 ԹՎԱԿԱՆԻ ԻՐԱՆԱ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՈՐՊԵՍ
ԵՐԿՈՒ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ**

20-րդ դարի սկզբներին աշխարհի վերաբաժանման գործընթացից չէր կարող դուրս մնալ հզորացող Գերմանիան, որը մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում ոչ միայն Աֆրիկայի, այլ արդեն 80-ականներից Մերձավոր և Միջին Արևելքի նկատմամբ: Դրա համար կար նույնիսկ մշակված ծրագիր, որը պատմության մեջ առավել հայտնի է որպես «օրիննապոլիտիկ» անվամբ: Իրանում Գերմանիայի քաղաքականության ակտիվացմանը մեծապես նպաստեց Բաղդադի երկաթգծի կառուցման նախագիծը: Երկաթգծի կառուցման ծրագիրը Գերմանիային անհրաժեշտ էր ինչպես տնտեսական, այնպես էլ ռազմավարական առումներով:

Գերմանիայի հետաքրքրությունը Իրանի նկատմամբ պայմանավորված էր առկա, դեռևս չչահագործված բնական ռեսուրսներով, էժան աշխատուժով, մեծ շուկայով և վերջապես աշխարհագրական հարմար դիրքով:

Գերմանիայի դանդաղ, բայց զգուշավոր քայլերը ուղղված էին նախ և առաջ Իրանը իր տնտեսական գոտու վերածելու և քաղաքական դիրքերը ամրապնդելու շուրջ: Թերևս այդ գործընթացի առաջին հաջողված արդյունքը համադիսացավ 1873թ. իրանա-գերմանական «բարեկամության, առևտրի և ծովագնացության» պայմանագիրը: Այն խորացրեց երկու երկրների հարաբերությունները:

Սույն պայմանագիրը Գերմանիային տվեց ազատ առևտրի, նավագնացության իրավունք և մի շարք այլ արտոնություններ: Հատկապես ուշագրավ է պայմանագրի 18-րդ հոդվածը, ըստ որի Գերմանիան կարող էր հանդես գալ միջուրդական առաքելությամբ այն դեպքում, եթե Իրանն ընդհարման մեջ մտնի որևէ այլ երրորդ պետության հետ՝ կարգավորելով երկու երկրների միջև առաջացած խնդիրները: Բնականաբար հետագայում Գերմանիան հաճախ էր օգտվելու պայմանագրի սույն կետից, որպեսզի միջամտի Իրանի և մեկ այլ պետության հարաբերությունների մեջ՝ ելնելով իր շահերից:

Վերոհիշյալ պայմանագրի կարևոր կետերից մեկն էլ այն էր, որ Իրանը պարտավորվում էր իր տարածքում թույլ տալ հիմնելու երեք գերմանական հյուպատոսարաններ՝ Թեհրանում, Թավրիզում և Բենդեր-Բուշեքում:

Ինչ վերաբերում է Իրանին, ապա նա Գերմանիային դիտում էր որպես երրորդ ուժ Անգլիայի և Ռուսաստանի ազդեցությունը փոքր ինչ թուլացնելու համար: Իր վարած տնտեսական քաղաքականության շնորհիվ, Գերմանիան զբաղեցրեց Իրանի արտաքին առևտրում երրորդ տեղը Անգլիայից և Ռուսաստանից հետո: Փաստորեն 1873թ. իրանա-գերմանական պայմանագիրը հող նախապատրաստեց Գերմանիայի հետագա ներթափանցման համար Իրան:

ՊԵՏՐՈՍ ԶԱՎԻԿՅԱՆ (ԵՊՀ)

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԹՈՒՐԶԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՂԱԶԱԿԱՆ ՀՍՍԱԿԱՐԳԻ ՎՐԱ

Ճանաչված քաղաքագետ Robert A. Dahl-ը ժողովրդավարական կառավարման համար պարտադիր է տեսնում

1. բանակի և ռստիկանական կառույցների քաղաքացիական վերահսկողությունը,

2. այս ժողովրդավարական գործընթացն իրականացնող անձանց համար՝ վերահսկողության տիրապետմանը:

Հասկանալի էր, որ օսմանյան կայսրության լայնածավալ բռնատիրության, համատարած անզրագիտության պայմաններում, սահմանադրական կառավարման փորձերը հաջողությամբ չպիտի պտակվեյին և այս պլանդայթի ժառանգորդները պիտի շարունակեյին նույնատիպ գործելառճը՝ նոր ձևավորվող թուրք պետական կառույցներում, ի դեմս բանակի:

«Թուրք անկախության» գլխավորող հիմնական տարրը՝ կայսերական բանակի բարձրաստիճան սպաներն էին և ժառանգել էին պետության հոգսերով ուղղորդվելու (L'Etat c'est moi!) հրամայականը:

Թուրքական բանակի հիմնական ուղեղը հանդիսացող գլխավոր սպայակույտը (Genelkurmay Başkanlığı) 1920-1960 թթ.-ի միջև, սկիզբում՝ նախարարության կարգավիճակ ուներ, ապա՝ օրենսդրությամբ ըստ հերթականության ենթակա դարձավ՝ հանրապետության նախագահին, վարչապետին և վերջում սպաշտպանության նախարարին:

Այս ժամանակաշրջանում հիմնվում էին նաև քաղաքական կուսակցություններ: Մուստաֆա Քեմալի հիմնած «Հանրապետական Ժողովուրդ» կուսակցությունը մինչև 1945 թ. եղավ միակը: Բանակը, քաղաքական կյանքում իր առաջին ակտիվ միջամտությունը ցուցաբերեց 1960թ. մայիսի 27-ին՝ տապալելով 1950 թ.-ից իշխանության եկած ընդհանրապես «Գեմեկրասո» կուսակցությանը, որոնց գործարքները համարում էր հակահեղափոխական:

Թուրքական բանակը 1960 և 1980 թթ. երկու անգամ հեղաշրջում կատարեց, իսկ 1971 թ. և 1997 թ. իր ցանկությունները պարտադրեց քաղաքական իշխանությանը, ընդդրում՝ վերջին միջամտությունը որակվեց Post modern Darbe: Բանակը օգտվելով յուրաքանչյուր միջամտության ընձեռնած մթնոլորտից, իր իսկ նախաձեռնած սահմանադրություններով (1961 և 1982 թթ.) և սահմանադրական փոփոխություններով, ստացավ քաղաքական համակարգին ազդելու իրավական հիմքեր:

Ներկա դրությամբ Թուրքիան, ԵՄ-ն անդամակցության դրդվածությամբ ևս իր ժողովրդավարությունը համամարդկային չափանիշների հասցնելու նպատակով սահմանադրական բարեփոխումներ է կատարում, որոնց միջոցով միգուցե հնարավոր լինի բանակը գերծ պահել քաղաքական միջամտություններից:

ՍՄԲԳՍՅԱՆ ԱՐՏԱԿ

«ԽՈՒՐՈՒՆՎԻՍ» ԵՎ «ՆԱԻՐԻ» ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐԶ

«Խուրուշկիա» և «Նաիրի» սեպագրական տեղանունների շուրջ գիտական գրականության մեջ արտահայտվել են՝ առաջինի վերաբերյալ մեկ, երկրորդի վերաբերյալ երկու ստուգաբանական մոտեցումներ: Խուրուշկիա երկրի և քաղաքի անվանումը մեկնաբանվում է, որպես քարդ համակցություն, կազմված *hubi*՝ «*հովիտ, դաշտ*» և *uškia*՝ «*սուկի*» արմատներից: Իսկ «Նաիրի» երկրանունը ստուգաբանվում է՝

ա/ արքադերեն *našu*՝ «գետ», «Գետերի երկիր» իմաստով,

բ/ «Հրո, կրակի երկիր» իմաստով՝ բխեցվելով ասորական *nor-a-nuira*, արաբական՝ *նար* «կրակ», սեմական լեզուների *nur*՝ «ուրա» բառերից:

Ռուսումնասիրությունները, սակայն, բիայնական այս տեղանունների ստուգաբանության առումով, մեզ այլ կարծիքի են համզեցրել:

Նախքան «Խուրուշկիայի» ստուգաբանությանը անդրադառնալը, հարկ է ներկայացնել բիայնական այս պետական միավորման և նրա նույնանուն մայրաքաղաքի տեղորոշման մեր մոտեցումները:

Ասորեստանյան արձանագրություններից ակնհայտ է, որ Խուրուշկիա երկիրը գտնվում էր Մ. Չաբի վերին ավազանում, նախկին Խաբիսի երկրի տարածքում, կամ նրա մերձակայքում Մուսասիրի (Միջաս, Մոկբ), Ռիայախի (Ռ-շտունիք /հմմտ. Ռստանի հետ/, Անձևացիքի հյուսիս), Մուգունիայի (Միկանիս կամ Մուկան), Արիտուի (Այրտուանք) շրջագծած տարածքում, նրա ամրոցներից էր Շիլայա-Չոդայլ-Չոեյը, այն հեռու չէր Կիրրուրի-Կրերքից, Էլամունիա-Ալամանից խարզայցիների (Այգարք), խարմասցիների (Օրամար) երկրներին, Մանայից, Սիմեսիից, Գիլգամուից (Խիզան): Ահա այս ամենը նույն են տալիս Խուրուշկիայի սահմանները մոտավոր գծազրել հետևյալ կերպ. հյուսիսում այն, հավանաբար, անցնում էր Ջերմով (Շամախ, Նորդուգ հատված), Միկանիսի և Մուկանի շրջանով, արևմուտքում այն ընդգրկում էր Չոեյ ամրոցը և, հավանաբար, Արլ. Խաբուրով իջնում հարավ. հարավում այս երկրի սահմանները, հավանաբար, հասնում էր մինչև Այրտուանք, Այգարք, Օրամար, իսկ արևելքում՝ Պարսկահայք (Տամբեր, Ալի): Հավանաբար, Խուրուշկիայի կազմում էին մաս Կիրրուրի-Կրերքը, Էլամունի-Ալամանը: Ինչ վերաբերում է Խուրուշկիա մայրաքաղաքին, ապա այն, ամենայն հավանականությամբ, համընկնում է ներկայիս Ջուլամերկին (Ջլմար, Ջայլամար): Սեպագրական աղբյուրներից ակնհայտ է, որ այս քաղաքը գտնվում էր Վերին Չաբի ափին, Այրտուանք-Միկանիս (կամ Մուկան) հատվածում. Սարգոն II-ը Խուրուշկիա է Այրտուանք-Միկանիս (կամ Մուկան) հատվածում. Սարգոն II-ը Խուրուշկիա է Միկանիսից, իսկ Խուրուշկիայի արքան նրան ղեկավարել է 30 կմ հեռավորության վրա: Այնուհետև Աշշուրի այս արքան անցել է Էլամունիա գետը (Մ. Վորոբյան վրա: Այնուհետև Աշշուրի այս արքան է առնում Ալամանի մոտակայքից) Չաբի աջակողմյան Լևիհ-սու վտակ /սկիզբ է առնում Ալամանի մոտակայքից/ Ջաբի վել Մուսասիր: Խուրուշկիան գտնվում էր Աիսա լեռան փեշին, որը, հավանաբար, Կալամերիկ-դադն է, իսկ Ջուլամերկը նրա հարավային լանջերն է:

Խուրուշկիա երկրի և քաղաքի այս տեղորոշման մոտեցումները կարևոր են տեղանվան ստուգաբանության խնդրում: «Խուրուշկիա» անունը, մեր կարծիքով, կազմված է *խուրա* դիցանվան, *-ուշկ* «այք, ակն» բառի և *-իա* վերջավորության (հմմտ. Շապարիա, Ալլուրիա, Կալամիա, Ալաբրիա և այլն) համապատասխան, և տեղանունը ուղակիորեն պետք է բացատրել *«Ճուրայի այքեր»* իմաստով:

Խուրան բիայնական դիցաբանի երկնային կայծակ-որոտի աստված *Թեյ-Շեբայի* կինն է և, բնականաբար, պետք է հեռու չլիներ իր զույգի պաշտամունքից: Սեպագրական *«Ճուրա»*-ն հայերենում կհնչյունափոխվի *«Հովա»*-ի, ասել է քե այս դիցուհին հովուրյան-զուվուրյան աստվածուհին էր. նրա պաշտամունք-

քը պետք է կապել երկնային անձրևաբեր և ստորերկրյա կենսատու ջրերի, աղբյուրների, գետերի, ծովերի, ամպամածության, ամպրոպի, կայծակի, քամու պաշտամունքներին: Խուբան հայոց Ծովիմարն է, որը հղիանում է գետակունքի ջրից:

«Խուբուշկիայի» այս ստուգաբանության ճշմարտացիությունը կարելի է փաստել ևս չորս մտտեցումներով.

I. Խուբուշկիա երկրի տարածքից սկիզբ են առնում բազմաթիվ գետեր՝ Ջերմը, Արլ. Խաբուրը, Խեզիլը և նրանց վերին ավազանի բազմաթիվ վտակները, Մ. Ջաբի վտակները: Միայն Շատախի տարածքից բխում են 30-ից ավելի գետեր.

II. Ահա այդ պատճառով է, որ Խուբուշկիան կոչում էին նաև Նաիրի՝ «Գետերի երկիր».

III. Միջագետքյան պատկերացումներով Եփրատն ու Տիգրիսը սկիզբ էին առնում Թիամաք (քառացի՝ «ծով») դիցուհու գույգ աչքերից. որ Հայկական լեռնաշխարհում ևս գոյություն է ունեցել մամատիպ պատկերացումներ, երևում է, օրինակ, աղբյուրների, գետերի բխելու տեղը ակ, ակունք, աչք կոչելուց: Հանձինս «Խուբուշկիայի», գործ ունենք հինարևելյան դիցաբանական մի պատկերացման հետ, որը կապված է երկնային և ստորերկրյա ջրերի հովանավոր դիցուհի Խուբա-Հովայի հետ.

IV. Խուբուշկիա-Ջայլամար նույնականությունը ենթադրում է նաև անվանական կապ: Թովմա Արծրունին Ջայլամար անունը կապում է մի կնոջ հետ: Այն ակնհայտորեն կազմված է «ջայլ» և «մար» բառերից: Իսկ «ջայլ» անվանում են հանգուցիայի վրա լացողների խմբին, «ջայլական» նշանակում է «ողբական», իսկ «ջաղել»՝ «ողբալ», «ջաղք», «ջաղջ»՝ «տեղատարափ անձրև»: «Մարը» նույն «մարե-մայրն» է: Փաստորեն, «Ջայլամար» նշանակում է «Լացող, արտասովող մայր», որը իմաստային առումով նույնական է «Խուբայի աչքերին»:

Ինչ վերաբերում է «Նաիրի»-ին, ապա արայո՞ք այն չի բխում հնդեվրոպական **Յեր* արմատից, որի հետ են առնչվում իլիր. Նորեյան՝ Նորիկ քաղաքի գլխավոր աստվածուհին, գերմ. Ներթուսը՝ մայր հողի աստվածուհին, սկանդինավ. Նյորդըը, սաբին. Ներիոն՝ պատերազմի Մարս աստծու զուգակցուհին, հուն. Ներեսի՝ ծովային աստվածը՝ ջրային դիցուհիներ Ներեիդների հայրը:

Հայոց մեջ անձրևաբեր ծեսի հերոսը կոչվում է Նուրին, որը Նար վերականգնվող դիցանվան աղավաղված ձևն է և բխում է նույն **Յեր*-ից: Այս արմատն է իր մեջ կրում նաև «Ծովիմարը»:

Արքադակյան *naru*՝ «գետ», ասորական *nora-nuira*, արաբական՝ *նար*՝ «կրակ», սեմական լեզուների *nur*՝ «զույս» բառերը հուշում են, որ դրանք հնդեվրոպական **Յեր*-ի հետ կապված են փոխառության սկզբունքով, կամ մոստրատիկ ընդհանրությանը: Հետաքրքիր է այն, որ հայերեն բարբառներում կայծակ-փայլակին անվանում են նաև «Ծովիմար», այսինքն՝ ջուրն ու կայծակ-որոտը ընդհանրացնող երկնային աստվածության պաշտամունքը հնդեվրոպա-

կան և սեմական լեզուներում իմաստային առումով դրսևորվել է *ջուր-անձրև-գետ-ծով* և *կրակ-շույս-կայծակ* ձևերով:

Վերոշարադրայից երևում է, որ ինչպես «Նորուշկիա», այնպես էլ «Նախիր» տեղանունները կապված են հնդեվրոպական աշխարհի հետ և իրենց ուղղակի բացատրությունն ունեն հայերենում:

ԱՍՅՐԱՍՏՅԱՆ ԼԻԼԻԹ (ԵՊՀ)

**ԿԻՆ ԱՐՁԱԿԱԳԻՐՆԵՐԸ ՀԵՏՀԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԻՐԱՆԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՇԱՀՐՆՈՒԾ ՓԱՐՄԻՓՈՒԻ**

Իրանական իսլամական հեղափոխությունից հետո կին մտավորականների ինտեգրացումը երկրի հասարակական-մշակութային կյանքին նշանավորվեց նոր վերելքով: Մեծ էր հատկապես նրանց դերը գրականության մեջ, որը դարձավ եզակի զենք՝ պայքարելու կնոջ ինքնության եւ իրավունքների համար:

Սկսած 1980-ականների սկզբներից կին արձակագիրները իրենց ստեղծագործություններում առաջնային դարձրեցին ֆեմինիստական թեման, ինչը իր հետ բերեց նաև քննատիկ և ոճաբանական փոփոխություններ. մասնավորապես, նախահեղափոխական արձակում իշխող սոցիալական ռեալիզմից անցում կատարվեց «նոգական» ռեալիզմի:

Հետհեղափոխական իրանական արձակը, որպես զարգացող ժանր, գրական ճանաչում բերեց այնպիսի հայտնի կին գրողների, ինչպիսիք էին Սիմին Դանեշվարը, Շահրնուշ Փարսիփուրը, Մունիրու Ռավանիփուրը, Սիմին Բիհ-բահանին, Գոլի Թարադին:

Նրանցից իր ստեղծագործության քննատիկայի բազմազանությամբ և գաղափարական նպատակաուղղվածությամբ, ինչպես նաև գեղագիտական բարձր արժանիքներով առանձնանում է Շահրնուշ Փարսիփուրը: Նա մեր օրերի պարսիկ այն եզակի կին արձակագիրներից է, որի ստեղծագործությունները բարձրանվել են բազմաթիվ լեզուներով և մեծ ճանաչում ունեն աշխարհում: Իսլամական հեղափոխությունից հետո նրա անունը գրական ու մտավորական շրջանակներում դարձավ ամենավիճահարույցը: Մասնավորապես, մեծ հասարակական հնչեղություն ստացան նրա «Թուրան եւ գիշերվա իմաստը» և «Կանայք առանց տղամարդկանց» վեպերը:

Շահրնուշ Փարսիփուրի ստեղծագործությունների գիտական քննությանն են անդրադարձել արևմտյան գրականագետներ Զ. Թալաթովը (ԱՄՆ), Ֆ. Միլանին (ԱՄՆ), Ն. Ռահիմյեն (Կանադա) և այլոք: Ցավոք, մեզանում նրա ստեղծագործությունները դեռևս ուսումնասիրված չեն:

Փարսիփուրի գեղարվեստական արձակին հատուկ են այուժեի ինքնատիպ շարադրանքը և արևելյան վեպի քնորոշ կառուցվածքի տարրերը: Նա իր ամենաճանաչված ստեղծագործություններից մեկում՝ «Կանայք առանց տղա-

մարդկանց» վնասում օգտագործում է սանսկրիտական «շրջանակված վիպակի» կոմպոզիցիան, որը ավելի ցայտուն է դարձնում վնասի փոքրածավալ դրվագների շարադրանքը:

Փարսիփուրը առաջիններից էր, որը խոսեց ժամանակակից իրանական հասարակության մեջ *թարոի* ենթարկված թեմաների շուրջ և անցում կատարելով ավանդականից դեպի արդիականը՝ պատկերեց ժամանակակից իրանական կնոջ անկախ, անկոտրուր տարրերը:

Շ. Փարսիփուրը այսօր էլ, գտնվելով վտարանդիության մեջ, շարունակում է ստեղծագործել և մնալ հանրաճանաչ իր հայրենիքում:

ՍՄՐԱՅՅԱՆ ՌՈՍՄԱՆ (ԵՂՂ)

ԻՄՐԱՅԵԼԸ ԵՎ ԶԻՂԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Իսրայելի վերաբերմունքը և քաղաքականությունը քրդական հարցի մկատմամբ և, ընդհանրապես, իսրայելա-քրդական հարաբերությունները ցայժմ պատշաճ ուշադրության չեն արժանացել: Չնայած դրան, վերջին տարիներին մի շարք թերթային և ինտերնետային հրատարակումներում այս խնդրից քննարկման և վերլուծության առարկա է դարձել (հատկապես պետք է մշել թուրք հեղինակ Հարուն Յահյայի (Ադնան Օկտար) «Իսրայելի քրդական խաղաքուղիքը» ("İsrail'in kür kartı") գիրքը, որն առայժմ առկա է միայն թուրքերենով):

Հրեաների և քրդերի առնչությունները դարավոր պատմություն ունեն: Կան քրդերի ծագման վերաբերյալ գիտական բազմաթիվ վարկածներ, որոնք ներառում են պատմական, հնագիտական, լեզվաբանական և մարդաբանական տվյալներ. առավել հավաստի են ժամանակակից գիտության այն տվյալները, ըստ որոնց քուրդ էթնոնիմի տակ համդես եկող ժողովուրդը պատմական ասպարեզում հայտնվում է սելջուկյան տիրապետության շրջանում (11-12-րդ դարերում): Հետևաբար, քուրդ-հրեական առնչությունների սկզբնավորումը կարող է թվագրվել հենց այդ դարաշրջանով: Հայտնի է նաև, որ ներկայիս «Եթնիկ Զրդստանի» և, հատկապես, նրա իրաքյան շրջանում հրեաները հայտնվել են դեռևս Ջ.ա. 8-րդ դարից սկսած: Հետագայում հրեաների թիվն այստեղ ստվարացել է և տարածվել է նաև նրանց կրոնն ու մշակույթը: Իսկ 11-12-րդ դդ. սկսած և հետագա դարերի ընթացքում ներկայիս Իրաքի հյուսիսային շրջանում բնակվող քրդերի մի մասը ընդունում է հուդայիզմը և սկսվում է ձևավորվել քուրդ հրեաների էթնիկական խումբը, որն իր յուրահատուկ կենցաղով, մշակույթով և լեզվով մինչ այժմ էլ առանձնանում է այս բազմակրոն և բազմազգ տարածաշրջանում: Նույնիսկ ըստ որոշ հրեական հայտնի լեգենդների՝ քրդերը սերում են հրեական ընդհանուր էթնոսից բաժանված մի ճյուղից, ինչպես նաև քրդերի ծագումը կապում են Սողոմոն արքայի հետ:

Հրեա քրդերին անվանում են նաև Ջաքոյի հրեաներ, ասորական հրեաներ: Մինչև 1948թ. Իսրայել պետության ստեղծումը, դեռ 20-րդ դարի 30-ական թթ. սիոնիստական գաղափարախոսները և արդեն ձևավորված հրեական հաստիկ ծառայությունները Իրաքի հյուսիսում բնակվող հրեա քրդերին դիտում էին որպես իրենց ներկա և ապագա դաշնակից, նրանց շրջանում հատուկ ծառայություններ կատարում էին հրեական և ասորական երկրներում լրտեսական տեղեկատվական գործունեություն ծավալելու նպատակով: Հարկ է նշել, որ մինչև 1948թ. Իսրայել պետության ստեղծումը և արաբա-իսրայելյան բացահայտ պատերազմի սկսվելը, Իրաքում հրեա քրդերը գտնվում էին տնտեսական և մշակութային զարգացման բարենպաստ պայմաններում: Սակայն վիճակը կտրուկ փոփոխություն կրեց 1948 և, հատկապես, 1950 թվականից սկսած, երբ իրաքյան իշխանությունները Իրաքի տարածքում բնակվող հրեա քրդերին հայտարարեցին սիոնիստական լրտեսներ և սկսեցին հետապնդել և արտաքսել նրանց: Ընդհանուր առմամբ 1950-ական թթ. սկզբին բռնի և կամուսկյան Իրաքից Իսրայել գաղթեց շուրջ 130 հազար հրեա քուրդ և Երուսաղեմը դարձավ հրեա քրդերով բնակեցված խառնագույն կենտրոնը:

1948թ. իր հիմնադրումից սկսած Իսրայել պետությունը որդեգրեց սիոնիզմի մասը կազմող արտաքին քաղաքական կոնցեպցիա, որը հայտնի է պերիֆերային (ծայրամասային) ռազմավարություն անվամբ (Theory of Allying Periphery): Այս ռազմավարությունը հիմնական դրույթներից մեկը հետևյալն էր. Իսրայելը շրջապատող բշտամի արաբական երկրներում ազգային և կրոնական փոքրամասնությունների իրավունքները շահարկելով, նրանց շրջանում նպաստել ազգային և կրոնական ինքնագիտակցության բարձրացմանը և այդ խմբերին իսրայելյան արտաքին քաղաքական շահերին համահունչ օգտագործելը: Այս առումով հատկանշական է Իսրայելի վարած քաղաքականությունը քրդական խմբի վերաբերյալ:

1960-ական թթ. սկզբին սկսվեցին քրդական զինված լույսները իրաքյան իշխանությունների դեմ: Այս շրջանում Իսրայելը սկսեց ակտիվորեն զենք ու զինամթերք մատակարարել և ռազմավարմանը կազմակերպել քրդական զինված ջոկատներն մարտնակ դարձնելու նպատակով: Թեև 1960-ական թթ. սկսած մինչև 1975թ. Իսրայելի կողմից քրդերին ցույց տրված օգնության համար իրականացված հատուկ գործողությունները մինչև այժմ գաղտնի են պահվում, տարբեր գնահատականներով Մոսսադի, իսրայելական բանակի և ռազմական հետախուզության հազարավոր գործակալներ և սպաներ դարանակավանա տարբեր ձևերով գտնվում էին Իրաքյան Քրդստանում և կատարում էին հատուկ հանձնարարականներ: Այս մասին հատկապես հետաքրքիր մանրամասներ է հայտնում Մոսսադի նախկին գործակալ Վիկտոր Օստրովսկին: Քրդական հետախուզական հատուկ ծառայությունը՝ Փարասթընը (Parastin) նույնպես հիմնվեց 1960-ական թթ. վերջերին Մոսսադի անմիջական օգնությամբ: Ինչպես է նշել, որ 1960-1975թթ. Իսրայելի կողմից քրդերին օգնելու գոր-

ծուս մեծ դեր ունեին 1950-ական թթ. սկզբին Իրաքից Իսրայել գաղթած հրեա քրդերը, որոնց հիշողության մեջ դեռ մնացել էին իրենց եղբայր ժողովրդի հետ ունեցած բարեկամական հարաբերությունները և Իրաքի քրդերի ցուցաբերած օգնությունը իրենց արտաքսման ժամանակ:

Սակայն 1975թ. Իրանի և Իրաքի միջև կնքված այժիրյան համաձայնագրից հետո Իսրայելը դադարեցրեց իր բազմակողմանի օգնությունը քրդերին:

Իսկ 1980-1988թթ. Իրան-Իրաքյան պատերազմի ժամանակ Իսրայելը, վտանգ տեսնելով թե՛ Իրաքից և թե՛ հատկապես արդեն հռչակված Իրանի Իսլամական Հանրապետությունից, ԱՄՆ-ի աջակցությամբ և գործուն մասնակցությամբ ամեն կերպ ձգտում էր երկարաձգել այդ պատերազմը՝ խրախուսելով իրաքյան քրդերի անջատողական նոր ելույթներ, փորձելով նույնը տարածել նաև Իրանի քրդերի շրջանում:

Համաձայն Հարուն Յահյայի՝ Իսրայելը գաղտնի օգնել է նաև Թուրքիայում 1980-ական թթ. կեսերին ծագած քրդական նոր ապստամբության մասնակիցներին, չնայած պաշտոնական Թեյ Ավիլը միշտ էլ հերքել է Թուրքիայի քրդերին աջակցելու փաստը՝ անվանելով նրանց ահաբեկչական խմբեր և բազմիցս խրախուսել թուրքական իշխանությունների՝ քրդերի դեմ կիրառած բռնությունները:

Այս ամենը փաստորեն վկայում է այն մասին, որ Իսրայելը միշտ էլ քրդերի հանդեպ վարել է երկակի ստանդարտների քաղաքականություն՝ օգտագործելով նրանց իբրև գործիք իր տարածաշրջանային քաղաքականության իրականացման ճանապարհին: Սրա վառ ապացույց կարող են հանդիսանալ ՔԱԿ (PKK) առաջնորդ Ա. Օջալանի ձերբակալության գործում Մոսսադի անմիջական մասնակցության մասին լուրերը, թեև սա էլ հերքվեց Իսրայելի կողմից:

Այսպիսով՝ Իսրայելի քաղաքականությունը քրդերի նկատմամբ միշտ էլ բխել է հիմնականում և առաջին հերթին Իսրայելի արտաքին քաղաքական շահերից և դրա առանձնահատկությունների և նպատակների բացահայտումը կարևոր նշանակություն ունի ոչ միայն քրդական խնդրի ուսումնասիրման, այլև ընդհանրապես այս բազմաբնույթ և կոմֆլիկտոզեն տարածաշրջանի խնդիրների լուսաբանման համատեքստում:

ԱՏԵՓԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ (ՈՒԻ)

ԻՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՅՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԵՐԱՇԽԻԲ

20-րդ դարի սկզբին Իրանի ներքաղաքական լարված մթնոլորտում առաջնային խնդիր էր երկրում կայունության ապահովումը, որի համար անհրաժեշտ էր ստեղծել հզոր կենտրոնական կառավարություն, որն էլ հնարավոր էր հզոր

քանակի առկայության պայմաններում: Քաջ գիտակցելով դրա անհրաժեշտությունը՝ Ռեզա խանը ձեռնամուխ եղավ այդ խնդրի լուծմանը:

1921թ. դեկտեմբերին Ռեզա խանի հրամանով լուծարվեցին Ղաջարական դիմաստիայի տիրապետության շրջանում առկա բոլոր անկայիս զինված միավորները, և ստեղծվեց առաջին միասնական կանոնավոր ազգային բանակը Իրանում: Հիմնվեց հուսալի ոստիկանական կորպուս, ճանապարհների ավտանգությունն ապահովելու համար ստեղծվեց Ժամդարներիայի հատուկ բաժին, ինչպես նաև գաղտնի քաղաքական ոստիկանություն, որը դարձավ Ռեզա Փահլավիի իշխանության ամենագորեղ հենարաններից մեկը:

Բանակի կարևորագույն խնդիրներից էր նաև համապատասխան սպայական անձնակազմ ստեղծելը, որի համար Մեջլիսը միջոցներ տրամադրեց՝ իրանցիներին Ֆրանսիայի ռազմական ակադեմիաներ ուսման ուղարկելու նպատակով: Ստեղծելով արհեստավարժ սպայակազմ՝ Ռեզա շահը ձեռնամուխ եղավ ռազմական ուսումնական համընդհանուր ծրագրի իրագործմանը:

1925թ. Մեջլիսն ընդունեց Համընդհանուր զինապարտության մասին օրենքը, որը առաջ էր բերում զգալի սցիսթական փոփոխություններ, որոնցից յուրաքանչյուրը արդիականացման և զարգացման համընդհանուր ծրագրի կարևոր մասն էր կազմում: Ռեզա շահի հրամանով ազնվականների, ցեղերի առաջնորդների և հասարակ գյուղացիների զավակները պետք է ծառայեին նույն զորամասերում: Համընդհանուր զինվորական ծառայության մասին օրենքը 1938թ. փոխարինվեց վերանայված օրենքով, որը ապահովում էր ծառայության ավելի կարճ ժամկետներ և առաջխաղացման ավելի կարճ սանդղակ միջնակարգ դպրոցների և բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների համար:

Ի տարբերություն հին օրենքի, որի համաձայն հոգևորականությունը ազատված էր զինվորական ծառայությունից, նոր օրենքը նրանց համար սահմանում էր երկամյա պարտադիր ակտիվ ծառայություն՝ ազատելով պահեստային ծառայությունից:

Բանակի ձևավորման գործընթացում կարևոր քայլ էր նաև երկրում ռազմական օդուժի և նավատորմի ստեղծումը:

Բանակի սպառազինությունը մատակարարվում էր Եվրոպայից: Համաձայն Իրանի կառավարության պաշտոնական տվյալների՝ 1921-1941թթ. ընթացքում ընդհանուր եկամուտների միջին հաշվով 33,5% նախատեսվում էր ռազմական նպատակների համար:

Երբ Ռեզա շահը զգաց, որ բանակը մարտունակ է, նա ձեռնամուխ եղավ կենտրոնախույս ցեղերի խնդրի լուծմանը: Այդ ուղղությամբ նա ձեռնարկեց մի շարք միջոցառումներ, որոնցից էին ցեղերի բռնի «քնակեցման» քաղաքականությունը, ցեղապետների չեզոքացումը խոշտանգումների, ձեռքակալությունների, տնային կալանքի միջոցով: Իր կառավարման շրջանում Ռեզա շահը կարողացավ քուլացնել կենտրոնախույս ցեղերին և հաստատել հարաբերականորեն կենտրոնացված իշխանություն:

Հարկ է նշել, որ Ռեզա շահին հաջողվեց մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը երկրում ստեղծել մոտավորապես 400.000-անոց արդիական բանակ, որն ի վիճակի էր լուծելու երկրի ներքաղաքական խնդիրները, սակայն անգոր գտնվեց 1941թ. Դաշնակիցների կողմից երկրի բռնազավթման առջև:

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՒՀԱՐ (ԵՀԱՀ)

ԱՐԴՈՒՆ ԲԱՀԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Բաքիականությունը ծագել է 19-րդ դարի 40-ական թթ. Իրանում: Նրա առաջնորդ Բաբը՝ Մեյեդ Ալի Մոհամմադը (1819-1850թթ.), 1844թ. հայտարարում է, որ ինքն է այն ավետավածը, որին փնտրում են շեյխիները: Դրանից հետո նա իր հետևորդներին ուղարկում է երկրի տարբեր կողմեր՝ ավետելու ուրիշ, ավելի մեծ պատգամաբերի՝ «նրա, ում ի հայտ կբերի Աստված», մոտալուտ զալուստը: Բաբն իր վարդապետության պատճառով ենթարկվում է հալածանքների և զնդակահարվում 1850թ. Թավրիզում:

Նրա գործը շարունակում է աշակերտներից մեկը՝ Միրզա Հուսեյն Ալին (1817-1892թթ.), որն իրեն անվանում է Բահաուլլահ և դառնում նոր կրոնի անվանադիրը: Թեհրանում բանտարկվելուց հետո, արտոլվելով Բաղդադ, 1863թ. հրապարակայնորեն հայտարարում է իր առաքելության մասին, որ ինքն այն ավետավածն է, որի զալստյան մասին պատգամել էր Բաբը:

Բահայիները իրենց կրոնը համարում են համաշխարհային, ընդունում են բոլոր ազգերի եղբայրությունն ու հավասարությունը, միաստված են, Բուդդային, Կրիշնային, Չրադաշտին, Մովսեսին, Հիսուսին և Մոհամմեդին ընդունում են որպես այդ միակ Աստծո մարգարեներ և, ըստ այդմ, վերջին մարգարեն Բահաուլլահն է, իսկ Բաբը նրա մախակարապետը: Բահաուլլահի մահից հետո, կտակի համաձայն, նրա ավագ որդի Աբբաս էֆենդին (1844-1921թթ.), որը ուներ Աբդուլ Բահա տիտղոսը, նշանակվեց Բահաուլլահի ժառանգորդ: 1910-1913թթ. նա բահայական ուսմունքը տարածելու նպատակով ուղևորվում է Եգիպտոս, Եվրոպա և Հյուսիսային Ամերիկա, իսկ կյանքի մայրամուտին նա արդեն հետևորդներ ուներ 35 երկրներում: Ներկայումս աշխարհի տարբեր վայրերում բնակվում է ավելի քան 5 միլիոն բահայի:

Կարծում ենք, շատերի համար հետաքրքրական կլինի այն, որ Աբդուլ Բահայի մամակներում հիշատակվում են Երևանը և Հայաստանը:

Նա Հարավային Կովկասում բահայական կրոնի քարոզիչներից մեկին՝ Մաշհադի Աբդուլ Ղարաբաղիին 1910թ. յուրահատուկ ռոնով գրում է. «Թիֆլիսում եռգին անզնահատելի կդառնա, Երևանում այս պարզևն (կրոնը - Գ.Վ.) ընդունողը ռոտրմած կդառնա, Գյանջայում (Գանձակում - Գ.Վ.) զանձի դուրը կբացի և Շիրվանում կատաղած առյուծի նման կմոնչա»:

1917թ. փետրվարի 3-ին Հայֆայում գրված և ԱՄՆ-ի հարավային տասնվեց նահանգների (Դելավեր, Մերիլենդ, Վիրջինիա, Արևմտյան Վիրջինիա, Հյուսիսային Քարոլինա, Հարավային Քարոլինա, Ջորջիա, Ֆլորիդա, Ալաբամա, Մյասսիսիպի, Թեննեսի, Կենտուքի, Լուիզիանա, Արկանզաս, Օկլահոմա, Տեքսաս) բահայիներին հասցեագրված նամակում Արդու Բահան շատ բարձր է գնահատում Հայաստանի քրիստոնեացումը. «Մտավորապես երկու հազարամյակ առաջ Հայաստանը պատված էր անթափանց խավարով: Բայց ահա Քրիստոսի աշակերտներից մի օրինյալ հոգի եկավ այս երկիրը և նրա ջանքերի շնորհիվ շուտով այս երկիրը լույսով ողողվեց: Այսպես հայտնվեց Աստուծո՞րավորության հզորությունը»:

Արդու Բահան քողել է ահռելի տպագիր և անտիպ ժառանգություն, և մենք հուսով ենք, որ ապագայում ևս կգտնենք Հայաստանի մասին այլևայլ հիշատակումներ:

ՏԵՐ-ՎԱՐՂԱՆՅԱՆ ՆԵՐՍԵՍ (ԱԻ)

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ - ՀՈՌՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 14-ԴԴ ԴԱՐԻ
ՍԿՁԲԻՆ. 1307 Թ. ՍՍԻ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՄՈՒՎԻ
ՍԿՁԲՆԱՊԱՏՏԱՌՆԵՐԸ

Կիլիկյան Հայաստանի (1080-1375թթ.) պատմությունը, պետականության ստեղծման պահից մինչև անկում, ունեցել է յուրօրինակ ընթացք, որ մասամբ պայմանավորված էր նաև երկրի աշխարհագրական դիրքով՝ Սուրբ Երկրի խաչակրաց տիրույթներին, որով և՛ եվրոպական քաղաքական աշխարհին ավելի մոտ գտնվելու հանգամանքով: Այս տարածքում հայկական տարրի վաղուց ի վեր գոյությունը, ապա՝ գերակշռումը հիմնականում հայրենի երկրից հայերի հարկադրական հեռացումների հետևանք էր:

Կիլիկյան Հայաստանի պատմության լուսաբանման և վերլուծության համար, անշուշտ, ահմրածելու է մախ և առաջ ուսումնասիրել այդ պետության ներքին անցուղարձեղը՝ քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքը: Սակայն երևույթներն ամբողջապես և համակողմանի պատկերացնելու համար պակաս կարևոր չեն նաև հարևան պետությունների և այդ ժամանակաշրջանում որոշակի կշիռ ունեցող քաղաքական միավորների հետ միջազգային հարաբերությունները: Այս տեսանկյունից Կիլիկյան հայկական քաղաքականության և Հռոմի պապի գլխավորած կաթոլիկ եկեղեցու միջև եղած հարաբերությունները գրեթե միշտ եղել են առաջնային:

13-րդ դարի վերջը և 14-րդ դարի առաջին կեսը պատկերվում են որպես մի ժամանակաշրջան, երբ Կիլիկյան հայկական քաղաքականությունը, կորցնելով իր նախկին հզորությունը, հայտնվել էր սելջուկ-թուրքերի և Եգիպտոսի մամլուքների նվաճողական ծրագրերի շրջանակների մեջ, որից դուրս գալու հավանա-

կան միակ ելքը Կիլիկյան իշխողները պատկերացնում էին Եվրոպայից օգնություն ստանալու միջոցով: Եվ քանի որ մուսուլմանների տիրապետության տակ հայտնված «Սուրբ Երկիրը» (Պաղեստինը) ազատագրելու համար Հռոմի պապերի կողմից կազմակերպված խաչակրաց արշավանքներն արդեն պապականությանը տվել էին «քրիստոնյա ազգերի ազատարարի» որոշակի համրավ, ուստի Հայոց թագավորները մի քանի դեսպանություններ ուղարկեցին Եվրոպա՝ խաչակրաց նոր արշավանք կազմակերպելու խնդրանքով: Փոխարենը պապականությունը կրկին և կրկին պահանջում էր հավատափոխություն՝ կաթոլիկության եւ պապի գերիշխանության ընդունում: Խնդրի քննարկման համար 1307 թ. Կիլիկիայի Սիս մայրաքաղաքում հրավիրվեց եկեղեցական ժողով, որը տվեց կրոնափոխության վերաբերյալ իր համաձայնությունը: Ժողովրդի մեծագույն մասն ընդդիմացավ այդ որոշմանը, ուստի և միաբանությունն իրական չեղավ: Մակայն կաթոլիկություն ընդունելու կամ չընդունելու խնդրի այս կերպ և այս որակի քննարկումն արդեն պարզաբանումների կարիք է առաջացնում:

Պատմագիտության մեջ առ այսօր տիրապետում է այն կարծիքը, որ Սսի և Ադանայի ժողովները եղել են Կիլիկյան թագավորների և իշխող վերնախավի ազգային դավաճանության և միջազգային դիվանագիտության մեջ պարտության դրսևորումներ: Մակայն այդ ժողովների որոշումներն առաջին հերթին պետք է ունենային իրենց խորքային դրդապատճառները, ուստի խնդիրը գիտական խորը վերլուծության կարիք ունի: Չէ՞ որ դավանափոխությունն առաջին հերթին քաղաքական բովանդակություն ունի և ո՛չ սոսկ եկեղեցական:

Ուսումնասիրելով 14-րդ դարի սկզբի հայ-եվրոպական հարաբերությունները, հիմնվելով հավասարապես թե՛ հայկական և թե՛ լատինալեզու սկզբնաղբյուրների (առանձնապես՝ պապական գրասենյակի փաստաթղթերի) վրա, կարևոր ենք համարում դավանափոխության խնդրի քննությունը դիտարկել նաև գուտ դիվանագիտության տեսանկյունից, պարզաբանել քաղաքական ուժերի այն դասավորությունը, որ առկա էր Եվրոպայում և Մերձավոր Արևելքում 13-րդ դարի վերջին և 14-րդ դ. սկզբին, պարզել կաթոլիկությունն ընդունելու որոշում կայացնելու քաղաքական դրդապատճառները և հատկապես՝ սպասելիքները Հռոմի պապերից: Անհրաժեշտ ենք համարում պարզել նաև քաղաքական և տնտեսական այն նկատառումները, որ Հռոմի պապերն ունեին Կիլիկյան Հայաստանին կրոնափոխության պահանջ առաջադրելով: Միաբանական ժողովի հետևանքով Կիլիկյան Հայաստանի հասարակական (սոցիալական) կյանքում տեղի ունեցած ցնցումների պատմության պատկերի պարզաբանումը ևս համարում ենք կարևոր և անպայման քննության ենթարկելի հարց:

**ՎԱՀՀԱՔԱԿԱՆ ԸԱՎԱԲԵԿՉՈՒԹՅԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ
ԳՈՐԾՈՆ**

Միջազգային հարաբերությունների արդի փուլում մեծ տարածում ունի մահմեդական ահաբեկչությունը, որն ի հայտ եկավ իսլամի քաղաքականացման արյունքում: Այն մաս է կազմում միջազգային ահաբեկչությանը և գործում է թե՛ իսլամի տարածման ավանդական շրջաններում, թե՛ դրա սահմաններից դուրս: Ահաբեկչական գործողություններ իրականացվել են հիմնականում իսլամական կրոնա-քաղաքական արմատական կազմակերպությունների կողմից: Մինևույն ժամանակ հարկ է նշել, որ միջազգային իսլամական ահաբեկչության տարածմանը մեծապես նպաստել են աշխարհով մեկ սփռված իսլամական քարոզչական և բարեգործական հաստատությունները, որոնց գործունեությունը խարսխված է իսլամական ճա՛հա-ի (արաբերեն՝ կոչ, պահանջ) հիմքի վրա:

Իսլամական ճա՛հա-ի շարժումը տարողունակ հասկացություն է և ընդհանուր առմամբ քարոզչական նպատակներ է հետապնդում: Ըճա՛հա-ի շրջանակները զբաղվում են իսլամի քարոզչությամբ թե՛ մահմեդականների, թե՛ ոչ մահմեդականների շրջանում, տարաբնույթ ծրագրերի ֆինանսավորմամբ, տեսական (Indoctrination) և գործնական ուսուցմամբ (training), կրոնական քարոզչական գրականության տարածմամբ, տեղեկատվության փոխանակմամբ, ինչպես նաև իսլամական աշխարհին սպառնացող արտաքին և ներքին վտանգները կանխելու ուղղությամբ:

Կարելի է առանձնացնել ճա՛հա-ի գործունեության միջազգային և տեղական մակարդակները: Վերջինիս շրջանակներում մահմեդականները ձգտում են հետամուտ լինել իրենց համայնքներում սոցիալական, կրթական և մշակութային խնդիրների լուծմանը, ինչպես նաև՝ արդիականացման գործընթացներին, սակայն բացառապես իսլամի տեսանկյունից:

Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում Մատոյան Արաբիայի կողմից սկզբնավորված միջազգային ճա՛հա-ի շարժումը, որը, որպես իսլամի հայրենիք, արդեն քառորդ դար հանդես է գալիս իսլամական արժեքների պահպանման և իսլամական աշխարհին հուզող խնդիրները համակարգելու հավակնությամբ: Նավթային հսկայական հասույքներ ունեցող այս երկրի գործուն միջամտությամբ են հիմնվել միջազգային այնպիսի խոշոր կառույցներ, ինչպիսիք են Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը, Չարգացման իսլամական բանկը, Մահմեդական երիտասարդների միջազգային ասամբլեան, Իսլամական աշխարհի լիգան (ԻԱԼ) և այլն: ԻԱԼ-ն ստեղծվել է 1962-ին Մեքսիկոյում և ողջ գոյության ընթացքում համակարգել վահիաբական ճա՛հա-ն: Լիգային ներկայումս ներակա են հարյուրավոր բարեգործական հաստատություններ ու հիմնադրամներ: ԻԱԼ կանոնադրության մեջ մասնավորապես

նշված է, որ այն որևէ ջանք չի խնայի մահմեդականների միավորման համար՝ այդ նպատակի համար օգտագործելով քարոչական, մշակութային և նյութական հնարավոր միջոցները:

Վահհաբական քարոզչության մասշտաբներն ու ծավալն աննախադեպ են: Վերջին քառորդ դարի ընթացքում Սաուդյան Արաբիան իր քարեգործական հիմնադրամների միջոցով միլիարդավոր դոլարներ է ծախսել աշխարհի մի քանի տասնյակ երկրներում մարզական ճամբարներ ստեղծելու, զենք գնելու, վարձկաններ հավաքագրելու, վահհաբական մզկիթներ, մեդրեսեներ և կրոնական կենտրոններ հիմնելու և վահհաբական գրականություն տարածելու համար: Վահհաբական քարոզչության արդյունքում աշխարհում մեծ տարածում են գտել իսլամական արմատական հոսանքները, համակարգվել և ընդլայնվել է Ջիհադի շարժումը:

2001թ. սեպտեմբերի 11-ից հետո միջազգային ահաբեկչության դեմ ծավալված պայքարի արդյունքում պարզ դարձավ, որ da'wa-ի շարժման հաստատություններից շատերը (որոնցից է սաուդական «ալ-Հարամեյնը») անմիջականորեն կան ոչ անմիջականորեն կապված են ահաբեկչության հետ: Փաստորեն, վահհաբական da'wa-ի շուրջ քառորդ դար տևած գործունեությունը իր մի ծայրով հանգեցրել է ծայրահեղ իսլամի և համաշխարհային ահաբեկչության տարածմանը:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԻ – ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ

ԳԻ – ՀՀ ԳԱԱ Գրականության ինստիտուտ

ԵՊՀ – Երևանի պետական համալսարան

ԵՀԱՀ – Երևանի «Հրաշյա Աճառյան» համալսարան

ՊԻ – ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՔԱՐԱՅԱՆ ՆԱԽԲԱ (ԱԻ)

ՀԱՅ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԴԻՔՈՐՈՇՈՒՄԸ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՅԻ ՇՈՒՐՁ (1908-1912թթ.) 1

ԳՍՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՐ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՍՈՒՐԻԱԿԱՆ ՎԱԼԱՅԵԹՆԵՐՈՒՄ ԱՐԱՔԵՐԵՆ ԼԵԶՎԻ ՎԻՃԱԿԸ ԵՐԻՏԹՈՒՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐՈՔ 2

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՈՈ (ԱԻ)

ԵԳԻՊՏՈՍԻ ԴԻՔՈՐՈՇՈՒՄԸ
ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՀԱՐՅԻ ՀԱՆԴԵՊ 1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 4

ԳՐԵԿՅԱՆ ԵՐՎԱՆԴ (ԱԻ, պ.գ.ք.)

ԽԱԼԴԻ՝ ԱՐՔԱ ԵՎ ԱՍՏՎԱԾ 5

ՉՈՒՐԱՔՅԱՆ ԼԵՎՈՆ (ԱԻ)

ՀՐԵԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԵՍԼՈՒ ԽՆԴՐՈՒՄ ՀՐԵԱՆԵՐԻ
ԴԻՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՅԻ ՇՈՒՐՁ 8

ԹԻՆՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻՒԿԻԱՆ 1375-1600 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 9

ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ (ԱԻ, պ.գ.ք.)

ԻՐԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ ԱԶԴԵՅԻԿ ԳՈՐԾՈՆ
(1960-1970-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ) 11

ԽԱՆՁԱԴՅԱՆ ՄԱՐԻԱՐ (ԱԻ)

ԽԵԹԱ-ԻՍՈՒՎԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (Զ.Ա. XIII ԴԱՐ) 12

ԽԱՏԱՄԻՏԻՐԳՈՐԴԻ ՅՐԻԿ (ԵՊՀ)

ԱՄՆ-Ը ԵՎ ԻՐԱՔ-ԻՐԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ 1980-1988 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 13

ԽՈՍՐՈՆԵՎԱՆ ԱՆԱՀԻՏ (ՊԵ, պ.գ.ք.)

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՓՐԿՎԱԾ ԱՍՈՐԻՆԵՐԻ ՎԻՃԱԿ
ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՑ ՀԵՏՈ 13

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՆԱԽԲԱ (ԱԻ)

ԳՐԱԿԱՆ ԱՐԱՔԵՐԵՆ ԼԵԶՈՒՆ, ԲԱՐՔԱՆՈՆ ՈՒ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
XX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻ ԵԳԻՊՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԱՐՉԱԿՈՒՄ 15

ԿՈՍՏԻԿՅԱՆ ԹՐԻՍՏԻՆԵ (ԱԻ, պ.գ.ք.)

ՄԵՖՅԱՆ ԳԱՀԱԿԱԼ ԹԱՀՄԱՍՊ II-Ի ՀԱՅԵՐԻՆ ՈՒՂԴՎԱԾ ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐԸ ԵՎ
1731 ԹՎԱԿԱՆԻ ՆՐԱ ԱՆՀԱՋՈՂ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԴԵՊԻ ԵՐԵՎԱՆ 16

ՀԱԿՈՔՅԱՆ ԼԻՍԱՆ (ԱԻ)

ՀԱՅԵՐԵՆՈՒՄՈՒՐՏԱԿԱՆ ԵՆԹԱՇԵՐՏԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՐՅԸ 18

<u>ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂԱՎՆԻ ԱՄԻ</u> ԼԻԲԱՆԱՆՅԱՆ «ՀԻՋԱՄԼԼԱՎՈՐ» ՈՐՊԵՍ ՏԱՐԱԾԱՐՁԱՆԱՅԻՆ ՈՒՋՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ	20
<u>ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԻԼԻԹ (ԵՊՀ)</u> «ՀԱՐՖ» ԴԱՄԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՉՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	21
<u>ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ (ԵՊՀ)</u> ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ «ԱՏՈՄԻՋԱՅԻՄ» ՈՐՊԵՍ ՈՒՋՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ	23
<u>ՀԱՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՐԿ (ԱՄ)</u> ՀԱՅԱՍՏԱԿԱՆ ԳՍՏՐ-ը ԵՎ ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿԸ	24
<u>ՂԱՋԱՐՅԱՆ ՈՌՔԵՐՏ (ՊԻ)</u> ՈՒՋՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՎԱՋՅԻԻ ԵՎ ԽԱԹԹԻԻ ՄԻՋԵՎ Զ.Ա. XIV ԴԱՐՈՒՄ	27
<u>ՂԱՐԻՔՅԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ (ԱՄ)</u> ՈՒՂՂԻՉ ԸՆՐԺՄԱՆ ՄՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԸՈՒՐՋ	30
<u>ՄԱԻՅԱՆ ԲԵՆԻԱՄԱՆ (ԱՄ)</u> ԱԲՆԱՋԻԱՅԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԱՐՅԸ ՎՐԱՑ-ԱԲՆԱՋԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (1917 Թ. ՄԻՆՉԵՎ 1921 Թ. ՓԵՏՐՎԱՐ)	33
<u>ՄԱԵԲ-ՄՈՀԱՄՄԴԻ ՄՈՀԱՍՄԱԴ (ԵՊՀ)</u> ԱՇԽԱՐՀԻ ԱՐԱՉԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՆՃԱՆԱԲԱՆԱԿԱՆ ՋՐԱԴԱՇՏԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐՆ ԸՍՏ ԵՋՆԻԿ ԿՈՂԱՔՅՈՒ	35
<u>ՄԱՌՈՅԱՆ ԱՐՄՈՆ</u> Լ.-Ֆ. ՖԵՐԻԵՐ-ՄՈՎԱԵՅԻ ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ	37
<u>ՄԱՂԱՅԱՆ ԱՐՏԱԿ (ՊԻ)</u> ԴԻՋԱԿ ԳՎԱՍՈՒ ՏՐԱԿԱԼ ՄԵԼԻԶ-ԵԳԱՆՅԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԱՃԱՌԸ	38
<u>ՄԱՌՈՒԿՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ(ԱՄ)</u> ՋՐԴԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԹՈՒՐԶ-ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՆԹԱՏԵՑՈՒՄ	39
<u>ՄԱՐԳԱՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ (ԵՊՀ)</u> ՄԵՋԱՋՅԻ ԸՆԴԻՑ ՈՒ ԷՄԻՐ ԱԼ ՀՈՒՍԵՅՆ ԻԲՆ ԱԼԻՈՒՂԵՐՉՆԵՐԸ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԴԻՐՋՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՍՄԱՄ	40
<u>ՄԱՐՏՈՅԱՆ ԳԱԳԻԿ</u> ՏԱՐՈՆԻ ԻՆԱԿԱՆՅԱ ՎԱՅՐԻ ՊԱՇՏԱՄԱՆԻ ԾԱԳՄԱՆ ԽՆԴԻՐԻ ԸՈՒՐՋ	41
<u>ՄԱՐՏՈՅԱՆ ԹԵՀՄԻՆԵ (ԱՄ)</u> ԿԱՐՄԵԼՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԹԱՓԱՆՅՈՒՄ ԻՐԱՆ	42

<u>ՄԻՆԱՍՅԱՆ ԼԵՎՈՆ (ԱԻ)</u>	
1973 թ-վազանի ԱՐԱԲ-ԻՍՐԱԷԼԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՎՆԿԱԼԻՔՆԵՐԸ	44
<u>ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՏԻԳՐԱՆ (ԵՊՀ)</u>	
ԽՈՅԱԿԵՐՊ ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐ ՍԻՍԻԱՆՅՑ	46
<u>ՄԿՐՏՉՅԱՆ ՆԱԻՐԱ (ԱԻ)</u>	
ՀԱՅԵՐԻ ԴԵՐԸ ՀՆԴԿԱՍՄԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔՈՒՄ	47
<u>ՄԿՐՏՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵԸ (ԵՊՀ)</u>	
ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵՎ ՄՈՒՍՈՒՄԱՆ ԻՇԽՈՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳԵՐԸ ՈՐՊԵՍ ՆՐԱՆՑ ՓՈՒՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓԱՍՏՁՂԹԵՐ	47
<u>ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ (ԱԻ, Կ.Գ.Ք.)</u>	
ԹՎԵՐԻ ՆՇՄԱՆ ՄԿՋՔՈՒՆՔՆԵՐԸ ՆԱԽԱՄԱՇՏՈՑՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ	49
<u>ՅԱՎՐՈՒՄՅԱՆ ՄԱՐԱՏ (ԵՊՀ)</u>	
ԼԵԶՎԱԿԱՆ ՄԱՎՎՈՐՆԵՐԻ ՎԵՐՋԱՆՀԱՍՎԱԾԱՅԻՆ ԹԵՔՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ ԳՐԱԿԱՆ ԱՐԱԲԵՐԵՆԻ ՆՅՈՒԹԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ	51
<u>ՇԱՔԱՐՅԱՆ ԱՐՏԱԿ (ԱԻ)</u>	
ԴԵՎՇԻՐՄԵԻ ԱՆՑԿԱՅՄԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ	53
<u>ՉԱՐՉՅԱՆ ԹՄԴԵՎՈՍ</u>	
ԱՍԱԳԻԵ ԹՈՒՍԻԻ «ԼՈՒՂԱԹ-Ի ՖՈՒՐՄ» ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲԱՈՒՐԱՆԸ ԵՎ ԴՐԱ ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ-ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ	54
<u>ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՀԱԿ (ԱԻ)</u>	
«ԳՈՒՄԱՆ» ԵԶՐՈՒՅԹԸ «ՄԱՍՈՒՆՅԻ ԴՎՎԻԹ» ԷՊՈՍՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՀԵՏԱԳԱ ՏԱՐԱՓՈՒՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	56
<u>ՊՈՂՈՍՅԱՆ ԱՆՂԱ (ԱԻ)</u>	
1873 թ-վազանի ԻՐԱՆԱ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ	56
<u>ՋՄՎԻԿՅԱՆ ՊԵՏՐՈՍ (ԵՊՀ)</u>	
ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՈՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	57
<u>ՄԱՐԳԱՅԱՆ ԱՐՏԱԿ</u>	
«ԽՈՒՐՈՒՇԿԻՆ» և «ՆԱԻԻ» ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ	58
<u>ՄԱՅՐԱՍՏՅԱՆ ԼԻԼԻԹ (ԵՊՀ)</u>	
ԿԻՆ ԱՐՉԱԿԱԳԻՐՆԵՐԸ ՀԵՏՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԻՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՇԱՀՐԱՈՒՇ ՓԱՐՄԻՓՈՒՐ	61
<u>ՄՄՐԱՅԱՆ ՌՈՍՏԱՆ (ԵՊՀ)</u>	
ԻՍՐԱԷԼԸ ԵՎ ՔՐԴԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ	62

ԱՏԵՓԱՆՅԱՆ, ԼՈՒՍԻՆԵ (ԱԽ)

ԻՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՅՄԱՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԵՐԱՇՈՒՔ 64

ՎԱՐՉԱՆՅԱՆ, ԳՈՀԱՐ (ԵՀԱՀ)

ԱԲԴՈՒՆ ԲԱՀԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ 66

ՏԵՐ-ՎԱՐՉԱՆՅԱՆ, ՆԵՐՍԵԱ (ԱԽ)

ԿԻՆԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ - ՀՈՌՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 14-ՐԴ ԴԱՐԻ ՄԿՁԲԻՆ,
1307 Թ. ՍՍԻ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԺՈՂՈՎԻ ՄԿՁԲՆԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ 67

ՓԱՇԱՅԱՆ, ԱՐԱՋԱ (ԱԽ, ս.գ.թ.)

ՎԱՀՀԱԲԱԿԱՆ DA'WA-Ն ԱՀԱԲԵԿԿՈՒԹՅԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ԳՈՐԾՈՆ 69

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

..... 71

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0190244

A π
89540